He will return to Paris next winter.	Գալ ձմեռ նորէն Փարիզ պիտի գայ:
I have not seen our friend since last spring.	Անցեալ գարունէն ի վեր մեր բարեկամը չտեսայ:
We have had a very fine autumn this year.	Այս տարի փառաւոր աշուն մը ունեցանք:
The museum will be open on the fifteenth of March.	Թանգարանը մարտի տասնըհինգին պիտի բացուի:
We shall come and see you in a fortnight.	Տասնըհինգ օրէն ձեզի տեսութեան պիտի գանք:
I received a letter from my cousin the day before yesterday.	Երէկ չէ մէկալ օր մօրաքեռորդիէս նամակ մը առի:
He came to see me a week ago yesterday.	Զիս տեսնելու գալուն վրայ երեկ ութը օր եղաւ:

We went to your house a week ago to-morrow.	Վաղը շաբաթ մը կըլլայ որ ձեր տունը եկեր ենք :
I shall return his visit to-morrow week.	Վաղուընէ ութը օր ետքը իրեն փոխադարձ այցելութեան պիտի երթամ :
Our annual fair will open on Thursday fortnight.	Տարեկան տօնավաճառնիս դիմացի հինգշաբթիէն տասնըհինգ օր ետքը պիտի բացուի :
I will write to you on Wednesday if I can't go and see you on Friday.	Թէոր ուրբաթ չկարենամ ձեզի գալ՝ չորեքշաբթի օրը գիր կըգրեմ ձեզի :
I shall have the pleasure of seeing you next week on Monday or Tuesday.	Գալ շաբթու երկուշաբթին կամ երեքշաբթին զձեզ տեսնելու ուրախութիւնը պիտի ունենամ :
The piano-master will come every Monday and Thursday.	Դաշնակի վարպետը ամէն երկուշաբթի ու հինգշաբթի օրերը պիտի գայ :
To-morrow is Christmas-day.	Վաղը Ծնունդ է :
I shall be obliged to give away a great many Christmas-boxes.	Հարկ պիտի ըլլայ որ շատ ընծաներ տամ:
My uncle will come and see me on new year's day.	Կաղանդին օրը մօրեղբայրս զիս տեսնելու պիտի գայ :

He will bring us some new years's gifts.	Մեզի կաղանդչէք պիտի բերէ։
We shall enjoy ourselves very much on Twelfth night.	Յայտնութեան օրը աղէկ պիտի զուարճանանք։
To-morrow we shall come and see you.	Վաղը ձեզի պիտի գանք։
We had a few days' holiday at Easter.	Զատկին քանի մը օր հանգիստ ունեցանք։
I shall go into the country at Whitsuntide.	Հոգեգալստեան գեղ պիտի երթամ։
I shall write to you the day before I leave.	Երթալուս նախընթաց իրիկունը ձեզի թուղթ պիտի գրեմ։
He came to my house the day after his arrival.	Հասնելուն երկրորդ օրը տունս եկաւ։
My guardian will arrive next week.	Խնամակալս գալ շաբաթ պիտի հասնի։
I shall hear from my father in the course of the next fortnight.	Տասնըհինգ օրուան մէջ հօրմէս լուր պիտի առնում։
In a week's time I shall have finished reading this book.	Ութը օրուան մէջ այս գիրքը կը կարդամ կը լմընցընեմ։
I saw him yesterday.	Երէկ զինքը տեսայ։
He came to see me this afternoon.	Այսօր կէսօրուընէ ետքը զիս տեսնելու եկաւ։
At Paris every body is up at midnight.	Փարիզ ամէն մարդ կէս գիշերուն դեռ ոտքի վրայ է։

I shall go and see you in the course of the forenoon.	Կեսօրուընէ առաջ ձեզի հետ տեսնուե-լու պիտի գամ:
He will bring it to me to morrow morning.	Վաղը առաւօտ ինծի պիտի բերէ:
He arrived just at one.	Ճիշդ ժամը մէկին հա-սաւ:

PRINCIPAL ARTISANS. — ԳԼԽԱՒՈՐ ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐՔ.

An apothicary	Դեղագործ, դեղավա-
A baker	Հացագործ. [ճառ.
A butcher	Մսավաճառ.
A hair dresser	Սափրիչ (պէրպէր).
A hatter	Խոյրագործ (շափգա-
A painter	Պատկերահան. [ճը.
A bookbinder	Կազմարար.
A goldsmith	Ոսկերիչ.
A silversmith	Արծաթագործ.
A joiner	Հիւսն (տիւրկէր).
A sailor	Նաւավար.
A gardener	Պարտիզպան.
A watchmaker	Ժամագործ.
A physician	Բժիշկ.
A surgeon	Վիրաբոյժ.
A dentist	Ատամնաբոյժ.
A bookseller	Գրավաճառ.
A mason, a bricklayer	Որմնադիր.
A locksmith	Դարբին.
A stationer	Թղթավաճառ.
A pastrycook	Ծաղարար (պէօրէք-
A fisherman	Ձկնորս. [ճի).

A furrier	Մուշտակագործ.
A jeweller	Ակնավաճառ (ճէվա-
A shoemaker	Կօշկակար. [հիրճի.
A tailor	Դերձակ.
A secretary	Ատենադպիր.
A cook	Խոհակեր.
A coachman	Կառավար.
A man-servant	Ծառայ.
A maid-servant, a servant-maid	Աղախին.
A musician	Երաժիշտ.
A tradesman	Վաճառական.
A soldier	Զինուոր.
A porter	Բեռնակիր.
A banker	Սեղանաւոր.
A money-changer	Լումայափոխ. [զալ).
A grocer	Մանրավաճառ (պա-
A confectioner	Շաքարավաճառ.
A mantuamaker	Կար կարող կին.
A coachmaker	Կառագործ.
A saddler	Թամբագործ.
A fruiterer	Պտղավաճառ.
A haberdasher, a mercer	Մետաքսավաճառ.

SECOND PART.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.

ELEMENTARY PHRASES. — ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԶՐՈՅՑՔ.

ON MEETING. — ՀԱՆԴԻՊՈՒՄՆ.

Good morning, Sir.	Բարի լոյս, Պարոն։
Sir, good morning to you.	Պարոն, հրամանոցդ բարի լոյս կը մաղթեմ։
I have the honour to wish you a good day.	Ձեզի բարի լոյս մաղթելու պատիւն ունիմ։
How do you do to-day?	Այսօր ինչպէս էք, աղէկ էք։
I hope you are in good health. — I hope I see you well.	Յուսամ որ առողջութիւննիդ աղէկ է։

I am very well.	Շատ աղէկ եմ :
Very well, thank God.	Փառք Աստուծոյ, շատ աղէկ եմ :
How is your father?	Պարոն հայրերնիդ ինչպէս է, աղէկ է :
He is very well.	Շատ աղէկ է :
How does all the family do?	Բոլոր ընտանիքնիդ ինչպէս է :
How do they all do at home?	Տունը ինչպէս են:
And how is your mother?	Տիկին մայրերնիդ ինչպէս է :
My mother is rather better do-day.	Մայրս այսօր քիչ մը լաւ է :
She is much better.	Շատ լաւ է :
She is pretty well.	Բաւական աղէկ է :
She is tolerably well. — She is middling.	Գոհ ըլլալու չափ աղէկ է : — Առողջութիւնը ձեռք կուտայ:
She is but indifferently well.	Սանկ նանկ է : — Դեռ բոլորովին աղէկ չէ :
She is not very well. — She is not over well. — She is rather unwell.	Շատ աղէկ չէ :
She is not well.—She is poorly. — She is rather poorly.	Աղէկ չէ :
She is indisposed.	Քիչ մը անհանգիստ է:
She is ill.	Հիւանդ է :
She is very ill.	Շատ հիւանդ է :

She is dangerously ill.	Ծանր հիւանդ է:— Հիւանդութիւնը վտանգաւոր է:
She is extremely ill.	Շատ գէշ է: — Սաստիկ հիւանդ է:
She is very ill indeed.	Շատ ծանր է:
She is very low.	Երթալու վրայ է: — Ապրելուն յոյս չկայ:
She is going. — She is dying.	Մեռնելու վրայ է: —Հոգեվարք է:
What ails her? — What is the matter with her?	Ի՞նչ ունի:— Հիւանդութիւնն ինչ է:
She has caught cold.	Պաղ առեր է:
She has a cold.	Հարբուխ եղեր է:
She has a violent cold.	Ծանր հարբուխ եղեր է:
She is feverish.	Ջերմ ունի:
I am very sorry to hear it.	Շատ կը ցաւիմ:
How long has she been ill?	Ո՞ր ատենէ ի վեր է հիւանդութիւնը:
How long has she been unwell?	Ո՞ր ատենէ ի վեր անհանգիստ է:
I did not know that she was ill.	Հիւանդ ըլլալը չէի գիտեր:
What is her complaint?	Ո՞ր տեղը կը ցաւի:
What is her illness?	Հիւանդութիւնն ինչ է:
Does she take any thing for it.	Դեղ կառնէ՞:
Does any one attend her?	Բժիշկ կուգա՞յ:

The doctor attends her every day.	Բժիշկն ամէն օր կու գայ զինքը կը նայի :
I hope it will be nothing. — It is to be hoped that it will have no bad consequence.	Յուսամ որ բան չէ :— Յուսանք որ հետեւանք մը չունենար:
We hope so.	Մենք ալ կը յուսանք:
The doctor says that it will not be of any consequence.	Բժիշկը կըսէ թէ բան մը չէ :
So much the better.	Աղէկն ալ ան է :
I am very glad of it.	Շատ ուրախ եմ :
Is your sister still unwell?	Քոյրերնիդ միշտ հիւանդ է :
Is she still indisposed?	Դեռ անհանգիստ է :
She is not quite well yet.	Դեռ բոլորովին չառողջացաւ :
But she is a great deal better.	Բայց շատ աւելի լաւ է:
I am very happy to hear it.	Մեծապէս ուրախ եմ :

ON PARTING. — ԵՐԹԱԼ.

I must go.	Պէտք է որ երթամ :
I must leave you.	Պէտք է որ ձեզմէ բաժնուիմ :
We must part. — We must leave each other.	Պէտք է որ մեկզմէկ թողունք : — Հարկ է որ իրարմէ բաժնուինք :

I must take my leave of you.	Պէտք է որ ձեր հրամանովը ելլեմ երթամ:
I am going to take my leave of you.	Ձեզմէ հրաման պիտի առնեմ երթալու:
Till I have the honour of seeing you again. — Till I have the pleasure of seeing you again.	Կը փափաքիմ որ նորէն տեսնուինք: — Ձեր նորէն գալուն կը սպասեմ:
Good bye.	Ողջ կեցէք: — Մնաս բարով:
Good morning. — Farewell. — Adieu.	Մնաք բարով: — Երթաք բարով:
Your servant.	Ծառայ եմ: — Ձեր աղախինն եմ:
Your very humble servant.	Հրամանոցդ ամենախոնարհ ծառան եմ:
Good evening. — Good night.	Բարի իրիկուն: — Գիշեր բարի: — Ձեզ լոյս բարի:
I wish you good evening.	Բարի իրիկուն կը մաղթեմ ձեզի:
I wish you good night.	Հրամանոցդ բարի գիշեր կը մաղթեմ:
My compliments to your brother.	Բարեւ ըրէք ձեր եղբօրը իմ կողմանէս:
Give my regards to your sister.	Քոյրերնուդ իմ կողմանէս շատ բարեւ ըրէք:
Present my respects to your mother.	Մեծարանաց ողջոյնս մատուցէք ձեր տիկին մօրը:

Present my duty to your aunt.	Ձեր տիկին մօրաքրոջը յարգութիւնս մատուցէք :
Give my kind regards to your lady.	Ձեր կողակցին բարեւ ընել չմոռնաք :
Remember me most kindly to your niece.	Ձեր եղբօրաղջկան շատ բարեւ ըրէք :
Present my compliments to all at home.	Տունը ամենուն շատ բարեւ :
I shall not fail.	Գլխուս վերայ:— Չեմ մոռնար :

ASKING AND THANKING.

ԽՆԴՐԵԼ ՈՒ ՇՆՈՐՀԱԿԱԼ ԸԼԼԱԼ.

By your leave.	Ձեր հրամանաւը :
Will you give me leave to...?	Հրաման կուտա՞ք ինծի որ... :
Pray.	Կաղաչեմ : — Շնորհք ըրէք :
Do me the favour to...	Շնորհք ըրէք ինծի...:
Pray, do me this favour	Կաղաչեմ որ այս շնորհքն ինծի ընէք:
Might I trouble you to...?	Թողութիւն ըրէք համարձակութեանս , կրխնդրեմ որ... :
Please to tell me. — Be so good as to tell me.	Խնդրեմ, ըսէք ինծի :
Be kind enough to...	Շնորհք ըրէք ինծի... :

Will you have the goodness to...? — Will you be so kind as to...? — Would you be kind enough to...?	Ինծի մեծ բարիք ըրած կըլլաք թէոր...: — Թէոր կուզէք ինծի բարիք մը ընել...:
I have a favour to beg of you.	Ձեզմէ շնորհք մը պիտի խնդրեմ:
I would ask a favour of you. — I have a favour to ask of you.	Ձեզի խնդիրք մը ունիմ:
I have a favour to beg of you. — May I beg a favour of you?	Ձեզմէ շնորհք մը կրնամ խնդրել:
Do me a favour.	Ինծի շնորհք մը ըրէք:
Grant me that favour.	Այս շնորհքն ըրէք ինծի:
Will you do me a favour?	Ինծի հաճոյական բան մը կուզե՞ք ընել:
Will you render me a service?	Ինծի ծառայութիւն մը կուզե՞ք ընել:
You can render me a great service.	Ինծի մեծ ծառայութիւն մը կրնաք ընել:
You might do me a very great service.	Ինծի շատ մեծ երախտիք մը կրնաք ընել:
I recommend myself to your bounty.	Ինքզինքս հրամանոցդ բարի սրտին կը յանձնեմ:
You cannot do me a greater pleasure.	Ասկէ մեծ շնորհք չէիք կրնար ինծի ընել:

I shall ever be greatly obliged to you.	Բոլոր կենացս մէջ ձեզի շնորհակալ պիտի ըլլամ :
I am much obliged to you.	Ձեզի շատ երախտագէտ եմ :
I am very much obliged to you.	Մեծապէս շնորհակալ եմ ձեզի :
I am greatly indebted to you.	Ձեզի շատ պարտական եմ :
I am extremely indebted to you.	Ձեզի երախտապարտ եմ մեծապէս :
I thank you most kindly. — I thank you most humbly.	Մեծապէս շնորհակալ եմ ձեզի : — Մեծաւ խոնարհութեամբ շնորհակալ կըլլամ ձեզի :
I thank you. — Thank you.	Շնորհակալ եմ : — Շնորհակալութիւն :
It is for nothing. — Nothing at all.	Բան չկայ : — Բան չէ :
You have nothing to thank me for.	Շնորհակալ ըլլալու բան չկայ :
It is not worth mentioning.	Ասիկայ չարժեր որ վրան խօսուի :
You will do me a great service.	Ինծի մեծ ծառայութիւն՝ շնորհք կընէք :
You jest.	Կատակ կընէք :
I give you much trouble.	Ձեզի շատ աշխատանք կուտամ :
I give you a great deal of trouble.	Այս որչափ աշխատանք է որ հրամանոցդ կուտամ :
You take a great deal of trouble.	Շատ կաշխատիք :

I am sorry to trouble you so much.	Ձեզի այսչափ նեղութիւն տալուս շատ կը ցաւիմ :
I am ashamed of the trouble I give you.	Ձեզի տուած աշխատութեանս վերայ կամըչնամ :
No trouble at all.	Աշխատութիւնը ոչինչ է :
I beg you will not mention it. — Don't mention that.	Կաղաչեմ, ասոր վերայ մի խօսիք :
You are very kind. — You are very obliging.	Շատ ազնիւ սիրտ ունիք : — Շատ ազնուասիրտ, շատ բարեսէր էք :
I know not how to acknowledge so much kindness.	Այսչափ բարեսիրութեան չեմ գիտեր ինչ փոխարէն ընեմ :

AFFIRMING AND DENYING. — ՀԱՍՏԱՏԵԼ ԵՒ ՉԷ ԸՍԵԼ.

I'll tell you what.	Ձեզի ըսեմ :
I assure you that...	Ստուգիւ կըսեմ որ... :
I promise you that...	Կը խոստանամ որ...:
I warrant it.	Ասոր երաշխաւոր կըլլամ :
That I can assure you.	Զձեզ կրնամ ապահով ընել :
This is what I can assure you.	Ձեզի այս բանս կրնամ հաստատել :
This is what I can tell you.	Ձեզի այսչափս կրնամ ըսել :

Rely upon what I tell you.	Ըստծիս հաւտացէք :
I'll swear that...	Երդում կընեմ որ... :
I say it is.—I say yes.	Ես կըսեմ որ այնպէս է :
I say it is not. — I say not.	Ես կըսեմ որ այնպէս չէ :
I maintain that....	Ես կը պնդեմ որ... :
I wager it is.	Գրաւ կը դնեմ որ այնպէս է :
I wager it is not.	Գրաւ կը դնեմ որ այնպէս չէ :
I suppose so.	Անանկ կը համարիմ : — Կարծեմ թէ անանկ է :
I suppose not.	Կարծեմ թէ այնպէս չէ :
I don't suppose it is so.	Չեմ կարծեր :
I fancy so.	Կերեւակայեմ թէ այնպէս է :
I fancy not.	Կերեւակայեմ թէ այնպէս չէ :
You may suppose that...	Կրնաք մտածել թէ... :
You may easily conceive that...	Դուք ալ գիտէք որ...
Do you think so?	Կարծէ՞ք :
I think so.	Կարծեմ :
I think so too.	Ես ալ այնպէս կը կարծեմ :
I do not think so.	Չեմ կարծեր :
You must know...	Պէտք է գիտնաք որ....
I must tell you...	Պէտք է ձեզի ըսել որ.. :
I have a notion that...	Ինծի կերեւի որ... :

I am inclined to think.	Ինծի այնպէս կուգայ որ...:
I dare say it is so.	Կարծեմ որ այնպէս է:
What do you mean?	Ի՞նչ կուզէք ըսել:
I don't know what you mean.	Չեմ գիտեր ինչ կուզէք ըսել:
Is it certain that...?	Ստո՞յգ է որ...:
Is it true that...?	Ճշմարի՞տ է թէ...: — Իրա՞ւ է որ...:
Yes, it is true.— It is certain.	Հրամեր էք, ճշմարիտ է: — Այս ստոյգ է:
It is but too true.	Ամենաճշմարիտ է:
It is a fact.	Այս եղած բան է, իրական բան է:
It is a certain fact.	Այս ստոյգ եղած բան է:
Are you sure of what you say?	Ըսածներնուդ վերայ ապահո՞վ էք:
Would you believe that..?	Կարծէի՞ք որ...:
I could believe it.	Կրնայի կարծել:
Do you believe it?	Կը հաւտա՞ք, կարծէ՞ք:
I believe it.	Կը հաւտամ, կարծեմ:
I believe so too.	Ես ալ կը հաւտամ, կը կարծեմ:
That I believe.	Կը հաւտամ, տարակոյս չունիմ:
I believe nothing of it.	Ամենեւին չեմ հաւտար, չեմ կարծեր:
I don't believe a word of it.	Այդ խօսքերէն եւ ոչ մէկուն կը հաւտամ:
I think so.	Կարծեմ թէ այնպէս է:
I think not.	Կարծեմ թէ այնպէս չէ: — Չեմ կարծեր:

I make no doubt of it.	Ասոր ամենեւին չեմ տարակուսիր :
Are you quite sure of it?	Վստահ էք :
I am sure of it.	Վստահ եմ :
I am certain of it.	Ապահով եմ :
Nothing more certain.	Ասկէց ստոյգ բան չկայ :
Nothing is more certain.	Ասոր պէս ստոյգ բան չկայ :
I answer for it. — I will warrant it.	Խօսքս խօսք է :
I do not believe it.	Չեմ հաւտար : — Չեմ կարծեր :
I hardly believe it.	Հաւատալս չիգար :
I believe you.	Կը հաւտամ ձեզի :
You may believe me.	Կրնաք հաւտալ ինծի :
It is very doubtful.	Շատ տարակուսա— կան է :
It cannot be true.	Ասիկայ չկրնար ճշմա- րիտ ըլլալ :
It is no such thing.	Ամենեւին այնպէս չէ :
You are mistaken.	Կը սխալիք :
Ii is a story.	Առասպել մի է :
It is an invention.	Շինծու պատմութիւն մի է :
I give you my word that.	Ձեզի խօսք կուտամ որ...
I protest that...	Կը բողոքեմ որ... :
Upon my honour.	Պատուոյս վերայ :
Upon my word of honour.	Իմ պատուոյս վերայ խօսք կուտամ :
The word of an honest man.	Իբրեւ պատուաւոր մարդ կըսեմ :

EXPRESSIONS OF SURPRISE. — ԶԱՐՄԱՆՔ.

What!	Ի՞նչ :
Good! — Well. — Very well.	Շատ աղէկ :
You don't say so! — Indeed!	Իրա՛ւ կըսէք : — Իրա՛ւ — Իրաւցընէ՛ :
Is it! — Is it so!	Ի՛նչ կըսես : — Անանկ է :
No!	Չէ՛ :
Is it possible!	Կրնա՞յ ըլլալ : — Կարելի՞ է : — Կարելի բա՞ն է :
Is it really possible!	Իրաւցընէ կարելի բա՞ն է :
Who would have believed it?	Ո՞վ կարծէր, կը հաւատար : — Որո՞ւն մտքէն կանցնէր :
I should never have suspected it.	Ամենեւին մտքէս չէր անցներ :
How can that be? — How is that possible?	Այս ինչպէս կրնայ ըլլալ :
That is impossible.	Անկարելի է :
Impossible!	Անկարելի՜ բան :
It is impossible for me.	Այդ բանը չեմ կրնար ընել :
It is not possible.	Կարելի՛ չէ :
That cannot be.	Այդ բանը չկրնար ըլլալ :
I cannot think how…	Չեմ հասկընար ինչպէս… :

I don't know how...	Չեմ գիտեր ինչպէս...:
I am surprised at it.	Ասոր վերայ շատ կը զարմանամ :
I am quite astonished at it.	Ասոր շատ կը զարմանամ :
That surprises me.	Այս զիս շատ կը զարմացընէ :
You surprise me.	Զիս կապշեցընէք :
You astonish me.	Զիս կը հիացընէք :
I should not have thought it.	Եւ ոչ մտքէս կանցնէր:
That quite astonishes me.	Այս բանիս վերայ շատ կը զարմանամ :
I wonder at it.	Կը զարմանամ ասոր:
This is quite astonishing.	Այս հիանալի բան է :
It is astonishing.	Զարմանալի՜ բան :
It is inconceivable. — It is a thing not to be conceived.	Այս բանիս խելք չհասնիր :
It is incredible.	Անհաւատալի բան է :
It is unheard of. — It is a thing unheard of.	Չլսուած բան :
That is very strange!	Այս կարգէ դուրս բան է:
This is some thing strange!	Ի՜նչ նորօրինակ բան :
That is a strange sort of business!	Նո՛ր տեսակ բան :
Who would have conjectured such a thing.	Որո՞ւն մտքէն կանցնէր :

The more I think of it, the more astonished I am.	Որչափ մտածեմ, այնչափ աւելի կը զարմանամ :

PROBABILITY. — ՀԱՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

It is probable.	Հաւանական է :
It is likely.	Ճշմարտանման է :
It is likely enough.	Բաւական ճշմարիտ կերեւայ :
It is not improbable.— It is not unlikely.	Անհաւանական բան չէ :
It is not at all unlikely.	Ամենեւին անհաւանական բան չէ :
It is very probable.	Շատ հաւանական է :
It is more than probable.	Այս հաւանականէն ալ աւելի է :
Nothing is more probable.	Ասկէց աւելի հաւանական բան չկայ :
There is nothing impossible in it.	Անկարելի բան չէ :
It is not impossible.	Այս անկարելի չէ :
I see nothing impossible in it.	Ասոր մէջ անկարելի բան չեմ տեսներ :
It is very possible.	Այս շատ կարելի է :
It may be so. It might be so.	Կրնայ ըլլալ : — Կրնար ըլլալ :
I am not astonished at it. — I am not surprised at it.	Ասոր վերայ չեմ զարմանար :

That does not astonish me. — That does not surprise me.	Այս զիս չզարմացըներ:
It is not astonishing. — It is not surprising.	Այս զարմանալի բան չէ:
There is nothing surprising in it.	Զարմանալու բան մը չկայ:
It was to be expected.	Ասիկայ կը յուսացուէր: — Յայտնի բան էր:
You do not astonish me. — You do not surprise me.	Զիս չես զարմացըներ: — Ըսածդ ինծի զարմանք մը չբերեր:
I do not wonder at it.	Ատոր չեմ զարմանար:
I should not have wondered at it.	Ատոր չէի զարմանար:
It would not surprise me.	Այս զիս չէր զարմացըներ:
It is natural.	Բնական է:
Of course.	Բնականապէս:—Հարկաւ:
No wonder. — That is understood.	Այս պարզ բան է: — Յայտնի բան է:
It is of course. — It is a matter of course.	Այս ինքնիրմէ կիմացուի:
Undoubtedly.	Անտարակոյս: — Տարակոյս չկայ:
It is evident.	Յայտնի է:

SORROW. — ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ.

I am sorry for it.	Կը ցաւիմ:
I am very sorry for it.	Շատ կը ցաւիմ:
I am quite vexed at it.	Ասոր շատ վշտացած եմ:
I am extremely sorry for it.	Վերջի աստիճանի տխուր եմ:
I feel extremely mortified at it.	Ինծի մեծ մահացուցմունք եղած է:
I am quite inconsolable at it.	Ասոր այնպէս վշտացած եմ որ չեմ կրնար մխիթարուիլ:
It makes me quite unhappy.	Այս զիս կը յուսահատցրնէ:
I am quite vexed about it. — It vexes me beyond expression.	Սրտիս մեծ ցաւ եղաւ: — Չեմ կրնար ըսել ինչ աստիճան կը վշտացրնէ զիս այս:
What a pity!	Ափսո՜ս, մեղք
It is a great pity! — It is a very great pity!	Շա՜տ ափսոս:
It is a sad thing.	Շատ ցաւալի բան է:
It is a melancholy case.	Շատ տխուր բան է:
It is quite vexing.	Շատ նեղանալու բան է: — Դժնդակ բան է:
That is very disagreeable.	Շատ անախորժ բան է:
It is very hard.	Դիմանալու բան չէ:

It is a cruel case.	Անգութ բան է: — Մեծ անգթութիւն է:
It is shocking.	Սարսափելի բան է:
That is very unlucky. — That is very unfortunate.	Շատ դժբաղդ բան է:
It is a great misfortune.	Մեծ դժբաղդութիւն է:
It is terrible.	Սոսկալի բան է:
It is dreadful.	Սարսափելի բան է:
It makes one's hair stand on end.	Ասիկայ մարդուս մազերը փուշ փուշ կընէ: — Ասիկայ զմարդ կը սոսկացընէ:
What a misfortune!	Ի՜նչ դժբաղդութիւն:
How unhappy I am!	Ի՜նչ դժբաղդ մարդ եմ: — Վա՜յ գլխուս, վա՜յ ինձ:
How shocking!	Ի՜նչ սոսկալի բան:

BLAME. — ՑԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ

Fie! — For shame!	Գնա՛: — Գնա՛ բանդ: — Ամօթ: — Ի՜նչ ամօթ:
Fie, how ugly it is!	Ո՛հ, ի՜նչ գէշ բան է:
Are you not ashamed? — Are you not ashamed of yourself?	Ամօթ չունի՞ս: — Չե՞ս ամըչնար:
You ought to be ashamed.	Պէտք էր ամըչնայիր:
I am ashamed of you.	Զիս կամըչցընես:

What a shame!	Ի՜նչ ամօթ: — Ի՜նչ խայտառակութիւն:
It is a shame. — It is shameful.	Ամբչնալի՛ւ բան:
It is a shameful thing.	Ամօթալի բան է:
It is very bad. — It is too bad.	Շատ գէշ բան է:
How naughty it is!	Ի՜նչ անարգ բան է:
That is very wicked.	Մեծ չարութիւն է:
It is abominable.	Գարշելի՛ բան:
How can you be so naughty?	Զէի կարծեր որ այսչափ չար ըլլաս:
How could you do so?	Ի՞նչպէս կրցար ընել այս բանս:
How came you to do so?	Ի՞նչպէս ըրիր այդ բանդ:
You are very bad.	Շատ չար ես:
What did you do so for?	Ինչո՞ւ ըրիր:
It is very bad of you. —It is very wrong of you. — That is very bad of you.	Շատ գէշ ըրիր: — Ափսոս քեզի չէր վայլեր:
That is very bad.	Զարութիւն է այս:
One must be very naughty.	Այս բանս ընելու համար շատ չար ըլլալու է:
You are very much to blame.	Մեղադրութեան արժանի էք:
You are very wrong.	Ամենեւին իրաւունք չունիք:
You are wrong.	Իրաւունք չունիք: — Ցանցանքը ձերն է:

How dare you do so?	Ի՞նչպէս կը համարձակիս այս բանս ընելու:
I have no patience with you.	Համբերութիւնս . կը հատցընես:
My patience is tired out.	Համբերութիւնս կը հատնի:
I am not satisfied with you. — I am not pleased with you.	Վրադ գոհ չեմ:
I am quite dissatisfied with you.	Վրադ շատ տժգոհ եմ:
I shall be dissatisfied.	Գոհ պիտի չըլլամ:
I shall be very angry.	Շատ տժգոհ պիտի ըլլամ:
Be quiet.	Հանդարտ կեցիր:
Have done.	Վերջացուր, դադրեցուր:
Have done, I say.	Հերիք է կըսեմ քեզի:
Can't you be still!	Չե՞ս կրնար հանդարտ կենալ, տեղդ հանդարտ կենալ:
Can't you be quiet?	Հանգիստ չե՞ս կրնար կենալ:
I tell you beforehand that...	Հիմակուընէ կըսեմ ձեզի որ...:
I tell you that... — Mind what I say.	Ձեզի կիմացընեմ որ...
I won't have that.	Այս չեմ ուզեր: — Ասանկ բան չեմ ուզեր:

I won't suffer that.	Ասոր չեմ կրնար համբերել : — Ասոր չեմ կրնար աչք գոցել :
I will have it.	Կուզեմ : — Այսպէս կուզեմ :
I insist upon it.	Ճար չկայ, կուզեմ :— Ճար չկայ, այսպէս կուզեմ :
Mind for another time.	Զգուշ թէ ուրիշ անգամ ալ ընես :
I am in earnest.	Իրաւցընէ կըսեմ : — Առանց կատակի կըսեմ :
I don't gest.	Կատակ չեմ ըներ :
Don't do so any more.	Մէյ մըն ալ մ'ըներ :
Don't be impertinent.	Աներեսութիւն մ'ըներ
Silence.	Լռութիւն :
Hold your peace. — Hold your tongue.	Լռէ. ձայնդ քաշէ :
Will you hold your tongue ?	Ձայնդ կը քաշե՞ս : — Լեզուդ կը բռնե՞ս :
No answers.	Ամենեւին պատասխան չեմ ուզեր :
I'll make you hold your tongue.	Ես քու բերանդ կը գոցեմ :
Do not reply.	Դէմ մի խօսիր :
Get out of my sight.	Աչքիս առջեւէն գնա: — Աչքիս մ'երեւնար :

ANGER. — ԲԱՐԿՈՒԹԻՒՆ.

I am very angry.	Շատ բարկացած եմ :

I am not in good humour. — I am out of humour.	Սիրտս նեղացած է։ — Սրդողած եմ։
I am in a dreadful humour. — I am very cross.	Շատ գայրացած եմ։ —Մեծ տհաճութիւն ունիմ։
I am hurt.	Առնուած եմ։
I am quite hurt.	Շատ առնուած եմ։
I am stung to the quick.	Սիրտս վիրաւորուած է։
I am quite wounded. — I am quite provoked.—I am quite exasperated.	Սաստիկ վիրաւորուած եմ։ — Շատ գայրացած եմ։ — Շատ կատղած եմ։
I am unhinged.	Խելքս գլխես գացած է։ —Կրակ կտրած եմ։
You see me quite in a passion.	Կը տեսնես որ սաստիկ կիրք ելած եմ։
I am in a terrible passion.	Բարկութիւնս սաստիկ շարժած է։
It makes me quite mad.	Զիս շատ կատղեցուց։
I cannot contain myself for anger.	Բարկութենէս ինքզինքս կորսնցուցած եմ։

JOY. — ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ.

I am glad. —I am very glad.	Ուրախ եմ։ — Շատ ուրախ եմ։

I am very happy. — I am delighted. — I am in raptures.	Շատ ուրախ եմ: — Շատ ուրախացայ:
I am extremely happy.	Մեծապէս ուրախ եմ:
I am very glad of it. — I am extremely glad of it.	Շատ ուրախ եմ ատոր:
It gives me great joy.	Այս բանս զիս շատ ուրախացուց:
It gives me a great deal of joy.	Ասոր վերայ շատ կուրախանամ:
It gives me the greatest pleasure.	Այս ինծի շատ մեծ ուրախութիւն է:
How happy I am!	Ո՛րչափ երջանիկ եմ: — Ի՜նչ բարեբախտութիւն:
I am overjoyed at it.	Վերջի աստիճանի ուրախութեան մէջ եմ:
I am happy beyond expression.	Ասկէց աւելի երջանկութիւն չկրնար ըլլալ ինծի:
What joy!	Ի՜նչ ուրախութիւն:
What pleasure!	Ի՜նչ զուարճութիւն:
What a happiness!	Ի՜նչ երջանկութիւն: — Այս ի՜նչ երջանկութիւն է:
Every thing happens as I wish.	Ամէն բան ուզածիս պէս կըլլայ:
How pleased I am!	Ո՛րչափ գոհ եմ, ուրախ եմ:
Excellent!	Սքանչելի՜: — Շա՜տ աղէկ:
I give you joy. — I wish you joy.	Ուրախակից եմ ձեզի:

I give you joy with all my heart.	Բոլոր սրտանց ուրախակից կըլլամ ձեզի
I sincerely give you joy.	Անկեղծ սրտով հրամանոցդ խնդակից կըլլամ :
I congratulate you.	Ձեզի ուրախակից կըլլամ :
I congratulate you on it.	Հրամանոցդ իմ բարեմաղթութիւնս կընեմ :
Will you give me leave to congratulate you?	Իմ ուրախակցութիւնս, բարեմաղթութիւնս ընդունեցէք :

CONSULTING. — ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.

What is to be done!	Ի՞նչ ընելու է :
What course is to be taken?	Ի՞նչ ճամբայ բռնելու է :
What course shall we take?—What course are we to take.	Ի՞նչ ճամբայ պէտք բռնենք:—Ի՞նչ ճամբայ պիտի ընենք : — Ընելու ինչ ճար ունինք :
What shall we do?	Ի՞նչ պիտի ընենք :
What have we to do?	Ընելու ինչ ունինք
What are we to do?	Ի՞նչ պիտի ընենք :
What remains for us to do now?	Մեզի ինչ կը մնայ ընելու : — Ուրիշ ինչ կրնանք ընել :

We must resolve upon something.	Պէտք է որ բան մը որոշենք:
We must take some course.	Բան մը որոշելու ենք:
I am quite puzzled.	Շատ շփոթած եմ: — Տարակուսեալ կեցեր եմ:
I don't know what to do. I am at a loss what to do.	Չեմ գիտեր ինչ ընեմ:
I am quite at a loss. — I am in great embarrassment.	Մեծ շփոթութեան մէջ եմ: — Տարակոյսն առած է զիս:
We are in a great perplexity.	Այս ինչ փորձանք էր որ գլուխնիս եկաւ:
We are in a very perplexing case.	Շատ դժուար վիճակի մը մէջ ենք:
This is very embarrassing.	Ասիկայ շատ դժուար բան է:
I am of opinion...	Ես կարծեմ որ...: — Իմ կարծիքս այս է որ...:
Don't you think... ?	Չէ՞ք կարծեր...:
If I were you. — If I were in your place.	Թէոր ես ձեր տեղն ըլլայի:
I advise you...	Ձեզի խորհուրդ կու տամ որ...:
I should advise you...	Ձեզի խորհուրդ կու տայի որ...:
I am of opinion that...	Իմ կարծիքս այն է որ...:
If you take my advice.	Թէ որ ինծի կը հաւատաք:

I am thinking of one thing.	Բան մը կը մտածեմ։
An idea strikes me. — A thought strikes me.	Միտքս բան մը եկաւ։
I have been thinking of one thing.	Բան մը մտածեցի։
A thought has struck me. — An idea has struck me.	Խորհուրդ մը եկաւ միտքս։
Let me alone for that. — Leave that to me.	Ինծի թող։ — Ինծի թողուցէք։
Let us do a thing.	Եկէք բան մը ընենք։
I have altered my opinion.	Կարծիքս փոխեցի։
I have altered my mind.	Միտքս դարձաւ։
Let us do otherwise.	Ուրիշ բան մը ընենք։
Let us do something else.	Ուրիշ բան ընենք։
Let us go another way to work.	Ուրիշ ճամբայ բռնենք։ — Ուրիշ կերպով ընենք։
What do you say to that?	Ասոր ինչ կըսէք։
What do you say about it?	Դուք ինչ կըսէք։
What do you think of it?	Ի՞նչ կը մտածէք։ — Դուք ինչ կարծէք։
I think as you do.	Ես ալ ձեզի պէս կը մտածեմ։
It is very well thought.	Շատ լաւ մտածուած է։

It is very well imagined.	Շատ աղէկ գտեր էք ։
That is a good thought.	Այս շատ աղէկ խորհուրդ է ։
That is a very good idea.	Այս մտածմունքն սքանչելի է ։
I am of your opinion.	Ես ալ ձեր կարծիքէն եմ ։
Let us do that.	Անիկայ ընենք ։
Let us do so.	Այսպէս ընենք ։
It is the best way.	Լաւ ճամբան այս է ։ — Ասկէց ուրիշ ճար չկայ ։
I'd rather...	Ես աւելի կընտրէի... ։ Ես աւելի կուզէի ։
It is better...	Աւելի լաւ է... ։ — Լաւագոյն է... ։
Would it not be better... ?	Լաւ չէ՞ր ըլլար... ։
It is the best thing we can do.	Ամենէն լաւ ընելու բաներնիս այս է ։
It is the only thing we have to do.	Միայն այս մնաց մեզի ընելու ։
That is the only course we can take.	Այս ճամբան միայն կրնանք բռնել ։ — Ասկէց զատ ուրիշ ճար չունինք ։
It is the best way.	Ամենէն լաւ ճամբան այս է ։

EATING AND DRINKING.	ՈՒՏԵԼ ԵՒ ԽՄԵԼ.
Are you hungry?	Անօթի՞ էք: — Փորերնիդ անօթի՞ է:
I am getting an appetite. — I begin to feel hungry.	Ախորժակս կուգայ: — Սկսայ անօթութիւն զգալ:
I have a good appetite.	Աղէկ ախորժակ ունիմ:
I am hungry.	Անօթի եմ: — Փորս անօթի է:
I am very hungry.	Շատ անօթի եմ:
I could eat a bit of something.	Կտոր մը բան կուզէի ուտել:
Eat something.	Բան մը կերէք:
What will you eat?	Ի՞նչ պիտի ուտէք:
What should you like to eat?	Ի՞նչ կուզէք ուտել:
What do you wish to eat?	Ի՞նչ կը փափաքիք ուտել:
I will eat any thing.	Ի՛նչ որ գտնամ նէ կուտեմ:
You don't eat.	Չէք ուտեր:
Eat a little more.	Քիչ մըն ալ կերէք:
You don't eat any thing?	Բան չէք ուտեր:
I beg your pardon. I eat very well.	Թողութիւն ըրէք, շատ աղէկ կուտեմ:
I have done very well. — I have eaten heartily.	Շատ աղէկ կերայ:
I have dined with a good appetite.	Աղէկ ախորժակով ճաշեցի:

Eat another pièce.	Կտոր մըն ալ կերէք :
I cannot take any thing more.	Ալ ուրիշ բան չեմ կրնար ուտել :
Are you thirsty.	Ծարուա՞ծ էք, ծարաւի՞ էք :
Are you not thirsty ?	Ծարաւ չունի՞ք :
I am thirsty.	Ծարաւի եմ, ծարուած եմ :
I am very thirsty.	Շատ ծարաւի եմ, շատ ծարուած եմ :
I am very dry.	Սաստիկ ծարուած եմ, կը պապակիմ :
I am dying with thirst.	Ծարաւէս կը մարիմ :
Let us drink.	Խմենք :
What will you drink ?	Ի՞նչ կուզէք խմել :
Give me something to drink.	Խմելու բան մը տուէք ինծի :
Take a glass of wine.	Գաւաթ մը գինի խըմեցէք :
Will you take a glass of wine.	Կուզէ՞ք գաւաթ մը գինի խմել :
I could drink a glass of champagne.	Գաւաթ մը շամփանիա սիրով կը խմէի:
Take a glass of beer.	Գաւաթ մը գարեջուր խմեցէք :
Drink another glass of wine.	Գաւաթ մը գինի ալ խմեցէք :
Your very good health.	Ձեր կենդանութեանը:
I drink your good health.	Ձեր կենդանութեանը կը խմեմ :

NEWS.	ՆՈՐԱԼՈՒՐՔ.
Is there any news to-day?	Այսօր լուր մը կա՞յ :
Is there any thing new?	Նոր բան մը կա՞յ :
Do you know any thing new?	Նոր բան մը գիտե՞ք :
Do you know any news?	Լուր մը կա՞յ :
What is the best news — What news is there?	Ի՞նչ նոր բան կայ :
What news can you tell us?	Ի՞նչ նոր բան ունիք մեզի պատմելու :
Have you any thing to tell us?	Մեզի պատմելու նոր բան մը ունի՞ք :
Have you not heard of any thing?	Բան մը չլսեցի՞ք :
What is the talk about town?	Քաղաքն ի՞նչ կը խօսուի :
What is the news in your quarter?	Ձեր կողմերն ի՞նչ կը զրուցուի :
I know nothing new.	Նոր բան մը չեմ գիտեր :
There is nothing new.	Նոր բան մը չկայ :
There is no news.	Ամենեւին լուր մը չկայ :
I know no news.	Ամենեւին լուր մը չեմ գիտեր :
I have not heard of any thing.	Խօսք մը չլսեցի :
There is no talk about any thing.	Ամենեւին բանի մը վերայ չխօսուիր :
There is good news.	Աղէկ լուրեր կան :

The news is good.	Լրերն աղէկ են :
There is bad news.	Գէշ լրեր կան :
The news are very bad.	Լրերը շատ գէշ են :
This is very good news.	Ահաւասիկ աղէկ լուր մը : — Աւետիս, քեզի :
This is very bad news.	Ահա տրտմական լուր մը :
I have heard that...	Լսեցի որ... :—Կըսէին, կը զրուցէին որ... :
I have not heard that spoken of.	Այս բանիս վերայ խօսք մը չլսեցի :
Did you read the papers?	Օրագիրները կարդացի՞ք :
What do the papers say?	Լրագիրք ի՞նչ կըսեն :
I have read no paper to-day.	Այսօր ամենեւին լրագիր չկարդացի :
Did you see that in any news-paper?	Այս բանս օրագրի մը մէջ տեսա՞ք :
It is only mentioned in a private letter.	Ասիկայ միայն առանձնական նամակի մը մէջ յիշատակուած է :
Do they say who received that letter?	Կըսե՞ն թէ որու՞ն եկած է այս թուղթը :
Yes; they name the person. It is Mr. A***.	Այո, անունն ալ կուտան, որ է Պ. Ա*** :
They doubt this news very much.	Այս լրին վերայ շատ կը տարակուսին :
This news wants confirmation.	Այս լուրը ստուգութեան կարօտ է :

Whence have you had this news?	Այս լուրն ուսկէց առած էք: — Այս լուրն ո՞վ տուաւ ձեզի:
How do you know that?	Ասիկայ ի՞նչպէս իմացաք:
I have had that news from good autority.	Այս լուրն աղէկ տեղէ մը լսած եմ:
I have had that news from good hands.— I have had it from the first hand.	Ասիկայ բուն աղբիւրէն լսեցի:
I give you my author.	Պատմողը ձեզի կըսեմ:
That news has not been confirmed.	Այս լուրը չստուգուեցաւ:
That report has proved false.	Այս ձայնը սուտ ելաւ:
This news is no longer talked of.	Ա՛լ այս լրին վերայ ամենեւին չխօսուիր:
Do they still talk of war?	Դեռ պատերազմի վերայ կը խօսուի՞:
Do they think we shall have peace?	Խաղաղութեան յոյս կա՞յ:
It is not likely.	Հաւանական չէ:
Nobody knows who will have the upper hand in this war.	Զգիտցուիր թէ ո՛վ յաղթող պիտի ըլլէ այս պատերազմիս մէջ:
All the east shall be distracted.	Բոլոր արեւելք տակնուվերայ պիտի ըլլայ:

The scene of war is very wide.	Պատերազմին ասպարէզը շատ ընդարձակ է :
They have lost the battle.	Պատերազմը կորսնցուցին :
The French have won a brillant victory.	Գաղղիացիք փառաւոր յաղթութիւն մը ըրին :
Have you heard from your brother?	Ձեր եղբօրմէն լուր առի՞ք :
Did you hear lately from your friend?	Շատ ատե՞ն է որ ձեր բարեկամէն լուր մը չառիք :
How long is it since he wrote to you?	Ո՞րչափ ատենէ ի վեր ձեզի գիր չէ գրած :
I have not heard from him these two months.	Երկու ամիս է որ իրմէ լուր չեմ առած :
He has not written for three weeks. — He has not written these three weeks.	Երեք շաբաթէ ի վեր թուղթ չէ գրած : — —Երեք շաբաթ կայ որ գիր գրած չէ :
I expect a letter from him every day.	Օրէ օր իրմէ թղթի կը սպասեմ :

GOING AND COMING — ԵՐԹԱԼ ՈՒ ԳԱԼ.

Where are you going?	Ո՞ւր կերթաք :
Which way are you going?	Անկէց ո՞ւր կերթաք : — Դէպ'ի ո՞ւր կերթաք :
I am going home.	Տուն կերթամ :

I was going to your house.	Ձեզի կուգայի, ձեր տունը կերթայի։
Whence do you come?	Ուստի՞ կուգաք։
I come from my brother's.	Եղբօրս քովէն կուգամ։ — Եղբօրս տնէն կուգամ։
I come from church.	Եկեղեցիէն կուգամ։
I have just left the school.	Դպրոցէն կը դառնամ։
Will you come with me?	Հետս կուգա՞ք։
Whither do you wish to go? — Where do you wish to go.	Ո՞ւր կուզէք երթալ։
We will go for a walk.	Երթանք քալենք։
We will go and take a walk.	Երթանք պտոյտ մը ընենք։
With all my heart. — Willingly.	Շատ աղէկ, սիրով կուգամ։ — Ամենայն սիրով։
Which way shall we go?	Ուսկի՞ց պիտի երթանք։ — Ո՞ր կողմէն երթանք։
We will go which way you please.	Ո՛ր կողմէն որ կուզէք՝ երթանք։ — Ուսկից որ ուզէք։
Let us go to the park.	Հասարակաց պարտէզն երթանք։
Let us take your brother in our way.	Անցնելու առեննիս եղբայրնիդ մեկտեղ առնունք։
As you please.	Ինչպէս որ կուզէք։ — Ինչպէս որ կը հաճիք։

Is Mr. B*** at home?	Պ. Պ*** տո՞ւնն է։
He is just gone out.	Հիմա դուրս ելաւ։
He is gone out.	Դուրս ելած է։
He is not at home.	Տունը չէ։
Can you tell us where he is gone?	Կրնա՞ք մեզի ըսել թէ ուր գնաց։
I cannot tell you exactly.	Չեմ կրնար ձեզի ճիշդ ըսել։
I think he is gone to see his sister.	Կարծեմ իր քոյրը տեսնելու գնաց։
Do you know when he will return?	Գիտէ՞ք թէ երբ պիտի գայ։
No : he said nothing when he went out.	Չէ. երթալու ատեն բան մը չըսաւ։
In that case, we must go without him.	Անանկ է նէ, առանց իրեն կերթանք։

ASKING QUESTIONS AND ANSWERING. — ՀԱՐՑՈՒՄՆ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԻ.

Here, I have something to tell you.	Մօտ եկէք, բան մը ունիմ ձեզի ըսելու։
I have a word to tell you.	Խօսք մը ունիմ ձեզի։
Listen. — Hark.	Մտիկ ըրէք։
Hear me.	Մտիկ ըրէք ինծի։
I wish to speak with you.	Հրամանոցդ հետ խօսիլ կուզեմ։
What is it? — What is your pleasure?	Ի՞նչ կը հրամայէք։ — Ի՞նչ կը հաճիք։

I speak to you.	Խօսքս ձեզի հետ է։
I don't speak to you. — I am not speaking to you.	Խօսքս ձեզի չէ։ — Ձեզի հետ չեմ խօսիր։
What do you say? — What is it you say?	Ի՞նչ կըսէք։ — Ըսածնիդ ինչ է։
What did you say?	Ի՞նչ ըսիք։
I say nothing.	Բան չեմ ըսեր։
I said nothing.	Բան չըսի։
I don't speak.	Չեմ խօսիր։
Do you hear?	Կը լսէ՞ք։ — Կը հասկընա՞ք։
Do you hear me?	Ըսածս կը լսէ՞ք։ — Միտքս կը հասկընա՞ք
Do you hear what I say? — Do you understand me.	Ըսածս կիմանա՞ք, կը հասկընա՞ք։
I did not hear you. — I did not understand you.	Ըսածնիդ չլսեցի, չըհասկըցայ։
Listen to me.	Մտիկ ըրէք։
You do not listen to me.	Ինծի մտիկ չէք ըներ։
Do you hear me now?	Հիմա ըսածս կը լսէ՞ք, կը հասկընա՞ք։
I hear you very well.	Ըսածնիդ շատ աղէկ կը լսեմ, կը հասկընամ։
Do you understand what I say?	Ըսածս կը հասկընա՞ք։
Will you be so kind as to repeat...?	Ըսածս կուզէ՞ք կրկնել։
Will you have the goodness to repeat...	Շնորհք ըրէք՝ մէյ մըն ալ զրուցեցէք։

I understand you well.	Ըսածնիդ աղէկ կը հասկընամ :
Why don't you answer me.	Ինչո՞ւ ինծի պատասխան չէք տար :
Why don't you answer?	Ինչո՞ւ չէք պատասխաներ :
Don't you speak english?	Անգղիարէն չէ՞ք խօսիր :
Very little.	Խիստ քիչ :
I understand it a little, but I cannot speak it.	Քիչ մը կը հասկընամ, բայց չեմ կրնար խօսիլ :
Speak louder.	Քիչ մը բարձր խօսեցէք :
Do not speak so loud.	Այնչափ բարձր մի խօսիք :
Don't make so much noise.	Այնչափ աղաղակ մի հանէք :
Hold your tongue.	Լեզուդ քաշէ :— Լռեցէք :
Did you not tell me that...?	Ինծի չըսի՞ք որ...
Who told you so?	Ասիկայ ձեզի ո՞վ ըսաւ :
I have been told so.	Ինծի այսպէս ըսին :
Somebody told me so.	Ինծի մէկն ըսաւ :
I heard it.	Ուրիշէն լսեցի :
What do you mean?	Ի՞նչ ըսել կուզէք :
What do you mean by that?	Ասով ի՞նչ ըսել կուզէք :
What is the meaning of that?	Ասիկայ ի՞նչ կը նշանակէ : — Ատ ի՞նչ ըսել է :
What is that good for? — What is the use of it?	Այս ի՞նչ բանի կուգայ : —Ասոր օգուտն ի՞նչ է :

What is that?	Այս ինչ է: — Այս ինչ բան է:
What do you call that?	Ասոր ինչ անուն կուտաք:
What's the name of that?	Ասոր անունն ինչ է:
It is called...	Ասոր անունն է...:
That is called...	Ասիկայ կըսուի...:
This is what is called...	Ըսածնին այս է:
May I ask you?	Կրնամ ձեզի հարցընել:
Shall I make bold to ask you?	Թէ որ համարձակութիւն տաք, բան մը հարցընեմ:
May one ask you?	Կրնամ ձեզի բան մը հարցընել:
May I trouble you to...?	Կրնամ հրամանոցդ աղաչանք մը ընել:
What do you wish to have?	Ի՞նչ կը փափաքիք: — Ի՞նչ կը բաղձաք:
Do you know Mr. G***?	Պ. Գ***. կը ճանաչէ՞ք:
I know him by sight.	Զինքը տեսած եմ միայն:
I know him by name.	Անունը լսած եմ:
Do you know that...?	Գիտէ՞ք որ...:
I did not know.	Չէի գիտեր:
I know nothing of it.	Ամենեւին չեմ գիտեր:
I don't know a word of it.	Վրան ամենեւին բան չեմ գիտեր:
Not that I know of.	Չեմ գիտեր:
I have not heard of that.	Այս բանիս վերայ ամենեւին խօսք չլսեցի:

I have not heard of it.	Ասոր վերայ բան մը լսած չունիմ :

AGE. ՏԱՐԻՔ.

What is your age?	Քանի՞ տարեկան էք : —Տարիքնիդ ի՞նչ է :
How old is your brother?	Եղբայրնիդ քանի՞ տարեկան է :
I am twelve years old.	Տասուերկու տարեկան եմ :
I am ten years and a half old.	Տասնուկէս տարեկան եմ :
I am nearly fifteen.	Քիչ ատենէն տասնըհինգ տարեկան պիտի ըլլամ :
I shall be sixteen next month.	Գալ ամիս տասնըվեց տարեկան պիտի ըլլամ :
I was thirteen last week.	Անցեալ շաբաթ տասուիրեք տարեկան եղայ :
I shall be twenty next Christmas.	Գալ Ծնընդեան տօնին քսան տարեկան պիտի ըլլամ :
You do not look so old.	Այնչափ տարիք չէք ցուցըներ :
You look older.	Աւելի տարեց կերեւաք :
I thought you were older.	Աւելի տարեց կարծէի ձեզ :
I did not think you were so old.	Ձեզ այնչափ տարեց չէի կարծեր :

How old may your uncle be?	Հօրեղբայրնիդ քանի՞ տարեկան կրնայ ըլլալ:
He may be sixty years old.	Վաթսուն տարեկան կայ:
He is about sixty.	Գրեթէ վաթսուն տարեկան է:
He is more than fifty. — He is upwards of fifty.	Յիսուն տարուընէ աւելի է: — Տարիքը յիսունէն աւելի է:
He is a man of fifty and upwards.	Յիսուն տարեկանէ աւելի մարդ է:
He is a man of sixty.	Վաթսնամեայ մարդ է
He is sixty years old.	Վաթսունէն աւելի տարիք ունի:
He is about sixty years of age.	Վաթսուն տարեկան մը պիտի ըլլայ:
He may be sixty or thereabouts.	Պէտք է որ վաթսնամեայ մը ըլլայ կամ մօտ:
He is above eighty years old.	Ութսուն տարեկանէն աւելի է:
He is at least seventy years old.	Գէթ եօթանասուն տարեկան պիտի ըլլայ:
It is a great age.	Շատ մեծ տարիք է:
Is he so old?	Այնչափ ծե՞ր է:
Is he of that age?	Այնչափ տարիք ունի՞:
He begins to grow old.	Ալ սկսեր է ծերանալ:
He begins to get in years.	Սկսեր է տարիքը առնուլ:
He breaks very fast.	Օրէ օր իյնալու վերայ է:

THE HOUR. ԺԱՄ.

What o'clock is it?	Ժամը քանի՞ է:
Pray tell me what it is o'clock?	Ըսէք կաղաչեմ, ժամը քանի՞ է:
Can you tell me what it is o'clock?	Կրնա՞ք ինծի ըսել թէ ժամը քանի՞ է:
It is one o'clock.	Ժամը մէկ է:
It is past one.	Մէկն անցած է:
It has struck one.	Մէկը զարկած է:
It is a quarter past one.	Մէկը քառորդ անցեր է:
Half past one.	Ժամը մէկ ու կէս է:
It wants a quarter to two.—It is a quarter to two.	Երկուքին քառորդ կայ:
It wants ten minutes to two. — It is ten minutes to two.	Երկուքին տասը վայր-կեան կայ:
It is not yet two.	Դեռ կէսօր չզար-կաւ:
It has not struck twel-ve.	Դեռ տասուերկուք չկայ:
It is but twelve o'clock.	Դեռ կէսօր է:
It is noon. — It is twelve o'clock.	Կէսօր է:
It is midnight. — It is twelve o'clock (at night)	Կէս գիշեր է:
It is almost three. — It is nearly three.	Ժամը երեքին մօտ է:

It is upon the stroke of three.	Ճիշդ երեք է։
It is going to strike three.	Հիմա երեք կը զարնէ։
You will hear the clock strike three.	Շատ չանցնիր՝ կը լսէք որ երեք պիտի զարնէ։
It is ten minutes after three.	Երեքը տասը վայրկեան անցեր է։
It has just struck four	Հիմա չորս զարկաւ։ —Չորսը դեռ նոր զարկաւ։
It is past four.	Չորսն անցած է։
It is twenty minutes after four.	Չորսը քսան վայրկեան անցեր է։
The clock is going to strike.	Ժամացոյցը հիմա պիտի զարնէ։
The clock strikes.	Ահա ժամացոյցը կը զարնէ։
It is not late.	Ուշ չէ։
It is very late.	Շատ ուշ է։— Ատենը շատ ուշ է։
It is later than I thought.	Կարծածէս աւելի ուշ է եղեր։ — Այսչափ ուշ չէի կարծեր։
I did not think it was so late.	Չէի կարծեր որ այսչափ ուշ ըլլայ։
I didn't know what o'clock it was.	Չէի գիտեր թէ ժամը քանի՞ է։

THE WEATHER. ՕԴ.

How is the weather? —What sort of weather is it?	Օդն ինչպէս է:
It is bad weather?	Օդը գէշ է:
It is cloudy.	Օդը գոց է, ամպոտ է:
It is very dull.	Օդը շատ տխուր է:
The weather is cloudy.	Օդը քիչ մը ամպոտ է:
It is dreadful weather.	Օդը շատ գէշ է:
It is shockingly bad weather.	Գարշելի օդ մըն է:
It is fine weather.	Օդը բաց է: — Օդը գեղեցիկ է:
It is charming weather. — It is beautiful weather.	Օդը սքանչելի է, շատ գեղեցիկ է:
We shall have a fine day.	Այսօր օդը շատ գեղեցիկ պիտի ըլլայ: — Այսօր շատ գեղեցիկ օդ պիտի ունենանք:
It is dewy.	Ցօղ կիջնայ:
It is foggy.	Մէգ' մշուշ կայ:
It is rainy weather.	Անձրեւոտ օդ մըն է:
It threatens to rain.	Անձրեւի օդ է:
The sky is overcast.	Երկինքը չորս կողմէն պատած է:
The sky lowers.	Օդը կաւրուի:
The sky gets very cloudy.	Երկինքը կը գոցուի, կամպոտի:

The sky becomes very dark.	Օդը մթննալու վրայ է:
The sky becomes very black.	Երկինքը կը մթննայ: — Օդը կը սեւնայ:
The sun begins to break out.	Արեւ բացուիլ սկսաւ:
The sun breaks out.	Արեւ բացուեցաւ:
The weather settles.	Օդը կը բացուի:
The weather begins to settle.	Օդը սկսաւ բացուիլ, շտկուիլ:
The weather seems as if it would settle.	Կերեւայ թէ օդը պիտի բացուի:
It looks as if it would be fine weather.	Օդը բացուելու պէս կերեւայ:
The weather is settled.	Օդը շտկուեցաւ:
It is very warm.	Շատ տաք կընէ: — Օդը շատ տաք է:
It is sultry.	Խղդուկ օդ մըն է:
It is very heavy.	Օդը շատ ծանր է:
It is very mild.	Օդը շատ մեղմ է՝ կակուղ է:
It is cold.	Օդը ցուրտ է:
It is terribly cold. — It is excessively cold.	Սոսկալի ցուրտ կընէ:
It is very close.	Օդը շատ խղդուկ է:
It rains.—It is raining.	Կանձրեւէ: — Անձրեւ կուգայ:
It rains very fast.	Սաստիկ անձրեւ կուգայ:
It pours down. — It is pouring. — It rains as fast as it can pour.	Յորդ անձրեւ՝ տեղատարափ կուգայ: —Հեղեղի պէս անձրեւ կուգայ:

It has rained. — It has been raining.	Անձրևեց : — Անձրև եկաւ :
It is going to rain.	Անձրև պիտի գայ :
I feel some drops of rain.	Անձրևի կաթիլներն սկսան :
There are some drops falling.	Կաթիլ կաթիլ անձրև կուգայ :
It hails — It is hailing.	Կարկուտ կուգայ :
It snows. — It is snowing.	Ձիւն կուգայ :
It has snowed. — It has been snowing.	Ձիւն եկաւ :
It snows in great flakes.	Խոշոր խոշոր ձիւն կուգայ :
It freezes.	Սկսաւ սառիլ :
It has frozen. — It froze very hard.— There is ice.	Ամեն տեղ սառեր է, սառոյց կապեր է :
It freezes extremely hard.	Սաստիկ սառոյց կապեր է :
It is a white frost.	Եղեամն իջեր է :
It drizzles.	Բարակ անձրև կուգայ :
It is getting milder.	Օդը մեղմացաւ :
It begins to get milder.	Օդը սկսաւ կակղնալ :
It thaws.	Սառերը կը հալին :
The snow is melting.	Ձիւնը սկսաւ հալիլ :
It is very windy.	Շատ քամի կայ :
The wind is very high.	Հովը սաստիկ է :
There is no air stirring.	Քամի’ հով չկայ :
It lightens.	Փայլակ կրնէ :

It has lightened all night.	Բոլոր գիշերը փայլակ բրաւ՝ փայլատակեց:
It thunders.	Կորոտայ: — Երկինքը կըգոռայ:
The thunder roars.	Որոտմունք կըլլայ:
I hear the thunder.	Որոտման ձայն կայ:
The thunderbolt has fallen.	Կայծակ իջաւ, կայծակ զարկաւ:
It has thundered all day long.	Բոլոր օրը երկինքը գոռաց:
The weather is stormy.	Փոթորիկ պիտի ըլլէ: Փոթորկի պատրաստութիւն կայ:
We shall have a storm.	Փոթորիկ պիտի ունենանք:
The sky begins to clear up.	Երկինքը սկսաւ բացուիլ:
The weather may settle	Օդը կրնայ բացուիլ:
The weather is very unsettled.	Շատ անհաստատ օդ է:
The weather is very changeable.	Օդը շատ փոփոխական է:
It is very dirty.	Շատ ցեխ կայ: — Փողոցները շատ ցեխոտ են:
It is very dusty.	Սաստիկ փոշի կայ:
It is very slippery.	Գետինը շատ սահուն է
It is very bad walking.	Քալելու օդ չէ:
It is daylight.	Լուսացաւ: — Առաւօտ եղաւ:
It is dark.	Օդը մութ է: — Օդը մթնցաւ:
It is night.	Գիշեր եղաւ: Մութը կոխեց:
It is a fine night.	Գեղեցիկ գիշեր է:

It is a dark night.	Այս գիշեր շատ մութ է:
It is moonlight.	Լուսնկայ կայ:
Do you think it will be fine weather?	Կարծէ՞ք որ գեղեցիկ օդ ընէ:
I don't think it will rain.	Չեմ կարծեր որ անձրեւ գայ:
I think it will rain.	Կարծեմ որ անձրեւ պիտի գայ:
It threatens to rain.	Անձրեւի վախ կայ:
I am afraid it will rain.	Վախեմ թէ անձրեւ պիտի գայ:
I am afraid we shall have some rain.	Վախեմ թէ անձրեւ պիտի ունենք, անձրեւի պիտի բռնուինք:
I fear so.	Ես ալ անկէ կը վախնամ:
I am afraid we shall.	Վախեմ:
I am quite wet.	Բոլորովին թրջուած եմ:
The wind has changed.	Քամին փոխուեցաւ:
The rain begins to lessen.	Անձրեւը դադրիլ ըսկսաւ:
The clouds are clearing away.	Ամպերն սկսան ցրուիլ՝ փարատիլ:
The storm is over.	Փոթորիկն ա՛լ անցաւ:
The sun-set is very beautiful.	Արեւը շատ պայծառ կը մտնէ:
The sun is scorching.	Արեւը շատ կայրէ:
I am in a great perspiration.	Բոլոր ջուր կտրեր եմ: — Սաստիկ քրրտնած եմ:
I am cold.	Շատ կը մսիմ:
I am frozen.	Կը սառիմ:

My fingers are benumbed.	Մատուըներս փայտ դարձեր են :
It is cold and dry.	Զոր ցուրտ մը կայ :
I shiver with cold.	Ցրտէն կը դողամ :
The river is frozen.	Գետը սառեր է :

THIRD PART.

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ.

EASY DIALOGUES. — ԴԻՒՐԻՆ ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ

SALUTATION. — ՈՂՋՈՅՆ.

Good morning.	Բարի լոյս :
I wish you good morning.	Հրամանոցդ բարի լոյս կը մաղթեմ :
How do you do this morning?	Այս առաւօտ ինչպէս էք :
How is your health? — Do I see you well?	Առողջութիւննիդ ինչպէս է : — Առո՞ղջ էք :
Do you continue in good health?	Առողջութիւննիդ աղէ՞կ է միշտ :

Pretty good, and how is yours?	Ձեռք կուտայ. իսկ ձե-րինը :
Are you well ?	Ի՞նչպէս էք, աղէկ էք:
Very well, and how do you do?	Շատ աղէկ. հրամանքնիդ :
How have you been since I had the pleasure of seeing you ?	Ձձեզ տեսնելէս ի վեր ինչպէս եղաք :
I hope you are well.	Յուսամ թէ առողջութիւննիդ աղէկ է :
I hope I find you in good health.	Յուսամ թէ ողջ առողջ էք :
You look well.	Դէմքերնիդ աղէկ է:
I am perfectly well.	Շատ աղէկ, շատ րոխնտ եմ :
As well as can be.	Ասկէց աղէկ չէի կըրնար ըլլալ :
And how are you?	Իսկ դուք ինչպէս էք :
Pretty well, thank God.	Փառք Աստուծոյ, աղէկ եմ :
As usual.	Սովորականին պէս :
I am glad of it.	Շատ ուրախ եմ :
I am very happy to find you well.	Ձհրամանքնիդ ողջ առողջ տեսնելուս շատ ուրախ եմ :

VISIT.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.

There's a knock.	Դուռը կը զարնեն : — Դուռն է :
Somebody knocks	Մէկը դուռը կը զարնէ :

Some one rings.	Մէկը զանգակ կը զարնէ։
The bell rings.	Զանգակը կը զարնուի։
Go and see who it is.	Գնա նայէ ով է։
Go and open the door.	Գնա դուռը բաց։
It is Mrs. B***.	Պ***. տիկինն է։
Good morning to you	Բարի լոյս։
I am very glad to see you.	Բարի տեսանք։— Բարի եկաք։
I am very happy to see you.	Շատ ուրախ եմ որ ձեզ տեսայ։
I have not seen you this age.	Ո՛րչափ ատեն է որ ձեզ չեմ տեսած։
It is a novelty to see you.	Ձեզ տեսնելը նոր բան մըն է։
You are quite a stranger.	Ալ խիստ քիչ կը տեսնուիք։ — Ալ հազիւ կը տեսնուիք։
Pray, sit down.	Նստեցէք, կաղաչեմ։
Won't you sit down.	Նստիլ չէ՞ք ուզեր։
Please to sit down.	Քիչ մը չէ՞ք ուզեր նստիլ։
Won't you please to sit down a moment.	Խնդրեմ նստէք։
Give a chair to Mrs C***.	Ս*** խաթունին աթոռ մը տուէք։
Fetch a seat for Mrs P***.	Փ*** խաթունին թիկնաթոռ մը բերէք։
Will you stay and take dinner with us?	Կրնա՞ք կենալ որ մեզի հետ ճաշէք։

I cannot stay.	Չեմ կրնար մնալ :
I am very sensible of your kindness.	Մեծապէս շնորհակալ եմ ձեր ազնուութեանը :
I only came in to know how you did.	Ձեր առողջութիւնը հարցընելու համար միայն ներս մտայ :
I must go away.	Պէտք է որ երթամ :
You are in great haste.	Շատ կաճապարէք :
Why are you in such a hurry?	Ինչո՞ւ համար այնչափ կը փութաք :
I have a great many things to do.	Շատ բան գործ ունիմ :
Surely, you can stay a little longer.	Անշուշտ կրնաք դեռ քիչ մը կենալ :
I have many places to call at.	Շատ տեղեր ունիմ երթալու :
I will stay longer another time.	Ուրիշ անգամ աւելի կը կենամ :
Thank you for your visit.	Շնորհակալ եմ ձեր այցելութեանը :
I hope I shall see you soon again.	Յուսամ որ շուտով նորէն տեսնուինք :

BREAKFAST. — ՆԱԽԱՃԱՇԻԿ.

Have you breakfasted?	Նախաճաշիկ ըրի՞ք :
Not yet.	Դեռ չըրինք : — Դեռ չըրի :
You come just in time.	Շատ յարմար ատեն եկաք :

Will you breakfast with us?	Նախաճաշիկը մեզի հետ կընէ՞ք։
Breakfast is ready.	Նախաճաշիկը պատրաստ է։
Come to breakfast.	Եկէք նախաճաշիկ ընէք։
Do you take tea, or coffee?	Չա՞յ կը խմէք թէ սուրճ։
Would you prefer chocolate?	Թերեւս չոքոլաթ աւելի կը սիրէք։
I prefer coffee.	Սուրճը աւելի կընտրեմ։
What may I offer you?	Ձեզի ինչ հրամցընեմ։ — Ի՞նչ կը հրամէք։
Here are some rolls and some toast.	Ահա նկանակներ ու կարմրցուցած հացի շերտեր։
Which do you like best?	Ո՞րը աւելի կախորժիք։
I will take a roll.	Պզտիկ հաց մը կառնում։
I prefer a bit of toast.	Կարմրցուցած հացն աւելի կախորժիմ։
How do you like the coffee?	Սուրճն ինչպէս է։
I hope you like the coffee.	Յուսամ որ սուրճը ձեր ուզածին պէս է։
Is the coffee strong enough?	Սուրճը բաւական ուժով է։
It is excellent.	Սքանչելի է։
Take some more sugar.	Քիչ մըն ալ շաքար առէք։
Is it sweet enough?	Բաւական անո՞ւշ է։

If it is not, I beg you will ask for some more.	Թէ որ բաւական չէ, կըխնդեմ որ քիչ մը աւելի ուզէք :
If it is not, don't hesitate to ask for more.	Բաւական չէ նէ, մի՛ քաշուիք՝ աւելի ուզեցէք :
Do you like milk?	Կաթ կը սիրէ՞ք :
You have not milk enough.	Բաւական կաթ չունիք :
Allow me to help you to some more.	Եթէ կամիք՝ քիչ մըն ալ լեցընեմ :
Make yourself at home.	Ինչպէս թէ ձեր տունը ըլլայիք՝ այնպէս վարուեցէք :
I thank you, I have done.	Շնորհակալ եմ, կշտացայ :
I have made an excellent breakfast.	Փառաւոր նախաճաշիկ մը ըրի :

BEFORE DINNER. — ՃԱՇԷՆ ԱՌԱՋ.

What time do we dine to-day?	Այսօր ժամը քանի՞ին պիտի ճաշենք :
We are to dine at four o'clock.	Ժամը չորսին պիտի ճաշենք :
We shall not dine before five.	Հինկէն առաջ չենք ճաշեր :
Shall we have any body to dine to-day?	Այսօր ճաշի դրսէն մարդ ունի՞նք :
Do you expect company?	Մարդու կը սպասէ՞ք : — Ճաշի մարդ պիտի ունենանք :
I expect Mr. B***.	Պ. Բ*** ին կը սպասեմ: —Պ. Բ*** պիտի գայ:

Mr. D*** has promised to come, if the weather permit.	Պ. Տ*** խոստացաւ որ գայ՝ թէոր օդն աղէկ ըլլայ:
At what o'clock will you dine.	Ժամը քանիին կուզէք ճաշել:
Have you given orders for dinner?	Ճաշն ապսպրեցի՞ք:
What did you order for dinner?	Ճաշի համար ի՞նչ ապսպրեցիք:
What have we for our dinner? — 'What shall we have for dinner?	Ճաշին ի՞նչ պիտի ունենանք:
Did you send for any fish?	Ձուկ գնել տուի՞ք:
Shall we have any fish?	Ձուկ պիտի ունենա՞նք:
I could not get any fish.	Ձուկ չկրցայ գտնել:
There was not a fish in the market.	Ձկնարանը ամենեւին ձուկ չկար:
No fish came to day.	Այսօր ձուկ չէ եկած:
I fear we shall have an indifferent dinner.	Վախեմ թէ խեղճ ճաշ մը պիտի ունենանք
We must do as well as we can.	Կրցածնիս կընենք:

DINNER.	ՃԱՇ.
What shall I help you to?	Ի՞նչ կը հրամէք: — Ի՞նչ տամ ձեզի:

Will you take a little soup?	Քիչ մը ապուր կուզէ՞ք :
Will you take some soup?	Թան կառնէ՞ք :
I thank you. I will trouble you for a little beef.	Շնորհակալ եմ : Ինծի կտոր մը խաշած եզան մսէն տայիք :
It looks so well.	Շատ լաւ կերեւայ :
What part do you like best?	Ո՞ր կտորն աւելի կը սիրէք :
Which way shall I cut it?	Ո՞ր կողմէն կտրեմ :
Any way.	Ո՛ր կողմէն որ ըլլայ :
Will you have it well done, or under done?	Շիճտ եփած կուզէք թէ քիչ եփած :
Well done, if you please.	Խնդրեմ, աղէկ եփած ըլլայ :
Rather under done, if you please.	Խիստ շատ եփած չըլլայ, խնդրեմ :
I like it rather well done.	Քիչ մը եփած կը սիրեմ :
I do not like it overdone.	Խիստ շատ եփածը չեմ սիրեր :
Did I help you to your liking?	Ձեր ախորժակին յարմար տուի՞ :
Did I help you to the part you like best?	Ձեր սիրած կտորէ՞ն էր տուածս :
I hope this piece is to your liking.	Յուսամ որ այս կտորը ձեր քմացը յարմար է, ձեր ուզածն է :
It is excellent.	Սքանչելի է : — Խօսք չկայ :

Now I am going to send you a piece of this meat pie.	Հիմա ձեզի այս կարկանդակէն քիչ մը խրկեմ:
I would rather take a piece of that pudding.	Ինծի մնայ նէ՝ կտոր մը այս պուտինկէն կառնում:
Try them both.	Երկուքին համն ալ նայեցէք:
You had better take some of both.	Աղէկն ան է որ երկուքէն ալ կտոր մը առնէք:

AT TABLE. — ՍԵՂԱՆԻ ՎԵՐԱՑ.

Gentlemen, you have the dishes before you.	Պարոններ, կերակուրի պնակներն առջեւնիդ են:
Help yourselves.	Ուզածնէդ առէք:
Take without ceremony what you like best.	Առանց քաշուելու՝ որն որ աւելի կը սիրէք՝ անկէց առէք:
What shall I help you to?	Ձեզի ինչ հրամցընեմ: — Ի՞նչ կախորժիք:
What will you have?	Ի՞նչ կուզէք:
Will you take a little of this roast beef?	Այս խորվածէն քիչ մը կուզէ՞ք:
Will you take some roast meat?	Խորվածէն կառնո՞ւք:
Do you like fat?	Եղոտ կտոր կը սիրէ՞ք:
Shall I help you to some fat?	Եղոտ կտոր հրամցընե՞մ ձեզի:
I am not very fond of fat?	Եղ շատ չեմ ախորժիր: — Եղ այնչափ չեմ սիրեր:

Give me some of the lean, if you please.	Ինծի առանց եղի կտոր մը տայիք։
A little of both.	Երկուքէն ալ մէյմէկ քիչ։
Here is a piece which, I think, will please you.	Ահաւասիկ կտոր մը որ կարծեմ պիտի ախորժիք։
I hope you will find this piece to your taste.	Յուսամ որ այս կտորը ձեր քմաց յարմար պիտի գտնաք։
You have not eaten any fish.	Ձուկ չկերաք։
Do you wish to have some turbot.	Վահանաձուկէն կու-զէ՞ք։

THE SAME. — ՆՈՅՆ.

You have no gravy.	Խորովածի ջուր չա-ռիք։
You have no sauce.	Համեմ չառիք, չու-նիք։
I have quite enough, I thank you.	Բաւական ունիմ շնոր-հակալ եմ։
How do you like the roast beef.	Խորովածն ինչպէս կը գտնէք։
It is very good, indeed.	Սքանչելի է։
It is delicious.	Շատ համեղ է։
It melts in the mouth.	Մարդուս բերնին մէջ կը հալի։
I am very glad it is to your taste.	Շատ ուրախ եմ որ ձեր քմացը յարմար է։
What do you take with your meat?	Մսին հետ ինչ կու-տէք։

May I help you to some vegetables?	Խոտեղէն տամ: — Կրնամ ձեզի խոտեղէն հրամցրնել:
Here are spinage and asparagus.	Ահա ձեզի ծմեղ ու ծնեբեկ:
Will you take green peas, or cauliflower.	Մա՞շ կուզէք, թէ ընդակաղամբ:
These french beans are excellent.	Այս թարմ լուբիան գերազանց բան է:
You have not tasted the artichokes.	Կանկարին համը չնայեցաք:
Do you take salad?	Աղցան կը հրամէ՞ք:
Here are potatoes and cabbage.	Ահաւասիկ գետնախնձոր եւ կաղամբ:
Will you take white or brown bread?	Ճերմա՞կ հաց կուզէք թէ սեւ:
I'll take either.	Որն ալ ըլլայ՝ հոգս չէ:

THE SAME. — ՆՈՅՆ.

May I help you to a little of this?	Ասկէց կտոր մը կը հրամայէ՞ք:
Give me leave to help you to a piece of this.	Ասկէց կրնամ ձեզի կտոր մը հրամցրնել:
Shall I send you a slice of this leg of mutton?	Աս ոչխարի զիստէն կրնամ ձեզի կտոր մը տալ:
It seems excellent.	Շատ լաւ կերեւայ:
You have not eaten any cream.	Սերէն չկերաք:

This ragout is delicious.	Այս պորանին շատ համեղ եղեր է :
May I help you to some of it?	Քիչ մը կը հրամեք :
Thank you, I'll take a very small piece, just to taste it.	Շնորհակալ եմ, համը նայելու համար կըտոր մը առնեմ :
Give me a very little of it.	Խիստ քիչ տուէք :
You are a little eater.	Խիստ քիչ ուտող էք :
You eat nothing at all.	Ամենեւին բան չէք ուտեր :
I beg your pardon, I eat very heartily.	Թողութիւն ըրէք, շատ լաւ կուտեմ :
I do honour to your dinner.	Ձեր ճաշին պատիւ կընեմ : — Ամէն բանէ կուտեմ :
Would you be so kind as to hand me the salt.	Աղամանը կընա՞ք տալ ինծի :

THE SAME. — ՆՈՅՆ.

Now, what can I offer you?	Հիմա ինչ կընամ ձեզի հրամցընել :
I will send you a bit of this fowl.	Սա հաւումէն քիչ մը տամ :
Not any thing more, thank you.	Շնորհակալ եմ, այլ բան չեմ կրնար ուտել :

A little bit of fowl cannot hurt you.	Կտոր մը հաւու միսը չկրնար ձեզի վնաս տալ :
Help me then to a very small piece.	Ուրեմն փոքրիկ կտոր մը տուէք :
Bring this gentleman a plate.	Պարոնին սկաւառակ մը բեր :
Which do you like best, a leg, or a wing.	Ո՞րը աւելի կախորժիք. զ՚իստը թէ թեւը :
It is all the same to me.	Ինծի համար երկուքն ալ մէկ է :
You give me a great deal too much.	Ինծի խիստ շատ կուտաք : — Ինծի համար խիստ շատ է :
There is but a mouthful.	Պատառ մը բան է :
Give me only half of it.	Անոր կէսը տուէք :
Cut that in two.	Անիկայ երկուք ըրէք, երկուք բաժնեցէք :
Half of it will be enough.	Կէսը կը բաւէ :
So? — Will that do?	Ա՞յսչափ :— Ա՛յսչափ կուզէք :
Thank you, that is enough.	Հրամեր էք, այնչափը բաւական է :
Allow me to pour you out some Bordeaux.	Հրամանոցդ Պորտոյի գինի մը լեցընեմ :
Change the plates.	Սկաւառակները փոխէ :
Bring in a spoon and fork.	Դգալ մը ու պատառաքաղ մը բեր :
Give this gentleman some bread.	Պարոնին հաց տուր :

Take away.	Կերակուրները վերցուր :
Take away, and bring in some wine.	Կերակուրները վերցուր, ու գինի բեր մեզի :
Joseph, bring in the dessert.	Յովսէփ, պտղեղէնը բեր :
What fruit do you prefer?	Ի՞նչ պտուղ կը հրամէք :
Take whatever you please ; here are pears, grapes.	Ուզածնիդ առէք. ահաւասիկ տանձ, խաղող :
I'll take a bunch of grapes or a peach.	Ողկոյզ մը խաղող կամ դեղձ մը կառնում :
You'd better take both.	Աղէկ կընէք թէոր երկուքն ալ առնէք :

TEA. ՉԱՅ.

Have you carried in the tea things?	Չայի բաները ամէնն ալ բերի՞ր :
Every thing is on the table.	Ամէն բան սեղանին վերայ է :
Does the water boil?	Ջուրը եփ եկա՞ւ թէ չէ :
Tea is quite ready.	Չայը պատրաստ է :
They are waiting for you.	Ձեզի կը սպասեն :
I am coming.	Ահա եկայ :
I'll follow you.	Ետեւէդ կուգամ :
You have not put a slop basin on the table.	Սեղանին վերայ պըտուկ չես դրած :

We have not cups enough.	Բաւական գաւաթ չունինք :
We want two cups more.	Դեռ երկու գաւաթ պէտք է :
Bring another spoon, and a saucer.	Մէկ դգալ ու մէկ բաժակակալ մըն ալ բեր :
You have not brought in the sugar-tongs.	Շաքարի ունելիքը չես բերած :
Do you take sugar?	Շաքար կը հրամէ՞ք :
Do you take cream?	Սեր կը հրամէ՞ք :
I will thank you for little more milk.	Քիչ մը կաթ ալ կուտա՞ք :
The tea is very strong	Չայը շատ զօրաւոր է:
I can give you some more.	Կրնամ աւելի տալ :— Նորէն կուզէ՞ք :
We have quite enough.	Չայ շատ ունինք :
Put in plenty.	Մի՛ խնայէք :

THE SAME. — ՆՈՅՆ.

What will you take?	Ի՞նչ կառնէք, ինչ կուզէք ուտել :
Here are some cakes, and some buttered rolls.	Ահա ձեզի խմորեղէն եւ պաքսիմատ :
Do you prefer bread and butter?	Կարագով հաց կուզէ՞ք :
I'll take some bread and butter.	Կարագով հաց կառնում :
Get some more bread and butter.	Քանի մը հատ կարագով հաց նորէն բեր :
I'll thank you for some bread and butter.	Կարագ քսած հացի շերտ մը շնորհէք կրնէ՞ք :

Hand the plate this way.	Սկաւառակն հոս բերէք:
Shall I help you to a piece of this cake?	Խմորեղէն կը հրամմէ՞ք:
Give me a small piece if you please.	Պզտիկ կտոր մը շնորհք ըրէք:
Allow me to cut you another piece.	Թէոր հաճիք, ձեզի մէկ կտոր մըն ալ տամ:
Not any more, I thank you.	Շատ շնորհակալ եմ, ալ չեմ կրնար:
Would you rather not?	Քիչ մըն ալ չէ՞ք ուզեր:
Much rather not, thank you.	Ալ ամենեւին չեմ կրնար, շատ շնորհակալ եմ:
Ring the bell, if you please.	Զանգակը քաշէի՛ք:
Will you be so kind as to ring the bell?	Զանգակը կրնա՞ք քիչ մը զարնել:
Will you be so kind as to pull the bell?	Քիչ մը զանգակը կը քաշէ՞ք:
We want some more water.	Մեզի նորէն ջուր պէտք է:
Make some more toast.	Քանի մը շերտ հաց ալ կարմրցուր:
Bring it in as soon as possible.	Որչափ կարելի է՝ շուտ բեր:
Make haste.	Շուտ ըրէ:
Take the plate with you.	Սկաւառակը հետդ տար:

THE SAME.	ՆՈՅՆ.
Ladies, is the tea to your taste?	Տիկնայք, չայն ի՞նչ-պէս է:
Is your tea sweet enough?	Չայերնիդ բաւական անո՞ւշ է:
Have I put sugar enough in your tea?	Չայերնուդ մէջ բաւական շաքար դրե՞ր եմ:
Do you find your tea sweet enough?	Չայերնուդ շաքարը բաւակա՞ն է թէ չէ:
It is excellent.	Շատ լաւ է:
I do not like it quite so sweet.	Այնչափ անուշ չեմ սիրեր:
Your tea is very good.	Չայերնիդ շատ աղէկ է:
This is most excellent tea.	Այս ինչ լաւ չայ է:
Where do you buy it?	Ուսկի՞ց կը գնէք:
I buy it at...'s.	...խանութէն կը գնեմ:
It is the best shop for coffee and tea.	Չայի ու սուրճի համար անկէց լաւ խանութ չկայ:
You have a very fine set of tea-things.	Ամաններդ շատ գեղեցիկ են:
The tea-pot is in very good taste.	Չայամանը շատ գեղեցիկ շինուած է:
The sugar-basin and the milk-jug are very handsome.	Շաքարամանն ու կաթնամանն սքանչելի են:
You have a splendid tea-tray.	Ափսէնիդ շատ փառաւոր է:
Have you finished already?	Լմնցուցի՞ք: — Ի՞նչ շուտ լմնցուցիք:

You will take another cup.	Ուրիշ գաւաթ մըն ալ պէտք է որ խմէք:
You can take another cup.	Ուրիշ գաւաթ մըն ալ կրնաք խմել:
I will pour you out half a cup.	Ձեզի կէս գաւաթ մըն ալ լեցընեմ:
You cannot refuse me.	Յուսամ որ չէ չէք ըսեր:
Much rather not, I thank you.	Մեծապէս շնորհակալ եմ, ալ չեմ կրնար:
I have taken three cups, and I never drink more.	Երեք գաւաթ խմեցի, անկեց աւելի ոչ երբեք խմեր եմ:
Are you sure you won't take any more?	Աստոյգ գիտէ՞ք որ աւելի չէք կրնար խմել:
Are you quite sure?	Իրաւցընէ ա՛լ չէք ուզեր խմել:
Take away.	Ամանները վերցուր՝ դուրս տար:

SUPPER. — ԸՆԹՐԻՔ.

Will you stay and sup with us?	Հոս կը մնա՞ք որ մէկտեղ ընթրենք:
Will you stay and take a bit of supper with us?	Կուզէ՞ք հոս կենալ որ պատառ մը բան մէկտեղ ուտենք:
Sup with us without ceremony.	Եկէք առանց քաշուելու՝ ընթրիքը մեզի հետ ըրէք:

I am obliged to you, but I am afraid it will be too late.	Շնորհակալ եմ, բայց վախեմ թէ ատենը ուշ է:
We shall sup directly.	Մէկէն հիմա ընթրիքի պիտի նստինք:
We are going to sup directly.	Հիմա մէկէն պիտի ընթրենք:
Pray, do not order any thing on purpose for me.	Խնդրեմ, ամենեւին ինծի համար նոր բան չապսպրէք:
Do not make any preparations for me.	Ինծի համար ամենեւին մասնաւոր բան պատրաստել մի՛ տաք:
A little bread and cheese will be sufficient.	Հաց ու պանիր բաւական է:
We shall just have a little cold meat, with a few oysters.	Քիչ մը պաղ միս, քանի մը հատ ալ ոստրէ միայն ունինք:
Do you like oysters?	Ոստրէ կը սիրէ՞ք:
I am very fond of them?	Շատ կը սիրեմ:
I shall send for some, and we will sup immediately.	Մէկը ղրկեմ որ երթայ քիչ մը գնէ, գալուն պէս սեղանի կը նստինք:
Here are some ham and cold beef. What shall I offer you first?	Ահա ձեզի խոզի ապուխտ ու եզան խաշած: Ո՞րն առաջ կը հրամէք:
I shall eat a few oysters.	Քանի մը ոստրէ ուտեմ:
How do you like them?	Ի՞նչպէս են:

Are they quite fresh?	Աղէկ թա՞րմ են :
They are very good.	Շատ լաւ են :
Won't you take two or three more.	Երկու իրեք հատ ալ չե՞ք առներ :
No, I thank you. I will take a little ham, if you please.	Չէ, շնորհակալ եմ : Եթէ հաճիք, կտոր մը խոզի ապուխտէն առնում :
Take some beef with it.	Քիչ մը եզան մսէն ալ մէկտեղ առէք :
Give me very little.	Խիստ քիչ տուէք :
Will you have a piece of this apple-pie?	Այս խնձորով եփած կարկանդակէն կուզե՞ք:
It looks pretty good.	Բաւական աղէկ կերեւայ :
I cannot take any thing more.	Ալ ուրիշ բան չեմ կրնար ուտել :
I am afraid you have supped very badly.	Վախեմ թէ ընթրիքնիդ շատ խեղճ եղաւ :
I have supped very well.	Շատ աղէկ ընթրեցի :
I have done extremely well.	Փառաւոր ընթրիք մը ըրի :

DRINK. ԽՄԵԼ.

Will you take a glass of wine with me?	Հետս գաւաթ մը գինի կը խմե՞ք :
Thank you.-Willingly.	Ամենայն սիրով :

Which do you prefer red or white?	Ուսկից կուզէք, կարմրէն թէ ճերմակէն :
Red, if you please.	Կարմրէն, թէ որ կուզէք :
I will take white, if you please.	Ճերմակէն կուզեմ խըմել, թէոր հաճիք :
Bring two glasses of wine, one of red, and one of white.	Երկու գաւաթ գինի բեր, մէկը կարմիր, մեկալը ճերմակ :
Your health, Sir.	Ձեր կենդանութեանը պարոն : — Կենդանութիւն, պարոն :
I drink your good health.	Ձեր կենդանութեանը կը խմեմ :
What do you wish to drink with your dinner?	Ճաշին ինչ կուզէք խմել :
Do you drink table beer or porter?	Գարեջուրը կուզէք թէ փորթէր :
I'd rather have some table beer.	Ինծի մնայ' սեղանի գարեջրէն կուզեմ խմել :
I will take some beer, if you please.	Թէ որ հաճիք, գարեջուր կուզէի խմել:
I prefer porter.	Ինծի մնար' փորթէր կը խմէի :
Give me a glass of porter, if you please.	Ինծի գաւաթ մը փորթէր շնորհք ըրէք:
What do you think of this porter?	Այս փորթէրն ինչպէս կը գտնէք :
Is not this pretty good porter?	Միթէ բաւական լաւ չէ այս փորթէրը :

Don't you think this pretty good porter?	Այս փորթերը բաւական աղէկ չե՞ք գտներ:
Very good, indeed.	Սքանչելի է:
Do you bottle it.	Շիշերո՞ւ մէջ դրած էք:
How long has it been bottled?	Ո՞րչափ ատենէ ի վեր շիշի մէջ դրուած է:
I do not remember ever having drunk better.	Չեմ յիշեր որ ասկէց լաւը խմած ըլլամ:

SCHOOL. — ԴՊՐՈՑ.

Repeat your lesson.	Դասդ գրուցէ:
Do you know your lesson?	Դասերնիդ գիտե՞ք: — Դասդ գիտե՞ս:
Have you learned your lesson?	Դասերնիդ սորվե՞ր էք:
What lesson have you learned?	Ի՞նչ դաս սորվեցաք, սորվեր էք:
You do not know your lesson.	Դասերնիդ չէք գիտեր:
You have not learned your lesson.	Դասերնիդ չէք սորված:
You cannot say your lesson.	Դասերնիդ չէք կրնար ըսել:
Can you say your lesson?	Դասերնիդ կրնա՞ք գրուցել:
I cannot say it yet.	Դեռ չեմ կրնար գրուցել:
I can say it.	Կրնամ գրուցել:
I think I can.	Կարծեմ կրնամ:

I don't think I can.	Չեմ կարծեր որ կարենամ :
I cannot say it perfectly.	Չեմ կրնար անսխալ զրուցել :
Why did you not learn your lesson?	Ինչու համար դասերնիդ չէք սորված :
I forgot to learn it.	Սորվելու մոռցայ :
I learned it last night.	Երեկ իրիկուն սորվեցայ :
I could say it yesterday	Երեկ գիտէի :
It is too difficult.	Շատ դժուար է :
I could not learn it.	Չկրցայ սորվիլ :
I have n't had time to learn it.	Սորվելու ժամանակ չունեցայ :
Learn it again.	Նորէն սորվեցէք :
I shall get it perfectly by to-morrow.	Վաղը անսխալ կը գիտնամ :

THE SAME. ՆՈՅՆ.

Have you done all your tasks?	Բոլոր շարադրութիւններդ պատրաստ են:
My history is not finished.	Պատմութեան շարադրութիւնս դեռ լմընցած չէ :
Have you finished your map?	Աշխարհացոյցդ լմընցուցի՞ր :
Not quite.	Բոլորովին չլմընցուցի :
Make haste, the master will be here presently.	Շուտ ըրէ, քիչ ատենէն դասատուն պիտի գայ :

I shall have finished before he comes.	Ինքը չեկած կը լմընցընեմ :
Let him come, I am ready now.	Թող գայ, հիմա պատրաստ եմ :
Have you studied your geography?	Աշխարհագրութիւնդ սորվեցա՞ր, կարդացի՞ր :
I know it perfectly well.	Ջուրի պէս գիտեմ :
If you don't know your geometry, you will have a punishment.	Թէոր երկրաչափութիւննիդ չգիտնաք, պատիժ պիտի ունուք :
The lesson of algebra is very difficult.	Հանրահաշուին դասը շատ դժուար է :
If you don't learn it you will be kept in.	Թէոր չսորվիք, դուրս պիտի չելլէք, տունը պիտի մնաք:
The master is pretty well satisfied with me.	Վարժապետը ինծմէ բաւական գոհ է :
hope to be the first pupil of my class.	Կը յուսամ որ դասիս մէջ ամենէն քաջն ըլլամ :

IN THE SCHOOL. — ԴԱՍԱՏԱՆ ՄԷՋ.

Where shall I sit?	Ո՞ւր պիտի նստիմ :
Where am I to sit?	Ո՞ւր նստիմ :
Sit by me.	Քովս նստեցէք :
Sit upon the bench.	Նստարանին վրայ նստեցէք :

Sit a little higher up.	Քիչ մը վեր նստեցէք:
Sit a little lower down.	Քիչ մը վար նստեցէք:
Sit further.	Քիչ մը հեռու' անդին նստեցէք:
Go and sit down in your place.	Գնացէք տեղերնիդ նստեցէք:
Do not make a noise.	Աղմուկ մի հանէք:
Don't make such a noise.	Այնչափ շշնկոց մի հանէք:
Do not shake the table.	Գրասեղանը մի շարժեր:
Why do you shake the table?	Գրասեղանն ինչո՞ւ կերերցընէք:
Lend me your pen.	Քիչ մը գրիչնիդ տուէք:
Lend me your penknife	Քիչ մը գմելինիդ շնորհք ըրէք:
I have lost my book.	Գիրքս կորսնցուցեր եմ:
I cannot find my copy-book.	Տետրակս չեմ գտներ:
Where did you leave it?	Ո՞ւր թողուցիք:
I left it in my desk.	Գրակալիս մէջը թողեր էի:
Here it is.	Ահաւասիկ: — Ահա հոս է:
It is on the table.	Գրասեղանին վերայ է:
Go and fetch it.	Գնա առ: — Գնացէք առէք:
Have you it?	Առի՞ք: — Գտա՞ք: — Ձեր քո՞վն է:

Look for it.	Փնտռեցէք :
I have found it.	Գտայ :
Where was it?	Ո՞ւր էր :
It was under the bench.	Նստարանին տակն էր

MAKING A PEN. — ԳՐԻՉ ԿՏՐԵԼ.

Can you lend me your penknife?	Զմելինիդ կրնա՞ք քիչ մը ինծի շնորհք ընել :
Will you be so good as to lend me your penknife?	Կրնա՞ք քիչ մը զմելինիդ ինծի տալ :
What for? — What do you want it for?	Ի՞նչ պիտի ընէք :
What do you want to do with it?	Անով ի՞նչ պիտի ընէք :
I want it to make a pen.	Գրիչ մը պիտի կտրեմ :
I want to mend a pen.	Գրիչ պիտի կտրէի :
Take this steel-pen.	Սա երկաթէ գրիչն առէք :
I prefer a quill.	Փետուր գրիչն աւելի կը սիրեմ :
My pen is worth nothing.	Գրիչս գէշցեր է :
I want to mend my pen again.	Նորէն կուզէի կտրել :
It wants mending again.	Գրիչս նորէն կտրելու է :
Why don't you use your penknife?	Ինչո՞ւ համար զմելինդ չես գործածեր :

It does not cut.	Չկտրեր։
It is blunt.	Գուլցած է, բթացեր է։
It has no edge.	Բերանը գուլցեր՝ աւրուեր է։
It wants sharpening.	Սրել տալու է։
I cannot make use of mine.	Իմինս չեմ կրնար գործածել։
It is entirely spoilt.	Բոլորովին աւրուած է։

THE SAME. — ՆՈՅՆ.

Shall I mend your pen for you?	Կուզէ՞ք որ գրիչնիդ կտրեմ։
Thank you.	Շատ շնորհակալ կըլլամ։
If it is not too much trouble for you.	Թէոր ձեզի շատ նեղութիւն չէ։
No trouble at all.	Նեղութեան բան չկայ։
Will you have it hard or soft?	Պի՞նդ կուզէք թէ կակուղ։
Do you like it hard or soft?	Պի՞նդ կը սիրէք թէ կակուղ։
I like it hard.	Պինդ կը սիրեմ։
I do not like it quite so hard.	Այնչափ պինդ չեմ սիրեր։
Here it is. Try it.	Ահաւասիկ. փորձեցէք։
How do you like it?	Ի՞նչպէս է։
It is rather too thick.	Քիչ մը շատ հաստ է։
It is too fine.	Շատ բարակ է։
It is not slit enough.	Ձեղքը բաւական բաց չէ։

The slit is rather too long.	Ճեղքը քիչ մը շատ բացուած է:
Try it again.	Նորէն փորձեցէք:
It is excellent.	Սքանչելի է:
I am very much obliged to you.	Մեծապէս շնորհակալ եմ ձեզի:

TO WRITE A LETTER. — ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

Have you any letter-paper?	Նամակի թուղթ ունի՞ք:
I have a whole quire.	Ամբողջ ձեռք մը՝ տրցակ մը ունիմ:
I have just bought a ream.	Դեռ նոր պրակ մը գնեցի:
Do you want any?	Ձեզի հարկաւո՞ր է:
Oblige me by lending me a sheet.	Ինծի թերթ մը շնորհք ընէիք:
I have a letter to write this evening.	Այս իրիկուն նամակ մը պիտի գրեմ:
Is it for the post?	Թղթատարո՞վ պիտի խրկէք: — Թղթատո՞ւն պիտի ձգէք:
Yes. It must go to-day.	Այո. պէտք է որ այսօր երթայ:
You have no time to spare, for it is very late already.	Կորսնցընելու ժամանակ չունիք, վասն զի արդէն շատ ուշ է:
I shall not be long.	Շատ չերթար, հիմա կը լմըննայ:

What day of the month is this? — What day of the month is it? — What is the day of the month? — What day of the month is it to-day?	Ամսոյն քանի՞ն է: — Այսօր ամսոյն քանի՞ն է:
To-day is the first, the second, the third, the fourth...	Այսօր ամսոյն մէկն է, երկուքն է, երեքն է, չորսն է...:
I am going to fold my letter.	Նամակս պիտի ծալեմ:
Give me an envelope.	Նամակի պատրուակ մը տուէք:
Now, I have only the address to write.	Երեսագիրը՝ հասցէն միայն մնաց գրելու:
The letter is not sealed.	Նամակը կնքած չէ:
There is no sealing wax.	Կնքամոմ չկայ:
Bring me a wafer.	Ինծի նշխարք մը բեր:
I cannot find my seal.	Կնիքս չեմ գտներ:
What is become of my seal?	Կնիքս ի՞նչ եղաւ:
What have I done with the seal?	Կնիքն ի՞նչ ըրի:
I have found it.	Գտայ:
I have it.	Քովս է:
Now I have done.	Հիմա ալ լմընցուցի:
Carry this letter to the post-office.	Սա նամակը թղթատունը տար:

Pay the postage of it.	Ճամբու ծախքն ալ վճարէ:
Have you paid the postage of my letter.	Թուղթս փրկանաւորեցի՞ր:
How much have you paid.	Ի՞նչ վճարեցիր:
Are there any letters for me.	Ինծի նամակ կա՞յ:
Is the post come in?	Թղթաբերն հասա՞ւ:
What days does the post arrive here?	Ո՞ր օրերը թղթաբերն հոս կը հասնի:
I should have a letter at the post-office.	Թղթատան մէջ մնայուն նամակ մը պէտի ունենամ:
Where is the post office?	Թղթատունն ո՞ւր է:
Is it far?	Ասկէց հեռո՞ւ է:
Will you shew me the way.	Կրնա՞ք ինծի ճամբան ցուցընել:

MARKETING. — ԳՆԵԼ.

You must go to market.	Պէտք է որ վաճառանոց՝ շուկան երթաք:
See how ducks and fowls sell to-day.	Տես թէ բադին ու վառեկին ինչ կուգեն:
Try to get a couple of nice ones.	Նայէ որ երկու հատ աղէկ գտնաս:
Do you want any eggs to-day?	Այսօր ձեզի հաւկիթ պէ՞տք է:
Yes. Buy some eggs, and some butter.	Այո. հաւկիթ ու կարագ ալ գնէ:

How many pounds of butter?	Քանի՞ լիտր կարագ առնեմ :
Take three pounds, if it be good.	Թէոր աղէկ է, երեք լիտր ա՛ռ :
As you go to market, call at the butcher's.	Վաճառանոցն որ երթաս, մսավաճառին հանդիպէ :
What meat shall I order to-day?	Այսօրուան համար ի՞նչ միս ապսպրեմ :
Let him send a round of beef to salt.	Թող աղելու համար եզի մսան (պուտ) մը խրկէ :
Two or three ribs of beef, and a leg of mutton.	Եզան երկու երեք կող, ու ոչխարի մէկ զիստ մը :
A breast, or a loin of veal, and a quarter of lamb.	Երբուծ մը, կամ հորթու կոնակ եւ գառնուկի քառորդ մը:
Four cutlets of mutton and a shoulder.	Չորս հատ ոչխարի պառուսկ (գապուրղա), եւ մէկ ուս :
A calf's head, and a fillet of veal.	Գլուխ մը, եւ հորթու մսան մը :
A neck of mutton.	Ոչխարի վիզ մը :
Ask him if he has good veal cutlets.	Հարցուր թէ հորթու լաւ պառակներ ունի՞ :
If he has none, get them elsewhere.	Չունի նէ, ուրիշ տեղէ ա՛ռ :
See if he has a nice tongue.	Նայէ թէ եզան լաւ լեզու մը ունի՞ :
Let him send it directly	Թող ասիկայ շուտով ղրկէ :
Tell him to send the bill with it.	Ըսէ որ հաշիւն ալ մէկտեղ ղրկէ :

ORDERS FOR DINNER.	**ՀՐԱՄԱՆ ՃԱՇԻ.**
What will you have for your dinner to-day?	Այսօրուան ճաշին ինչ կերակուր կուզէք:
Let us see.	Տեսնենք, նայինք:
What have we in the house?	Տունը ինչ ունինք:
We have a round of beef in salt.	Աղի մէջ եզան միս ունինք:
How long has it been in salt.	Ո՞րչափ ատենէ ի վեր աղի մէջ է:
A week to day.	Այսօր շաբաթ մը կըլլայ:
Do you think it is salted enough?	Կը կարծէք որ բաւական աղած ըլլայ:
I am afraid it is not salted through.	Վախեմ որ դեռ բոլորովին աղի չըլլայ:
We must keep it two or three days longer.	Դեռ երկու երեք օր թողլու է:
What joint have we to roast?	Խորովելու համար ինչ կտոր ունինք:
The butcher has sent in a leg of lamb.	Մսավաճառը գառան զիստ մը ղրկեր է:
Let us have it with beefsteaks, and salad	Անիկայ մեզի եփէ, հետը ալ պիֆթէք (եզան կասկարայ) եւ աղցան:
Shall I boil some greens, or spinage?	Կաղամբ եփել տամ թէ շոմին:

Boil some peas, and potatoes.	Ոլոռ ու գետնախնձոր եփել տուէք:
What pudding will you have?	Ի՞նչ պուտին կուզէք:
Make a gooseberry pudding, and a cherry pie.	Հաղարջի պուտին մը եւ կեռասով կարկանդակ մը շինեցէք:
At what time will you have your dinner?	Ժամը քանիին կուզէք ճաշել:
Let us have our dinner at six.	Վեցին ճաշենք:
Let the dinner be ready by six.	Թող ճաշը վեցին պատրաստ ըլլայ:

FISH. — ՁՈՒԿ.

Have you been to the fish-market?	Ձկնարանը գնացի՞ք:
I have just come from it.	Անկէց կուգամ:
Is there any fish?	Ձուկ կա՞յ:
There is very little fish to-day.	Այսօր խիստ քիչ ձուկ կայ:
There is hardly any fish.	Գրեթէ ձուկ չկայ:
There is plenty of fish to-day.	Այսօր շատ ձուկ կայ:
There is a full market.	Ձկնարանը լեփ լեցուն է:
What sort of fish is there?	Ի՞նչ տեսակ ձուկ կայ:
There are herrings and eels.	Տառեխ (րինկա) ու օձաձուկ կայ:

There is ray, gurnet, anchovy and good deal of sword-fish.	Տափաձուկ (փիսի), կարմրախայտ (պարպունիա), անձրուկ (խամսի) եւ շատ մը թրաձուկ (գըլըճ պալըղը) կար:
There are soles, turbots, and a great quantity of mackerel	Լեզուաձուկ (տիլ պալըղը) վահանաձուկ (գալգան) եւ բազմութիւն թիւնիկ ձկան (խուսքիւմրիւ) կար:
Have you bargained for the mackerel.	Թիւնիկին գինը հարցուցի՞ր:
How do they sell mackerel?	Թիւնիկը քանիո՞վ կը վաճառեն:
They sell it according to the size.	Խոշորութեանը համեմատ կը վաճառի:
There are three for a shilling.	Երեք հատը մէկ շիլինի կը ծախեն:
Is there any shell-fish?	Խեցեմորթ ալ կա՞յ:
There are shrimps, prawns, crabs, and a few lobsters.	Կտին (քարագ), ծրկնականջ (միտիա), խեչեփառ (չաղանօզ) եւ քանի մը խեցգետին (ըստագօս) կայ.
Get two shillings worth of mackerel.	Երկու շիլինի թիւնիկ առ:
See that there are some with soft roes, and some with hard roes.	Նայէ որ մէջերնին կաթոտ ու հաւկթոտ ալ ըլլայ:
Bring a dozen of crabs, if they are very fresh.	Թէոր խեչափառները թարմ են, տասներկու հատ ալ անկէ բեր:

Ask the price of soles. — Bargain for the soles.	Լեզուաձկան գինն հարցուր :
If they are not too dear, buy a pair of a good size.	Թէոր շատ սուղ չեն, երկու հատ առ չափաւոր մեծութեամբ :

THE WATCH. — ԺԱՄԱՑՈՅՑ.

Do you know what o'clock it is?	Գիտէք ժամը քանի է:
I don't know exactly.	Ճիշդ չեմ գիտեր :
I cannot tell you exactly.	Ճիշդ չեմ կրնար ձեզի ըսել :
Look at your watch.	Ժամացոյցնիդ նայեցէք :
It is not wound.	Լարած չէ :
I forgot to wind it.	Լարել մոռցեր եմ :
It does not go.	Չքալեր :
It has stopped.	Կեցեր է :
What o'clock is it by yours?	Ձեր ժամացոյցը քանի՞ է :
Does yours go well?	Ձերինը աղէկ կերթա՞յ :
Mine does not go well.	Իմինս աղէկ չերթար :
It is not right.	Շիտակ չէ :
It is too fast.	Առաջ է :
It is too slow.	Ետ է :
It is out of order.	Աւրուած է :

It stops now and then.	Ատեն ատեն կը կենայ:
It goes too slow.	Ետ կը մնայ:
It goes too fast.	Առաջ կերթայ:
It loses a quarter of an hour every day.	Օրը քառորդ մը ետ կը մնայ:
It gains half an hour every day.	Ամեն օր կէս ժամ առաջ կերթայ:
Something is out of order in it.	Մէջը աւրուած բան մը պիտի ըլլայ:
Something is broken in it.	Մէջը կոտրած բան մը կայ:
The main spring is broken.	Մեծ զսպանակը կոտրեր է:
I think the chain is broken.	Կարծեմ որ շղթան կոտրած է:
Have it mended.	Շինել տուէք:
You must have it mended.	Շինել՝ նորոգել տալու է:
I am going to send it to the watch-maker.	Ժամագործին պիտի ղրկեմ:
You will do very well.	Շատ աղէկ կընէք:

MORNING. — ԱՌԱՒՕՏ.

You are up !	Վերջապէս ելաք: — Ի՞նչ, ելե՞ր էք:
You are up already !	Այս ինչ է, ելեր էք:
I have been up this hour.	Ժամ մըն է որ ելեր եմ:
You got up very early.	Շատ կանուխ ելեր էք:
I commonly rise early.	Սովորաբար կանուխ կելլեմ:

It is a very good habit.	Շատ լաւ սովորութիւն է։
It is very good for the health.	Առողջութեան համար շատ աղէկ է։
How did you sleep last night?	Այս գիշեր ինչպէս քուն եղաք։
How have you slept?	Ի՞նչպէս քնացաք։
Did you sleep well?	Աղէկ քնացա՞ք։
Very well; I never awoke all night.	Շատ աղէկ։ Գիշերը ամենեւին չարթընցայ։
I slept without waking.	Առանց արթննալու քնացայ։
And you, how did you rest?	Իսկ հրամանքնիդ ինչպէս, աղէկ քնացա՞ք։
Not very well.	Այնչափ աղէկ չէ։
I did not sleep very well.	Շատ աղէկ չքնացայ։
I could not sleep.	Չկրցայ քնանալ։
I could not sleep a wink.	Աչքս չկրցայ գոցել։
I never closed my eyes all night.	Բոլոր գիշերը՝ գիշերն ի բուն չկրցայ աչքս գոցել։

THE SAME. — ՆՈՅՆ.

This is a fine morning.	Այս ինչ գեղեցիկ առաւօտ է։
What a beautiful day!	Ի՜նչ գեղեցիկ օր։
Delightful.	Շատ գեղեցիկ։

What do you think of taking a little walk?	Ի՞նչ կըսէք, ելլենք քիչ մը ժուռ գանենք:
Shall we have time before breakfast?	Նախաճաշէն առաջ բաւական ժամանակ կունենանք:
We have plenty of time	Բաւական ժամանակ ունինք:
They won't breakfast this hour.	Նախաճաշկին դեռ ամբողջ ժամ մը կայ:
We have full an hour before us.	Ամբողջ ժամ մը ունինք:
Well, let us go for a little airing.	Անանկ է նէ երթանք քիչ մը օդ առնենք:
It will sharpen our appetite.	Անով ախորժակնիս ալ կը բացուի:
The walk will give us an appetite. — The walk will give an edge to our appetite.	Պտըտելով ախորժակնիս ալ կը բացուի:

EVENING. — ԻՐԻԿՈՒՆ.

It begins to grow late.	Իրիկուն եղաւ: — Ատենն ուշ է:
It is almost time to go to bed.	Պառկելու ատենը մօտեցաւ:
Mr. A*** is not come home yet.	Պ. Ա***. դեռ դրսէն չեկաւ, տուն չդարձաւ:
I don't think he will be long.	Չեմ կարծեր որ շատ ուշանայ:
I think he will not be long.	Կարծեմ շատ չուշանար:

I dare say he will not be long.	Գրեթէ ստոյգ գիտեմ որ շատ չուշանար կուգայ:
This is about his time.	Գրեթէ իր ժամանակն է:
He generally keeps good hours.	Սովորաբար կանուխ տուն կը դառնայ:
I hear a knock.	Դուռը կը զարնեն:
It is probably he who knocks.	Թերեւս ինքն է զարնողը:
Go and see.	Գնա նայէ:
Just so. It is he.	Իրաւ ինքն է եղեր: — Ինքն է:
I hope I have not made you wait.	Յուսամ որ զձեզ չսպասեցուցի:
Not in the least. It is but ten o'clock.	Ամենեւին: Դեռ ժամը տասն է:
We never go to bed before half past ten.	Ոչ երբէք տասնուկէսէն առաջ կը պառկինք:
I am come just in time.	Ժամանակին հասայ:

THE SAME. ՆՈՅՆ.

How did you find your walk to-night?	Այս իրիկուն աղէկ ժուռ եկա՞ք: — Այս իրիկուան զբօսանքնիդ ինչպէս էր:
Delightful.—Very pleasant.	Շատ զուարճալի:
It is a charming evening.	Շատ գեղեցիկ իրիկուն է:

Are you not tired?	Չյոգնեցա՞ք :
Not much. — A little.	Շատ չէ : — Քիչ մը :
Won't you rest yourself a little?	Չե՞ք ուզեր քիչ մը հանգչիլ :
No, thank you. I shall go to bed.	Շատ շնորհակալ եմ : , Պիտի երթամ պառկիմ :
It is not late.	Ուշ չէ :
It is not late yet.	Դեռ կանուխ է :
It is time to go to bed.	Պառկելու ատեն է :
I do not like to go to bed late.	Ուշ պառկիլ չեմ սիրեր :
I like to go to bed in good time.	Կանուխ պառկիլ կը սիրեմ :
I wish you a good night	Գիշեր բարի :
I wish you the same.	Ձեզ լոյս բարի :
I wish you a good night's rest.	Անուշ քուն :

WINTER. — ՁՄԵՌ.

It is winter.	Ահա ձմեռ մտանք :
Winter is come.	Ձմեռն եկաւ հասաւ :
I wish the winter were over already.	Ձմեռուան շուտով անցնելուն շատ կը փափաքիմ : — Ձմեռն ալ մէյմը անցնէր :
The winter will soon be over.	Քիչ ատենէն ձմեռը կանցնի :

As for me, I like winter as well as summer.	Ինծի համար ձմեռ ամառ նոյն է։
I find winter as agreeable as summer.	Ձմեռն ալ ամառուան պէս ախորժելի է ինծի։
You are the only one of that opinion.	Հրամանքնիդ միայն էք այս կարծիքէն։
How can any one like winter?	Ի՞նչպէս կարելի է որ մարդ ձմեռը սիրէ։
The days are so short, and the cold is so insupportable!	Օրերը խիստ կարճ են, եւ ցուրտը անտանելի է։
One is not comfortable but by the fire-side.	Կրակին քով կենալէն ուրիշ ճար չկայ։
Can you skait?	Սառի վերայ սահիլ գիտէ՞ք։
Have you skaited this year?	Այս տարի սառի վերայ սահեցա՞ք։
Will there be any skaiting to-day?	Այսօր կարելի՞ է սառի վերայ սահիլ։
The ice does not bear.	Սառոյցը չվերցըներ։
Do you remember the year of the hard frost?	Այն սաստիկ ցուրտ ըրած տարին կը յիշէ՞ք։
Yes; it was excessively cold?	Այո, շատ սաստիկ ցուրտ էր։
The frost lasted two months and a half.	Սառոյցը երկուք ու կէս ամիս տեւեց։

SPRING. — ԳԱՐՈՒՆ.

We have had no winter this year.	Այս տարի ձմեռ չունեցանք:
It is spring weather.	Գարնանային օդեր են:
To-day is a summers' day.	Այսօրուան օդը ամառուան օդ է:
I longed for the spring.	Շատ կը բաղձայի որ գարունը գայ:
It is the season I like best.	Այս եղանակն ամենէն աւելի կը սիրեմ:
It is the most pleasant of all seasons.	Եղանակաց մէջ ամենէն ախորժելին է:
Every thing smiles in nature.	Բոլոր բնութիւնը կը ծիծաղի:
Every thing seems to revive.	Ամէն բան կենդանացած կերեւայ:
All the trees are white with bloom.	Ծառերը ծաղկըներով զարդարուեր են:
If the weather prove favourable, there will be plenty of fruit this year.	Թէոր օդն աղէկ երթայ, այս տարի շատ պտուղ պիտի ըլլայ:
All the stone-fruits have failed.	Կուտ ունեցող պտուղները ամէնն ալ փճացան:
The season is very forward.	Գարունը շատ առաջ գացած է:
The season is very backward.	Գարունը շատ ետեւ մնաց, ուշ մնաց:
Every thing is backward. — Nothing is forward.	Ամէն բան ետեւ մնաց, ուշ մնաց:

SUMMER.	ԱՄԱՌ.
I fear we shall have a very hot summer.	Վախեմ թէ այս տարուան ամառը շատ տաք պիտի ըլլայ :
We have had no summer this year.	Այս տարի ամառ չունեցանք :
We were obliged to have fires even in the month of July.	Յուլիս ամսոյն մէջ դեռ կրակ կը վառէինք :
One would think that the order of the seasons is inverted.	Կարծես թէ բոլոր եղանակաց կարգն աւրուեր է :
The meadows are mowed already.	Հիմակուրնէ դաշտերուն խոտերը կտրեցին :
Hay-making has begun.	Խոտերը սկսան չորցընել :
There will be a great deal of hay.	Այս տարի շատ խոտ պիտի ըլլայ :
Look at those ears of corn, how large and full they are!	Սա հասկերուն նայեցէք. ինչպէս խոշոր ու լեցուն են :
They have begun the harvest.	Հունձը սկսեր է :
The crop will be plentiful.	Հունձքն առատ պիտի ըլլայ :
There is corn cut already.	Տեղ տեղ ցորենը հնձեր են :
All the corn will be housed next week.	Գալ շաբաթ բոլոր ցորենները ցորենոց կը մտնեն :
We have a very warm summer.	Այս տարուան ամառը շատ տաք է :

No wonder it is so warm, we are in the dog-days.	Այսչափ տաք ընելը զարմանք չէ, վասն զի շնիկ աստեղ օ-րերն ենք :
This breeze does good	Սա անուշ հովը շատ աղէկ է :
Let us go and bathe in the river.	Երթանք գետը լուա-ցուինք :
Will you take a sea bath?	Ծովու բաղնիք առնել կուզէ՞ք : — Ծով մտնել կուզէ՞ք :
No, it is too early.	Չէ, դեռ շատ կա-նուխ է :
One must not bathe immediately after eating.	Կերակրէն ետքը մէ-կէն ջուր մտնելը գէշ է :

AUTUMN. — ԱՇՈՒՆ.

Summer is over.	Ամառն ալ անցաւ :
We shall only have a few fine days now and then.	Ասկէց վերջը երբեմն երբեմն հազիւ մէկ քանի գեղեցիկ օրեր պիտի ունենանք :
The leaves begin to fall.	Տերեւները սկսան թա-փիլ :
The mornings begin to be cold.	Առաւօտները սկսաւ ցուրտ ընել :
We have had a fire al-ready.	Արդէն սկսանք կրակ վառել :
Fire begins to be com-fortable.	Կրակը սկսաւ սիր-ուիլ :
Fire begins to be sea-sonable.	Կրակ վառելուատենն է :

Fire is a good companion.	Կրակը աղէկ ընկեր մըն է:
The days are shortened very much. — The days are much shortened.	Օրերը շատ կարճըցան:
The evenings are long.	Իրիկուններըը երկընցան :
One cannot see at five o'clock.	Այ ժամը հինկին մութ է, բան չտեսնուիր:
It is hardly daylight at four in the evening.	Իրիկուան ժամը չորսին գրեթէ այ բան չտեսնուիր:
It is soon dark.	Ցուտ մը գիշերը վրայ կը հասնի :
Winter draws near.	Ձմեռը մօտեցաւ:
We shall have the shortest days in three weeks.	Երեք շաբաթէն օրերը վերջի աստիճանի պիտի կարճընան :
I wish it were Christmas already.	Ծնունդն ալ մէյ մը գար :
The days begin to lengthen.	Օրերն սկսան երկըննալ:

CHANGE OF MONEY. — ԴՐԱՄԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Have you any silver?	Ճերմակ ստակ ունի՞ք:
I want change for a sovereign.	Մէկ սթերլինի մանր ստակ կուզեմ :
Have you change for a sovereign?	Մէկ սթերլինի մանր ստակ ունի՞ք :

Can you change me a sovereign?	Ինծի կրնա՞ք մէկ սթերլին մը աւրել, փոխել :
Can you give me change for a sovereign?	Կրնա՞ք ինծի մէկ սթերլինի մանր ստակ տալ :
I don't think I can.	Չեմ կարծեր :
I have no change about me.	Վրաս ստակ չունիմ :
I have not silver enough.	Բաւական արծաթ չունիմ :
Go and get it changed at the next shop.	Գնացէք քովի խանութը փոխել տուէք :
I am going to try.	Երթամ նայիմ :
Have you got it changed?	Փոխեցի՞ք :
Yes, here is the change.	Այո, ահա ստակը :
They are all shillings.	Ամէնն ալ շիլին են :
Are they all good?	Ամէնն ալ աղէ՞կ են :
I believe they are. You may examen them.	Կարծեմ թէ աղէկ են : Կրնաք փորձել:
Is this shilling a good one?	Այս շիլինն աղէ՞կ է :
This does not seem a good one.	Ասիկայ աղէկ չերեւար :
It does not look well.	Անիկայ լաւ չերեւար :
Let me look at it.	Մէյմը նայիմ :
Sound it.	Գետինը զարկէք :
It does not sound well.	Աղէկ ձայն չունի : — Ձայնը աղէկ չէ :
I think it is a bad one.	Կարծեմ թէ գէշ է :
I think it is good for nothing.	Կարծեմ թէ բանի չգար :

Take it back. I don't think it is good.	Ետ տար: Ձեմ կարծեր թէ աղէկ ըլլայ:
There is a good deal of base coin about.	Սուտ ստակ շատ կը պտըտի:

INQUIRING THE WAY. — ՃԱՄԲԱՅ ՀԱՐՑԸՆԵԼ.

Pray which is the way to go to...?	Կաղաչեմ, այս ինչ տեղն երթալու ճամբան որն է:
Which is the shortest way to go to...?	Այս ինչ տեղն երթալու կարճագոյն ճամբան որն է:
Is this the way to...?	Սա տեղն երթալու ճամբան ա՞յս է: — Այս ինչ տեղն ասկէ՞ց կերթըցուի:
Can you tell me whether this road leads to...?	Կրնա՞ք ինծի ըսել թէ արդեօք այս ճամբան այս ինչ տեղը կը հանէ՞:
Does not this road lead to...?	Այս ճամբան այս ինչ տեղը չի՞տանիր:
Is not this the way to...?	Սա տեղն երթալու ճամբան այս չէ՞:
Whither does this road lead?	Այս ճամբան ո՞ւր կը հանէ:
Is this the right way to go to...?	Սա տեղին ճամբան ա՞յս է:
Am I not in the road to...?	Այս ինչ տեղն երթալու ճամբուն մէջ չե՞մ:

You are in the right way.	Շիտակ ճամբուն մէջն էք:
You are not in the right way.	Շիտակ ճամբուն մէջ չէք:
You are quite out of the way.	Բոլորովին ճամբէն դուրս էք:

THE SAME. ՆՈՅՆ.

Which way am I to go?	Ո՞ր կողմէն պէտք է որ երթամ:
Go straight before you.	Շիտակ առաջ գնացէք:
You will find a lane on your left hand.	Ձախ թեւի վերայ նրբափողոց մը կը գտնէք:
Take that lane, it will carry you to the main road.	Այն նրբափողոցը բռնեցէք, զձեզ մեծ ճամբուն վերայ կը հանէ:
You cannot mistake your way.	Ճամբան ալ չէք կորսընցըներ:
How far may it be from here?	Ասկէց ո՞րչափ հեռու կրնայ ըլլալ:
One mile, or thereabouts.	Մղոն մը, կամ մէկ մղոնի մօտ:
About a mile.	Մէկ մղոնի չափ:
It may be one mile.	Կրնայ մղոն մը ըլլալ:
It is not more than one mile.	Մղոնէ մը աւելի չկայ:
It is hardly one mile.	Հազիւ մղոն մը կայ:

It is a full league from here.	Ամբողջ փարսախ մը կայ: — Ասկէց ամբողջ փարսախ մը հեռու է:
It is a little more than a league.	Մէկ փարսախէն քիչ մը աւելի է:
It is little less than three leagues.	Երեք փարսախէն պակաս չէ:

INQUIRING AFTER A PERSON. — ՄԱՐԴ ՀԱՐՑՆԵԼ.

Do you know Mr.** in this place?	Հոս Պ*** կը ճանաչէ՞ք:
Do you know a person of the name of**?	Այս անուն մէկը կը ճանչնա՞ք:
Is there not a person of the name of** living in this town?	Այս քաղաքիս մէջ սա անուամբ մարդ մը չի՞ բնակիր:
Is there not living about here a person who is named **?	Այս կողմերս Գ*** անունով մարդ մը կը նստի՞:
I don't know any body of that name.	Այս անուամբ մարդ չեմ ճանչնար:
I believe there is.	Կարծեմ թէ կը նստի:
Yes. There is a person of that name.	Հրամեր էք: Այս անուամբ մէկը կայ:
Do you know him?	Զինքը կը ճանաչէ՞ք:
I know him perfectly well.	Շատ աղէկ կը ճանաչեմ:

Can you tell me where he lives?	Կրնա՞ք ինծի ըսել թէ ո՞ւր կը բնակի :
Where does he live?	Ո՞ւր կը նստի :
Whereabouts does he live?	Ո՞ր կողմը կը բնակի:
He lives near the fish-market.	Ձկնարանին մօտ կը բնակի:
He lives in such a street.	Սա փողոցը կը բնակի :
Is it far from here?	Ասկէց հեռո՞ւ է:
It is but two steps from here.	Ասկէց մէկ երկու քայլ հեռու է:
It is but a very little way.	Հոս շատ մօտ է :
Can you direct me to his house?	Իր տունը կրնա՞ք ինծի ցուցընել :
I am going that way myself.	Ես ալ այն կողմը կերթամ :
I will show you where he lives.	Բնակած տեղը ձեզի ցուցընեմ :
I will show you his house.	Իր տունը ձեզի ցուցընեմ :

NEEDLE-WORK. — ԿԱՐ ԿԱՐԵԼ.

I want a needle.	Ինծի ասեղ մը հարկաւոր է :
What are you going to sew.	Ի՞նչ պիտի կարէք :
I am going to mend my gown.	Շրջազգեստս պիտի կարկտեմ :
This needle is too large.	Այս ասեղը շատ հաստ է :

Here is another.	Ահա ուրիշ մը :
This is too small.	Ասիկայ շատ բարակ է :
Give me some thread, some silk, some cotton, some worsted.	Ինծի դերձան, ապրիշում, բամբակ, մանած բուրդ տուէք :
What colour do you want?	Ի՞նչ գոյն կուզէք :
I want some red.	Կարմիր կուզեմ :
What is it for?	Ի՞նչ բանի համար :
To stitch my collar.	Օձիքս կարելու համար :
To mark my linen.	Ճերմակեղէնիս նշան դնելու համար :
Is this the colour you want?	Ուզած գոյներնիդ ա՞յս է :
This colour will not do.	Այս գոյնը յարմար չէ:
It is too deep.	Շատ մութ է:
It is too light.	Շատ բաց է :
It will do very well.	Շատ յարմար է :
Have you finished your apron?	Գոգնոցդ լմնցուցի՞ր :
Not quite.	Բոլորովին չէ:
I have had something else to do.	Ուրիշ բան ալ ունէի ընելու :
What have you had to do?	Ի՞նչ ունէիր ընելու :
I have been hemming my handkerchief.	Թաշկինակս խծպեցի’ լփեցի :
Then I had my gloves to sew.	Ետքը ձեռնոցներս կարեցի :
After that I darned my muslin dress.	Անկէց ետքը բեհեզեայ շրջազգեստս կարկտեցի :

Indeed, you have been very busy.	Իրաւցընէ, շատ զբաղած էք եղեր :

FIRE. — ԿՐԱԿ.

The fire is very low.	Կրակն անցնելու վերայ է :
Here is a poor fire. — Here is a very bad fire.	Այս ինչ ողորմելի կրակ է :
You have not taken care of the fire.	Կրակը չես հոգացած:
You have not kept the fire up.	Կրակը վառ չես պահած :
You have let the fire go down.	Թողեր ես որ կրակն անցնի :
You have let the fire go out.	Թող տուեր էք որ կրակը մարի :
It is not quite out.	Դեռ բոլորովին մարած չէ :
It must be lighted up again.	Պէտք է նորէն վառել:
Come and make up the fire.	Եկուր կրակը շտկէ :
What are you looking for?	Ի՞նչ կը փնտռէք :
I am looking for the tongs.	Ունելիքը կը փընտռեմ :
Here they are in the corner.	Անկիւնն է, խորշին մէջն է :
Where are the bellows?	Փուքը ո՞ւր է :
Go and fetch the bellows.	Գնա փուքը բեր :
Blow the fire.	Կրակը փչէ :

Blow it gently.	Կամաց փչէ :
Do not blow so hard.	Այնչափ ուժով մի փչեր :
Put a few shavings on the top.	Վրան քանի մը տաշեղ դիր :
Now put on two or three pieces of wood.	Հիմա երկու երեք կտոր փայտ դիր :
It will soon draw up.	Հիմա կը բռնկի :

THE SAME. — ՆՈՅՆ.

Are there any coals in the scuttle?	Դուլին մէջ ածուխ կա՞յ :
Take the shovel and put on some coals.	Կրակի թիակն առ ու քիչ մը ածուխ դիր :
Do not put on too many at a time.	Մէկէն շատ մի դներ:
If you put on too many coals, you will put out the fire.	Թէ որ խիստ շատ ածուխ դնես, կրակը կը մարես :
You have almost smothered the fire.	Գրեթէ կրակը մարեցիր :
Raise it with the poker, it will give it a little air.	Ունելիքով քիչ մը վեր վերցուր որ օդ առնու :
Leave the poker in, and the fire will soon burn up.	Ունելիքը մէջը թող, մէկէն կը բռնկի կրակը :
It begins to blaze.	Սկսաւ բորբոքիլ :
Now the fire is very good.	Հիմա այլ կրակին խօսք չկայ :

You have made it up very well.	Շատ աղէկ շտկեցիք :
What a smoke! Open the window, the door.	Այս ինչ մուխ է : Պատուհանը, դուռը բացէք :
Oh! what a bad smell.	Ո՛հ, ինչ գէշ հոտ է :

FRUIT. — ՊՏՈՒՂՔ.

Should you like to take a turn in the garden?	Կուզէ՞ք պարտիզին մէջ պտոյտ մը ընել:
Willingly.	Շատ սիրով :
I am very fond of gardens.	Պարտէզ շատ կը սիրեմ :
The trees have done blooming.	Ծառերը ծաղկեցան ծլեցան :
There is a great show of plums this year.	Սալորի ծառերն այս տարի շատ յոյս կուտան :
The plums begin to set.	Սալորները սկսան գըլուխ կապել՝ ձեւանալ :
They are set.	Սալորները ձեւացած են :
How thick they hang!	Ո՞րչափ շատ են : — Այն ո՛րչափ սալոր է:
They are a great deal too thick.	Շատ խիտ են :
There are a great deal too many.	Չափէ դուրս շատ են :
They want thinning.	Պէտք է զանոնք նօսրացընել :

There will be very few apricots this year.	Այս տարի խիստ քիչ ծիրան պիտի ըլլայ։
They have generally failed.	Ընդհանրապէս ամէն տեղ փճացան։
How tempting these peaches look!	Այս դեղձերն ինչ գեղեցիկ տեսք ունին։
You have plenty of nectarines.	Շատ լերկադեղձ ունիք։
This tree bears a great many every year.	Այս ծառն ամէն տարի շատ առատ կուտայ։
This tree is a great bearer.	Այս ծառը խիստ շատ պտուղ կուտայ։
Cherries and strawberries are now in their prime.	Կեռասին ու ելակին հիմա բուն ատենն է։
They will soon be over.	Քիչ ժամանակէն կանցնին։
These grapes are quite ripe.	Այս խաղողը բոլորովին հասած է։
I had some ripe a week ago.	Ութ օր կայ որ ես այլ հասած խաղող ունեցայ։
They are very early.	Շատ կանխահաս է։
This vine lies in a fine aspect.	Այս այգւոյն դիրքը շատ գեղեցիկ է։
How are the trees in your orchard?	Ձեր մրգաստանի ծառերն ինչպէս են։
They are loaded with fruit.	Վրանին լեցուն պտուղ է։

FLOWERS.	ԾԱՂԻԿՔ.
You have not seen my flowers.	Իմ ծաղկըներս չտեսաք :
Come and see my flowers.	Եկէք ծաղկըներս տեսէք :
They are beautiful.	Շատ փառաւոր են :
The garden begins to look pleasant.	Պարտէզը սկսաւ գեղեցիկ տեսք մը ունենալ :
The flowers come up apace.	Ծաղկըներն առատ են :
The crocuses have been in bloom some time.	Բաւական ժամանակէ ի վեր քրքումը ծաղկած է :
The daffodils will soon come out.	Քիչ ատենէն նարկիսը կը ծաղկի, նարկիսները կը բացուին :
Are your tulips blown?	Կակաչնիդ (լալէ) ծաղկեցա՞ն :
Yes. We shall see them presently.	Հրամեր էք. հիմա զանոնք ալ կը տեսնենք :
What a fine bed you have of them !	Այս ինչ փառաւոր կակաչի ածու ունիք :
The hyacinths are almost over.	Յակինթներն (զիւնպիւլ) ալ գրեթէ անցան :
What flower is this?	Այն ինչ ծաղիկ է :
What is the name of this flower?	Այս ծաղկին անունն ինչ է :
What a beautiful double walflower !	Ի՜նչ գեղեցիկ բարդ մանուշակ է :

Here is a fine double stock.	Ահա փառաւոր բարդ շահպրակ (շէհպօյ) մը։
Are you fond of pinks?	Մեխակ (գարէնֆիլ) կը սիրէ՞ք։
Yes. But I don't like the smell.	Հրամեր էք. բայց հոտը չեմ սիրեր։
Here are some pretty fine ones.	Ահա ասոնք շատ գեղեցիկ են։
You have not seen my ranunculuses.	Իմ հրանունկներս չտեսաք։
They are very beautiful.	Շատ գեղեցիկ են։
You have a very fine collection of flowers.	Ծաղիկներու փառաւոր հաւաքում մը ունիք։
Allow me to offer you a nosegay.	Եթէ հաճիք, ձեզի անոնցմէ փունջ մը ընծայեմ։
It is a beautiful nosegay.	Շատ սիրուն փունջ է։
You keep your garden very clean.	Պարտէզնիդ շատ մաքուր կը պահէք։
Your garden is kept in perfect order.	Պարտէզնիդ շատ լաւ կարգաւորուած՝ նայուած է։
Your gardener deserves praise.	Պարտիզպաննիդ գովեստի արժանի է։

VEGETABLES. — ԲԱՆՋԱՐԵՂԷՆՔ.

Now I must pay a visit to your kitchen garden.	Հիմա պէտք է որ ձեր բանջարանոցը տեսնելու երթամ։

How every thing grows!	Ի՛նչպէս ամէն բան կը ծլի կը ծաղկի ։
The rain has done a great deal of good.	Անձրեւը շատ օգուտ ըրաւ ։
We wanted it very much.	Շատ կարօտութիւն ունէինք ։
What a quantity of cabbages and cauliflowers!	Այս ո՛րչափ կաղամբ ու ընղակաղամբ է ։
We consume a great many in the family.	Մեր տունը ասոնցմէ շատ կուտենք ։
Here is a fine bed of asparagus.	Ահա ծնեբեկի գեղեցիկ տնկեր ։
I am very fond of them.	Ծնեբեկ շատ կը սիրեմ ։
I like artichokes nearly as well.	Կանկարն ալ նոյնչափ կը սիրեմ ։
These peas are in bloom already.	Ոլոռներն արդէն ծաղկեր են ։
I have some in pods in another place.	Ուրիշ տեղ ունիմ որ պատիճ ալ կապած են ։
Have you planted any kidney beans?	Լուբիա ալ տնկա՞ծ էք։
I have some out of the ground.	Ծլած լուբիա ունիմ ։
I have some up.	Շատ մըն ալ գետնէ վեր բարձրացած ունիմ ։
You will have some very early.	Վաղահաս լուբիա պիտի ունենանք ։
Here are garden beans in blossom.	Ահա ծաղկած բակլաներ ։
You will have plenty of them.	Խիստ շատ պիտի ունենանք ։

You will have a full crop.	Առատ բակլայ պիտի ժողվէք :

THE SAME. — ՆՈՅՆ.

What is that?	Այս ինչ է :
It is salsify.	Գոճմորու (սգօրչինա) են :
Further are carrots and spinage.	Քիչ մը անդին կան ստեպղին եւ շոմին :
What have you there?	Հոն ինչ ունիք :
They are Jerusalem artichokes.	Արջտակ(ճերմակ գետնախնձոր) են :
I had never seen any before.	Առաջ ամենեւին չէի տեսած :
Are these onions?	Սոխ են ասոնք :
No. They are leeks.	Չէ, պրաս են :
They are very much like onions.	Սոխի շատ կը նմանին :
I see you have all sorts of salad.	Կը նայիմ որ ամէն տեսակ աղցան ունիք :
Here is lettuce and cabbage-lettuce.	Ահա հազար (մարուլ) եւ ուռուցիկ հազար (թօփ սալաթա):
This is endive.	Ասիկայ եղրդակ է (րատիքիա):
I prefer it to lettuce.	Անիկայ ես աւելի կը սիրեմ քան թէ հազարը:
You have plenty of them.	Առատ ունիք :
I don't see any celery.	Լախուր (քէրէվիզ) չեմ տեսներ :

It is in another part of the garden.	Պարտէզին ուրիշ կողմըն է :
I think your garden is pretty well stocked.	Պարտէզնիդ աղէկ լեցուն կերեւայ :
You have plenty of every thing.	Ամէն բան առատ ունիք :

WALKING. — ԶԲՕՍԱՆՔ.

Shall we go and take a little walk?	Պիտի երթա՞նք պտոյտ մը ընելու :
With all my heart.	Բոլորով սրտիւ : — Ամենայն սիրով :
I must beg leave to go and take my stick.	Ներեցէք, երթամ գաւազանս առնում :
I will be with you in a minute.	Վայրկենէ մը կուգամ :
Now. I am ready to follow you.	Հիմա պատրաստ եմ ձեզի հետ գալու :
I am at your command.	Ահաւասիկ եկայ : — Ես պատրաստ եմ :
We will go when you please.	Երբոր ուզէք երթանք :
Which way shall we go?	Ո՞ր կողմէն պիտի երթանք :
Let us go into the country.	Գեղ երթանք :
I am afraid the roads are very dusty.	Վախեմ թէ ճամբան շատ փոշի կայ :

The rain has laid the dust a little.	Անձրեւը փոշին քիչ մը իջեցուց։
Let us go through the vineyards.	Այգիներուն մէջէն անցնինք։
It is a very pleasant walk.	Շատ զուարճալի զբօսանք է այս։
We shall be sheltered from the sun.	Արեւէ կը պաշտպանուինք, կը պատըսպարուինք։
Will you cross this field?	Այս արտին մէջէն կուզէ՞ք անցնիլ։
Is there a thoroughfare across this field?	Այս դաշտին մէջէն կրնա՞յ անցնուիլ։
Let us take this path.	Այս ճամբէն երթանք։
It is the nearest way to go home.	Տուն դառնալու համար ամենէն կարճն է։
It is not late.	Աւտենն ուշ չէ։
I want to be home in good time.	Կանուխկէկ տուն դառնալ կուզեմ։
We have only half an hour's walk.	Կէս ժամ միայն կը քշէ ճամբանիս։
We shall reach home in good time.	Կանուխ կը հասնինք։

RAIN. — ԱՆՁՐԵՒ.

What do you think of the weather?	Օդը ձեզի ՞նչպէս կերեւայ։
I think we shall have some rain.	Կարծեմ թէ անձրեւ պիտի գայ։
We shall have some rain before long.	Քիչ ատենէն անձրեւ պիտի գայ։

I think so too, the glass falls very much.	Ես ալ անանկ կարծեմ, վասն զի օդաչափը շատ վար է :
We may have some showers, for the sky gets cloudy.	Կրնայ ըլլալ որ յանկարծական տարափ մը գայ, վասն զի երկինքը մթընցաւ :
We are in great want of rain.	Անձրեւի շատ կարօտութիւն ունինք :
A little rain won't do any harm.	Քիչ մը անձրեւ գայ նէ զէշ չըլլար :
A little rain would do good to the gardens.	Քիչ մը անձրեւ գայ նէ, պարտէզներուն շատ աղէկ պիտի ըլլայ :
Don't you think it is very warm for the season?	Ձեզի ինչպէս կերեւայ, եղանակին նայելով օդը շատ տաք չէ՞ :
Yes. This is the warmest spring I can remember.	Հրամմեր էք : Ասանկ սաստիկ տաք գարուն չեմ տեսած :
The sun is as hot as in the middle of summer.	Արեւն այնպէս տաք է որ կարծես թէ ամառուան մէջտեղն ենք :
I am afraid we shall pay for it afterwards.	Վախեմ թէ վերջը պիտի տուժենք :
I fear we shall have cold weather after this.	Վախեմ թէ ետքը ցուրտ ընէ :
It is likely enough.	Շատ հաւանական է :

AFTER RAIN.	ԱՆՁՐԵՒԷՆ ԵՏՔԸ.
I have not been out since the rain.	Անձրեւէն ետքը դեռ դուրս չելայ :
Neither have I.	Ես ալ :
Let us go and see how things look abroad.	Երթանք տեսնենք, դուրսն ինչպէս է :
The country looks quite different.	Դաշտերը բոլորովին ուրիշ տեսք առեր են՝ փոխուեր են :
It is much more pleasant walking today.	Այսօր աւելի յարմար է քալելու :
The rain has laid the dust.	Անձրեւը փոշին իջեցուց :
The rain has made the weather cooler.	Անձրեւն օդը զովացուց :
It is not near so warm as it was.	Օդը առջինին պէս շատ տաք չէ :
What a difference from what it was yesterday!	Երեկուընէ այսօր ո՜րչափ տարբերութիւն կայ :
How fresh every thing looks !	Ի՜նչպէս ամէն բան զուարթ կերեւայ :
Every thing looks alive	Ամէն բան կենդանացած կերեւայ :
The grass seems quite green already.	Խոտերը կարծես թէ նորէն կանաչցեր են :
The rain has revived all the plants.	Անձրեւէն բոլոր բոյսերը կենդանացեր են :

Every thing shoots up, and grows visibly.	Ամէն բան զգալի կերպով կը ծլի կը ծաղկի :
The rain has done a great deal of good.	Անձրեւը շատ օգուտ ըրաւ :
A little more would do no harm.	Քիչ մը աւելի զարնէ՛ գէշ չէր ըլլար :

MEETING A FRIEND. — ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ԱՏԵՆ.

What! is it you?	Աս ինչ է, հրամանքնի՞դ էք :
Is it really you?	Դո՞ւք էք : Հրամանքնի՞դ էք :
No other. — Myself.	Ես եմ :
It is I in person.	Ես ինքն եմ :
You quite surprise me.	Իրաւցընէ զիս զարմացուցիք :
I did not expect to meet you here.	Ամենեւին չէի յուսար որ հոս ձեզի հանդիպիմ :
I am very glad to meet you.	Շատ ուրախ եմ որ ձեզի հանդիպեցայ :
I am very happy to see you.	Զձեզ տեսնելուս շատ ուրախ եմ :
When did you return?	Ե՞րբ դարձաք :
I came home last night.	Երեկ իրիկուն եկայ :
How did you come?	Ի՞նչպէս եկաք :
I came by the stage-coach.	Ճեպընթացով եկայ :
I came by the rail-way.	Երկաթուղիով եկայ :

I came by the post-chaise. — I came in the mail-coach.	Սուրհանդակով եկայ։
You came rather unexpectedly.	Քիչ մը յանկարծակի եղաւ ձեր գալը ։
Rather so.	Քիչ մը ։
I thought to stay all the summer.	Միտքս դրեր էի բոլոր ամառը հոն կենալ ։
What brought you back so soon?	Ինչո՞ւ այսպէս շուտ դարձաք ։
Some business requires my presence here.	Քանի մը գործքերու համար պէտք է որ հոս գտնուիմ ։
How did you like your journey?	Ճամբորդութիւննիդ աղէկ եղա՞ւ ։
I liked it very well.	Շատ զուարճալի էր ։
When shall I have the pleasure of seeing you at my house?	Իմ տունս ե՞րբ կը հրամէք ։
When will you come and dine with us?	Ե՞րբ կը հրամէք որ մէկտեղ ճաշենք ։
I don't know. I have a little business to do.	Չեմ գիտեր ։ Քանի մը գործք ունիմ լմընցընելու ։
I shall wait upon you some time to-morrow.	Վաղը ցորեկը զհրամանքնիդ տեսնելու պիտի գամ ։
We shall be very happy to see you.	Մեծապէս ուրախ կըլլանք թէոր տեսնենք զձեզ ։

FOURTH PART.

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ.

FAMILIAR DIALOGUES. — ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՐՈՅՑՔ.

GOING TO SCHOOL. — ԴՊՐՈՑ ԵՐԹԱԼՈՒ

Where are you running so fast?	Ասանկ շուտ ո՞ւր կը վազէք:
I am going to school. Did you not hear the bell?	Դպրատուն կերթամ: Զանգակը չլսեցի՞ք:
To be sure, I did. But why should we hurry? We shall be there soon enough.	Լսեցի: Բայց ի՞նչ հարկ կայ որ ասանկ աճապարենք: Բաւական կանուխ կը հասնինք:

One is not soon enough, when not in time.	Մարդ երբոր ճիշդ ատենին չհասնիր, բաւական կանուխ հասած չսեպուիր:
We have plenty of time. The bell has not ceased ringing above a minute.	Շատ ժամանակ ունինք: Զանգակը դեռ հիմա զարկաւ:
For that very reason, we should be there now.	Ահա անոր համար պէտք էր հիմա հոն հասած ըլլայինք:
At the worst, if we arrive a little too late, we shall only be scolded for it.	Թէոր քիչ մը ուշ հասնինք, շատ շատ յանդիմանութիւն մը պիտի լսենք:
Do you call that nothing? For my part I do not like to be scolded.	Ասիկայ քի՞չ բան կը համարիք: Ես ամենեւին յանդիմանութիւն լսել չեմ սիրեր:
That is always your way. You never will do like others.	Հրամանքնիդ միշտ այսպէս էք: Երբէք ուրիշներուն պէս շարժիլ չէք ուզեր:
So much the worse for the others. Why don't they do as they should?	Ուրիշներուն ըրածը իրենց գէշ: Ինչո՞ւ համար պարտքերնին չեն կատարեր:
See. There are a great many scholars yet behind us.	Նայեցէք, դեռ մեր ետեւէն որչափ աշակերտներ կուգան:
Let us wait for them. We shall go in all together.	Իրենց սպասենք: Ամէնքնիս մէկտեղ ներս մտնենք:

No, no. I will wait for nobody.	Չէ, չէ: Ես մարդու չեմ սպասեր:
If you choose to come with me, let us run; if not, good bye.	Թէոր կուզէք հետս գալ, վազենք. ապա թէ ոչ, մնաք բարով:
For my own part, I won't stay a moment longer.	Ես եւ ոչ մէկ վայրկեան մը կուզեմ ուշանալ:

BETWEEN TWO SCHOOL-BOYS. — ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏԱԿՑԱՑ ՄԷՋ.

What are you looking for?	Ի՞նչ կը փնտռէք:
I am looking for a steel-pen.	Երկաթի գրիչ մը կը փնտռեմ:
Here are several.	Ահա ձեզի շատ մը գրիչ:
Thank you, I will take this one.	Շնորհակալ եմ, ասիկայ կառնում:
Be so good as to lend me a pen-holder.	Խնդրեմ, ինծի գրչակալ մը փոխ տայիք:
This is a bad pen, it cuts the paper.	Այս գրիչը գէշ է, թուղթը կը ծակէ:
It sputters.	Թանաք կը ցատքեցնէ:
Choose another.	Ուրիշ մը ընտրեցէք:
Can you lend me a sheet of paper?	Թերթ մը թուղթ կըրնա՞ք ինծի փոխ տալ:

What sort of paper do you want?	Ի՞նչ տեսակ թուղթ կուզէք :
What paper do you wish to have?	Ի՞նչ թուղթ կախորժիք :
Some letter paper. I have not one single sheet in my box.	Նամակի թուղթ : Տփիս մէջ եւ ոչ թերթ մը ունիմ :
Here is one. If one is not enough, I have more at your service.	Ահա ձեզի թերթ մը : Թէոր մէկ հատը չբաւեր, ուրիշ ալ ունիմ հրամանոցդ տալու :
Thank you. One sheet will do.	Շնորհակալ եմ : Մէկ թերթը կը բաւէ :
I will return it to you by and by ; for I am going to send for some.	Քիչ առենէն ձեզի կը հատուցանեմ, վասն զի հիմա գնել պիտի տամ :
There is no hurry. But, tell me, whom are you going to write to?	Փութալու բան չկայ : Բայց ըսէք ինծի, որո՞ւն թուղթ պիտի գրէք :
I am going to write to my family.	Ընտանեացս՝ տունը պիտի գրեմ :
I thought so. Present my respects to them.	Մտքես անցաւ : Իմ յարգութիւնս մատուցէք իրենց :
I will — I will not fail.	Գլխուս վերայ : — Չեմ մոռնար :

RISING. — ԱՌԱՒՕՏԸ ԵԼԼԵԼՈՒ ՎԵՐԱՑ.

Who's there?	Ո՞վ է այն : — Ո՞վ է :

It is I. Get up.	Ես եմ։ Ելէք, ելէք։
What o'clock is it?	Ժամը քանի՞ է։
It is time to get up.	Ելլելու ժամանակ է։
Already! It is impossible. I have not been in bed two hours.	Ի՜նչ կըսէք։ Անկարելի է։ Դեռ երկու ժամ չկայ որ պառկեր եմ։
Two hours! You have been in bed almost ten.	Երկո՞ւ ժամ։ Գրեթէ տասը ժամ է որ պառկած էք։
If they would humour you, you would sleep all the day long.	Ձեզի մնայ նէ, բոլոր օրը պիտի քնանաք։
I was so comfortable when you awoke me!	Արթնցուցած ատեննիդ ինչ անուշ քուն կըլլայի։
Indeed, it is a great pity!	Իրա՛ւ, շա՜տ ափսոս։
But make haste, and dress yourself quickly.	Բայց ուտ ըրէք, եւ փութով հագուեցէք։
Why such a hurry?	Այնչափ փութալու ինչ բան կայ։
All the scholars have been in school this quarter of an hour and more.	Քառորդէ մը աւելի է որ բոլոր աշակերտք դասատունն են։
Well, can't they begin without me?	Լաւ, միթէ առանց ինծի չե՞ն կրնար սկսիլ։
If you loiter so, they are indeed very likely to begin without you. But beware of punishment.	Քանի որ ասանկ դանդաղ կը շարժիք, ի հարկէ առանց ձեզի պիտի սկսին։ Բայց պատիժները մի՛ մոռնաք։

How can I help it? Is it my fault, if I am sleepy?	Ի՞նչ ընեմ : Քուն շատ ունենալս յանցա՞նք է :
Come, come. I have no time to argue with you.	Երթանք, երթանք : Երկայն բարակ ձեզի հետ վիճելու ժամանակ չունիմ :
Make haste, I say, and come down immediately.	Շուտ ըրէք, կըսեմ ձեզի, շուտով վար իջէք :
I am ready.	Ահա պատրաստ եմ :
Yes; but it was not without difficulty.	Աղէկ. բայց առանց դժուարութեան չեղաւ :

BETWEEN AN ENGLISHMAN AND AN ARMENIAN.

ԱՆԳՂԻԱՑԻՈՅ ՈՒ ՀԱՅՈՒ ՄԸ ՄԷՋ.

Sir, are you English?	Պարոն, հրամանքնիդ Անգղիացի՞ էք :
No, I am Armenian.	Չէ, Հայ եմ :
From what part of Armenia do you come?	Հայաստանի ո՞ր կողմէն էք :
From Great Armenia.	Մեծ Հայքէն :
Which is your native town?	Ձեր քաղաքին անունն ի՞նչ է :
Erzeroum.	Կարին :
Have you been to Constantinople?	Պօլիս գացա՞ծ էք :
I come from Constantinople.	Բուն Պօլսէն եմ :

They say it is a beautiful city.	Կըսեն թէ շատ գեղեցիկ քաղաք է:
Yes, it's position is magnificient and unrivalled.	Այո, սքանչելի դիրք մը ունի, եւ աշխարհիս վերայ նմանը չկայ:
Have you been long in England?	Շատո՞նց է որ Անգղիա էք:
Ten years.	Տասը տարի է:
You are almost an Englishman.	Ալ գրեթէ Անգղիացի դարձած էք:
You speak English very well.	Շատ լաւ անգղիարէն կը խօսիք:
You are very good, Sir. —You are very indulgent.	Շատ բարեսիրտ էք, շատ ներողամիտ էք, Պարոն:
It is true, you have not even a foreign accent.	Իրաւցընէ, օտարազգի ըլլալնիդ ձեր հնչմունքէն չիմացուիր:
How do you find London? — Do you like London?	Լոնտրան ինչպէս կը գտնէք: — Լոնտոնէն կախորժի՞ք:
I like it very much. One finds every thing one requires. It is the centre of all commerce.	Լոնտոն շատ կը սիրեմ վասն զի հոն մարդ ամէն ուզածը կը գտնէ: Բոլոր վաճառականութեան կեդրոնն է:
That is true, Sir; but one cannot help feeling a preference for one's own country. Are you not also very fond of Armenia?	Այդ իրաւ է, Պարոն. բայց մարդ չկրնար իր հայրենեացը վերայ ալ մասնաւոր սէր մը չունենալ: Հարկաւ Հայաստանն ալ շատ կըսիրէք:

It is natural. But that does not prevent me appreciating the beauty of London.	Բնական է: Բայց չկրնար արգիլել որ Լոնտոնի գեղեցկութիւնները չըտեսնեմ:
I am flattered by your approbation.	Ձեր հաճութիւնը ինծի մեծ պատիւ է:
Sir, you know where I reside.	Պարոն, գիտէք իմ բնակած տեղս:
I shall always be happy to see you whenever you honour me with a visit.	Երբ ալ հաճիք ինծի գալ՝ ուրախ կըլլամ ու ինծի մեծ պատիւ կը համարիմ:
You are very kind. But I fear to intrude upon you.	Ասիկայ ձեր սրտին լաւութիւնն է, բայց վախեմ թէ զձեզ անհանգիստ կընեմ:
Do not fear. I like the english, and it is always a pleasure to me to receive them.	Ամենեւին մի վախնաք: Անգղիացիքը կը սիրեմ, եւ մեծաւ ուրախութեամբ կընդունիմ զիրենք:
I shall do myself that honour from time to time.	Երբեմն երբեմն այս պատիւը կունենամ:

WITH A BOOKSELLER. — ԳՐԱՎԱՃԱՌԻ ՄԸ ՀԵՏ.

You have received lately an assortment english books. I	Մօտերս շատ մը անգղիարէն գրքեր եկեր են հրամանոցդ:

should like to see them.	Կը փափաքիմ զանոնք տեսնել :
You are very welcome, Sir.	Ամենայն սիրով, Պարոն :
They were not unpacked before this morning. You shall have the first sight of them.	Դեռ այս առաւօտ սնտուկէն հանուեցան: Ամենէն առաջ հրամանքնիդ պիտի տեսնէք :
Are they all new books ?	Ամէնքն ալ նո՞ր գրքեր են :
Not all, Sir. Some are new, some are old publications.	Չէ Պարոն, նոր ալ կայ հին ալ :
I hope you will find some to suit your taste.	Յուսամ թէ զոհ ըլլալու բաւական բան գտնէք :
Show the gentleman the books we received lately.	Վերջին անգամ եկած գրքերը Պարոնին ցուցուր :
Well, Sir, have you found any thing that suits you ?	Ի՞նչպէս, Պարոն, ձեզի յարմար բան գտա՞ք :
Yes ; here is a note of the books I wish to have.	Հրամեր էք. ահա ուզած գրքերուս ցանկը :

THE SAME. — ՆՈՅՆ.

Will you have them in sheets or bound ?	Անկա՞զմ կուզէք թէ կազմուած :
Send them to me stitched.	Թղքակազմ ղրկեցէք:

I prefer having them in boards.	Ստուարաթղթով կազմուած կուզեմ։
I want them bound.	Կազմուած կուզեմ։
What sort of binding do you wish for?	Ի՞նչ տեսակ կազմ կուզէք։
Will you have them in calf, or in sheep?	Հորթու կաշիո՞վ կուզէք որ կազմուած ըլլայ՝ թէ պազանով։
I want this in morocco and gilt-edged.	Կը փափաքիմ որ ասիկայ սեկով կազմուի ու ոսկեզօծ ըլլայ։
What colour will you have the morocco?	Սեկն ի՞նչ գոյն կուզէք։
Is the price the same for all colours?	Ամէն տեսակ գոյներուն ալ գինը նո՞յն է։
The same, Sir. The colour makes no alteration in the price.	Նոյն է, Պարոն։ Գոյնէն գինը չփոխուիր։
If that be the case, I prefer green morocco.	Անանկ է նէ, կանաչ սեկ կուզեմ։
That colour is more lively, and not so apt to get dirty.	Այս գոյնն աւելի սրտաբաց է, եւ այնչափ շատ չաղտոտիր։
How do you wish to have the others?	Մէկալնոնք ի՞նչպէս կուզէք։

I will have them bound in calf and lettered.	Կուզեմ որ հորթու կաշիով կազմուին, եւ իւրաքանչիւրին ալ անունն ետեւնին դրուի։
Very well, Sir. I will take care that they shall be bound exactly as you direct.	Շատ աղէկ, Պարոն։ Ճիշդ ուզածներնուդ պէս կազմել կուտամ։

THE SAME. ՆՈՅՆ.

Do you want any thing else?	Ուրիշ բան ալ կուզէ՞ք։— Ուրիշ բանի կարօտութիւն ունի՞ք։
I should wish to have a copy of Spiers's dictionary.	Կուզէի Սփայրսի բառգրքեն ձեռք մը ունենալ։
Have you Johnson's dictionary.	Ճոնսընի բառգիրքն ունի՞ք։
I have one copy by me which is in very good condition, and not dear.	Մէկ ձեռք մը ունիմ որ շատ աղէկ պահուած է, եւ սուղ չէ։
I prefer to have it new.	Կուզեմ որ նոր ըլլայ։
It is impossible; for the book is out of print.	Այն անկարելի է. վասն զի տպագրութիւնը հատած է։
You cannot find a single copy at any book-	Քսան ոսկի ալ տալու ըլլաք, գրավաճառի

seller, even if you were to give twenty guineas for it.	մը քով չէք կրնար գտնել :
Don't they think of printing it again? For it is a very useful book.	Նորէն տպելու միտք չունի՞ն : Վասն զի շատ օգտակար գիրք է :
It is now in the press.	Հիմա մամուլի մէջ է : — Տպուելու վրայ է :
But nobody knows when it will appear.	Բայց չգիտցուիր Երբ դուրս պիտի ելլէ :

THE SAME. — ՆՈՅՆ.

If this be the case, I had better make sure of your copy.	Անանկ է նէ, ապահովը ունեցած օրինակդ առնելն է :
What do you ask for it?	Ի՞նչ գին կուզէք :
I did expect two guineas and a half for it.	Երկուք ու կէս կինէով կուզեմ ծախել :
But as you have bought several other books, I will let you have it for two guineas.	Բայց որովհետեւ շատ գիրք կառնուք, ձեզի երկու կինէով կուտամ :
Two guineas! It is more than it cost new.	Երկու կինէ : Ասոր նորն այնչափ չարժեր :
It is true. But it grows so scarce, that the	Այս իրաւ է : Բայց այնպէս սակաւա-

price rises every day.	գիւտ բան մը դարձեր է, որ գինն օրէ օր կաւելնայ:
This copy is certainly a very great bargain.	Տարակոյս չկայ որ այս օրինակը շատ աժան է:
You cannot take less?	Աւելի քիչ չէ՞ք կրնար առնուլ:
You cannot let me have it for less?	Չէ՞ք կրնար աւելի քիչով տալ ինծի:
No, upon my word, Sir, I hardly get any thing by it.	Խղճմտանքով կըսեմ, Պարոն, որ չեմ կրնար. վրան գրեթէ բան չեմ վաստըկիր:
Put it by, and send it down with the other books.	Մէկդի դրէք, ու մէկալ գրքերուն հետ ինծի ղրկեցէք:

IN A SHOP. — ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ.

Have you any fine cloth?	Աղէկ չուխայ ունի՞ք:
What sort of cloth do you wish to have?	Ի՞նչ տեսակ չուխայ կուզէք:
What price?	Ի՞նչ արժէքի:
What price would you wish to go to?	Ի՞նչ գին կուզէք տալ:
We have some of all prices.	Ամէն արժէքի ունինք:
We have some at various prices.	Զանազան արժէքի չուխայ ունինք:

Show me the best you have.	Ունեցածներնուդ մէջ ամենէն աղէկն ինծի ցուցուցէք :
Let me see the finest you have.	Ունեցածներնուդ մէջ ամենէն բարակը ցուցուցէք ինծի :
Is this the finest you have?	Ունեցածներնուդ ամենէն ազնիւն այս է :
Here is some good cloth for summer wear.	Ահա ձեզի ամառը հագնելու աղուոր չուխայ մը :
If it is for trowsers, I recommend you this cloth.	Թէոր տաբատի համար է, այս չուխայն շատ աղէկ է :
This cloth is excellent for winter trowsers.	Ձմեռուան տաբատի համար այս չուխան շատ աղէկ է :
I advise you to take that cloth.	Ձեզի խորհուրդ կուտամ որ այս չուխայէն առնուք :
I warrant it strong.	Աղէկութեանը համար ձեզի երաշխաւոր կըլլամ :
I have just enough left to make a coat.	Ճիշդ ազեւոր թիկնոց մը շինելու կտոր մը մնաց :
This will make you a splendid cloak.	Ասկէց ձեզի փառաւոր վերարկու մը կըլլայ :
How much do you sell it a yard?	Եարտը քանիո՞վ կը ծախէք :
I sell it for twenty shillings a yard.	Եարտը քսան շիլինի կը ծախեմ :

I find it very dear.	Շատ սուղ կը գտնեմ:
What is the lowest price, for I don't like to bargain?	Վերջի գինն ինչ է, վասն զի սակարկութիւն ընել չեմ սիրեր:
Sir, I never ask more than I take.	Պարոն, ամենեւին շատ չեմ ուզեր:
I have but one price.	Ես մէկ գին միայն ունիմ:
Can you let me have it for...?	Կրնա՞ք այսչափով տալ:
I will give you for it.	Ձեզի կուտամ այսչափի:
Indeed, I cannot sell it under.	Իրաւցընէ անկէց վար չեմ կրնար տալ:
I cannot sell it for less.	Անկէց պակաս չեմ կրնար առնուլ:
You know I am a good customer.	Գիտէք որ ես աղէկ յաճախորդներէն եմ:
It is true; but it is not right I should sell at a loss.	Իրաւ է. բայց իրաւունք չէ որ կորըստով վաճառեմ:
Well, let us split the difference.	Լաւ, միջին գին մը ընենք:
Indeed, you have it at prime cost.	Իրաւ կըսեմ որ գնած գնովս կուտամ ձեզի:

THE SAME. — ՆՈՅՆ.

Do you wish to have any thing else?	Ուրիշ բան ալ կը հրամէք:

Let me see your patterns.	Օրինակները ինծի ցուցուր:
I want some stuff for a waistcoat.	Ինծի բաճկոնցու դիպակ հարկաւոր է:
Here are some of all colours.	Ահաւասիկ ձեզի ամէն գոյնէն ալ:
Do you like white?	Ճերմակ կը սիրէ՞ք:
I have some fine quilting.	Գեղեցիկ փիքէ ունիմ:
This kerseymere is good.	Այս քազիմիրը շատ աղէկ է:
I can recommend you that stuff.	Այս դիպակը առնուք նէ աղէկ կընէք:
This is too gaudy.	Այս շատ պայծառ է:
This colour is too dull.	Այս գոյնը շատ մութ է:
That is too light.	Այն շատ բաց է:
I want something that does not get dirty.	Այնպիսի բան մը կուզեմ որ աղտոկրոյս ըլլայ, շուտով չաղտոտի:
I want something that washes.	Անանկ բան մը կուզեմ որ կարենայ լուացուիլ:
Is this colour a good dye?	Այս գոյնը հաստատո՞ւն է:
I like this pattern well enough; but I fear the colour won't stand.	Ասոր վրայի ծաղիկները կը սիրեմ. բայց վախեմ թէ գոյնը նետէ:
I am afraid this stuff won't wear well.	Վախեմ թէ այս դիպակը շատ դիմացկուն չէ:
On the contrary, it is excellent.	Մանաւանդ թէ շատ դիմացկուն է:

You will never see the end of it.	Մաշիլը պիտի չտեսնէք :
You may take it on my word.	Խօսքիս վստահանալով կրնաք առնուլ :

THE SAME. / ՆՈՅՆ.

Now let me know what I owe you.	Արդ ըսէք թէ տալիքս ինչ է :
How much does it amount to?	Այս ո՞րչափի կելլէ :
How much does it come to?	Ասոնց գումարը ո՞րչափի կը հասնի :
Here is your account.	Ահա ձեր հաշիւը :
It comes in all to seventy-two shillings and six pence.	Բոլորը կընէ եօթանասունուերկու շիլին եւ յիսուն փենս :
Are you not mistaken?	Չէ՞ք սխալիր :
The account is right. You may reckon yourself.	Հաշիւը շիտակ է: Հրամանքնիդ ալ կրնաք հաշուել :
Here are four pounds, which make eighty shillings. You are to give me seven shillings and six pence.	Ահա չորս ոսկի որ ութսուն շիլին կընէ : Ինծի ետ պիտի տաք եօթը շիլին եւ վեց փենս :
Here they are, Sir.	Ահաւասիկ, Պարոն :
Send me that immediately.	Շուտով ասիկայ ինծի ղրկեցէք :

You shall have it within a quarter of an hour.	Քառորդէ մը կառնուք :
You shall have it in ten minutes.	Տասը վայրկենէն տըրներնիդ կըլլայ :
In less than a quarter of an hour.	Քառորդ մը չանցնիր ձեռքերնիդ կըհասնի :

LODGING. — ԲՆԱԿԱՐԱՆ.

Have you any rooms to let?	Վարձելու սենեակներ ունի՞ք :
Yes, Sir. I have several. What rooms do you wish to have?	Հրամեր էք, Պարոն, շատ ունիմ : Ի՞նչ սենեակ կուզէք :
Do you want an apartment furnished, or unfurnished.	Կահած (կահով զարդարած) բնակարան կուզէք թէ անկահ :
I want furnished rooms	Կահած սենեակներ կուզեմ :
I should like to have two bed-rooms, with a drawing-room and a kitchen.	Ինծի երկու պառկելու սենեակ, մէկ սրահ ու մէկ խոհակերոց հարկաւոր է :
I can accommodate you. Please to walk in.	Ուզածնիդ կրնամ յարմարցընել : Ներս հրամեցէք :
I will show you the rooms. Here is the sitting-room.	Սենեակներն հրամանոցդ ցուցընեմ : Ահա սրահը :

It is not very large, but it will do for me.	Թէպէտ շատ մեծ չէ, բայց բանիս կրնայ գալ:
You see that there is every thing necessary, and that the furniture is very neat.	Կը տեսնէք որ ամէն հարկաւոր բաներն ունի, կահ կարասիքն ալ շատ մաքուր են:
All the furniture is mahogany.	Բոլոր կահը մահակոն է:
Here are two armchairs, six chairs, a new carpet, a fine looking glass, and very clean curtains.	Ահա երկու թիկնաթոռ, վեց աթոռ, նոր գորգ, գեղեցիկ հայլի մը, եւ մաքուր վարագոյրներ:
Besides that, there are cupboards on both sides of the chimney-piece.	Անկէ զատ, ծխանին երկու կողմն ալ դարաններ կան:
Yes. There is all that is necessary.	Այո, ամէն հարկաւոր եղած բանը կայ:

THE SAME. — ՆՈՅՆ.

Let me see the bed-rooms.	Պառկելու սենեակներն ինծի ցուցուցէք:
This way, Sir, if you please.	Ասկէց հրամեցէք, Պարոն:
Let us see whether the bed is good, for that is the main point.	Տեսնենք անկողինն ինչպէս է, վասն զի գլխաւոր բանն այն է:

When I have a good bed, I little care for any thing else.	Երբոր աղէկ անկողին մը ունիմ, ուրիշ բան հոգս չէ:
You cannot wish for a better one.	Ձէք կրնար աւկեց աղէկին փափաքիլ:
Does the room look into the street?	Սենեակը փողոցի վերայ կը նայի:
No, Sir; it looks into the garden.	Ձէ, Պարոն. պարտիզին վերայ կը նայի:
So much the better. I don't like to sleep in a front room, on account of the noise of the carriages.	Աւելի լաւ: Կառքերու ձայնին համար ամենեւին չեմ սիրեր փողոցի վերայ եղած կողմը պառկիլ:
Do you wish to see the other room?	Մէկալ սենեակն ալ կուզէք տեսնել:
I fancy the bed is good. Now, the only question is about the price.	Կարծեմ թէ անոր անկողինն ալ աղէկ է: Հիմա խնդիրը գնոյն վերայ կը մնայ:

THE SAME. — ՆՈՅՆ.

What do you ask for the three rooms and the kitchen?	Այս երեք սենեկին ու խոհակերոցին համար Ինչ կուզէք:
I have always let the sitting-room with one of the rooms for forty shillings.	Սրահը սենեակներէն մէկուն հետ միշտ քառասուն Ֆրանքի վարձած եմ:

You shall give me one guinea a week for the whole.	Ամենուն համար շաբաթը մէկ կինէ կուտաք :
It is only forty shillings for the other room and the kitchen.	Մէկալ սենեկին ու խոհակերոցին համար քառասուն շիլին միայն կը մնայ :
I think it a great deal of money.	Կարծեմ թէ շատ սուղ է :
Consider that this is one of the best quarters of the town, where the houses are let very high.	Այն ալ գիտնալու է որ ասիկայ քաղաքին գեղեցիկ թաղերէն մէկն է, ուր տներու գինը շատ բարձր է :
Well, I will give you one guinea.	Աղէկ, ոսկի մը կուտամ :
But I must have a part of the cellar, and a place to put coals and wood in.	Բայց պէտք է ինծի տաք նաեւ շտեմարանին մէկ մասը, եւ փայտ ու ածուխ դնելու տեղ մը :
That is understood. You shall have a place with a lock and key to it.	Անոր տարակոյս չըկայ : Բանալիքով գոց տեղ մը պիտի ունենաք :
When do you mean to take possession of your lodging?	Բնակարանին մէջ Երբ պիտի մտնէք :
I intend to come and sleep here to night.	Այս գիշեր հոս պառկելու միտք ունիմ :

See that every thing be ready betimes.	Այնպէս ըրէք որ ամէն բան կանուխկէկ պատրաստ ըլլայ :
Very well, Sir. You may come as soon as you please.	Շատ աղէկ, Պարոն : Երբոր կուզէք կըրնաք գալ :

WITH AN UPHOLSTERER. — ՊԱՍՏԱՌԱԳՈՐԾԻ ՀԵՏ.

I should wish to look at some furniture.	Քանի մը կահ կուզէի տեսնել :
Please to walk in, Sir. I think I can suit you.	Հրամմեցէք, ներս մըտէք, Պարոն : Կարծեմ թէ ուզածնիդ ունիմ :
What sort of furniture do you wish to see?	Ի՞նչ տեսակ կահ տեսնել կուզէք :
I want a book-case, if I can find a neat one.	Թէոր մաքուր գրարան մը գտնեմ՝ պիտի գնեմ :
Here is a very fine one.	Ահա ձեզի գեղեցիկ գրարան մը :
I bought it yesterday at a sale.	Երէկ աճուրդէ մը գնեցի:
It is of a very beautiful wood.	Փայտը շատ գեղեցիկ է :
I should like it well enough.— It would suit me pretty well.	Բաւական կախորժիմ : — Բաւական կըյարմարի ինծի :

How much do you ask for it.	Ի՞նչ կուզէք ասոր:
What do you think to sell it for?	Քանի՞ով կուզէք ծախել:
The price is twelve guineas.	Գինը տասուերկու կինէ է:
You cannot take less?	Անկէ պակաս չէ՞ք կրնար տալ:
I cannot, Sir. The lowest price is marked down upon every article in my shop.	Չեմ կրնար, Պարոն: Խանութիս մէջ ամէն ապրանքին վերջի գինը վերան նշանած է:
It is the best way.	Աղէկն ալ այն է:

BIBLIOTHECA BODLEIANA

THE SAME. / ՆՈՅՆ.

Now I should wish to look at a chest of drawers.	Հիմա զգեստարան մը կուզեմ տեսնել:
Here are several, with the price marked upon each.	Ահա ձեզի շատ մը զգեստարան, ամէն մէկուն վերայ ալ գինը նշանուած:
I think I shall fix upon this.	Կարծեմ թէ ասիկայ պիտի առնեմ:
Now let me see your carpets.	Հիմա զորգերդ տեսնեմ:
What size do you want?	Ի՞նչ մեծութեամբ կուզէք:
Six yards by five.	Երկայնութիւնը վեց կանգուն, լայնութիւնը հինգ:

Here are some of all sorts.	Ահա ամէն տեսակէն ալ:
Let us look at the prices.	Գիները տեսնենք:
These come to a great deal of money.	Ասոնք շատ սուղ են:
These come very high.	Ասոնց գիները շատ բարձր են:
Here are some cheaper. But they are, of course, neither so handsome nor so good.	Ահա աւելի աժան գորգեր: Բայց ասոնք բնականապէս ոչ այնչափ գեղեցիկ են եւ ոչ այնչափ աղէկ:
I should like this well enough. But it comes to so much money.	Ասիկայ բաւական սիրեցի: Բայց շատ սուղ է:
No, Sir. You will find it very cheap, if you consider how large it is.	Ոչ, Պարոն: Մեծութիւնը մտածելու ըլլաք նէ, շատ աժան կը գտնէք:
Carpets are very expensive.	Գորգ բսածդ շատ սուղ բան է:
Should you like to look at some second-hand ones?	Գործածուած գորգ տեսնել կուզէք:
No. I take this.	Ոչ: Ասիկայ կառնում:

THE SAME. — ՆՈՅՆ.

Don't you want something else?	Ուրիշ բան չէք ուզեր:

Do you want any thing else?	Ուրիշ բանի կարօտութիւն ունի՞ք:
Of what price are these chairs?	Այս աթոռներուն գինն ինչ է:
What may be the price of these chairs?	Այս աթոռներուն գինն ինչ կրնայ ըլլալ:
They are two guineas each.	Հատը երկու կինէ է:
They ought to be good for that price.	Գնոյն նայելով՝ պէտք է որ աղէկ ըլլան:
These are very beautiful chairs.	Այս աթոռները շատ փառաւոր են:
These chairs are of the first quality, and in the newest fashion.	Այս աթոռներն առաջին տեսակէն են, եւ խիստ նորաձեւ:
Consider that they are made of the finest wood, and highly finished.	Գիտցէք որ շատ գեղեցիկ փայտէ շինուած են, ու ամէն կերպով լաւ բանուած:
They were made by the best workman in London.	Լոնտոնի ամենէն վարպետ գործաւորին շինածներն են:
I like the chairs very well, but I do not like the price.	Աթոռները բաւական սիրեցի, բայց անոնց գինը չսիրեցի:
I shall put off this purchase to another time.	Այս գնելիքս ուրիշ անգամի կը թողում:
Well, you will send those things as soon as possible.	Ուրեմն, որչափ կարելի է՝ շուտով խրկեցէք ինծի ասոնք:

You shall have them in the course of the day.	Այսօր կառնուք :
Do not disappoint me.	Չիս չխաբէք :
You may depend upon it.	Կրնաք վստահ ըլլալ :

TO BUY DIFFERENT ARTICLES. — ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԲԱՆԵՐ ԳՆԵԼՈՒ ՎՐԱՅ.

Will you come to town with me?	Ինծի հետ քաղաքը կուգա՞ք :
With all my heart.	Ամենայն սիրով :
What have you to do in town?	Քաղաքը ի՞նչ ունիք ընելու :
I want to go to the haberdasher shop.	Պէտք է որ նորեյուկ լաթեր ծախողին խանութն երթամ :
I have a few things to buy.	Քանի մը բան պիտի գնեմ :
What do you want to buy.	Ի՞նչ բան պիտի գնես:
I want to buy some lace.	Հիւսկէն պիտի գնեմ :
I want some calico.	Քալիքոյ պիտի գնեմ:
I must get some sheeting.	Սաւան շինելու կտաւ պիտի առնեմ :
Don't you want to buy something yourself?	Հրամանքդ ալ գնելու բան մը չունի՞ս :
Not any thing in particular.	Մասնաւոր բան մը չունիմ :

Unless I should see something that strikes my fancy.	Բայց եթէ այնպիսի բան մը տեսնեմ որ շատ հաւնիմ :
Perhaps we may see some new prints.	Գուցէ նորատիպ հընդկակտաւներ տեսնենք :
You put me in mind that I want some merino.	Աղէկ միտքս ձգեցիք, ինծի մերինոս հարկաւոր է :
Don't let me forget to buy some handkerchiefs.	Թաշկինակ գնելիքս չմոռնամ :
I will remind you of it.	Մտքերնիդ կը ձգեմ :
Let us go directly, for we must be back for tea.	Շուտով երթանք, վասն զի պէտք է որ չայի ատեն հոս գտնուինք :
We have a full hour before us.	Դեռ ամբողջ ժամ մը ունինք :
We shall be back before that time.	Անկէց առաջ կը հասնինք :

WITH A TAILOR. — ԴԵՐՁԱԿԻ ՄԸ ՀԵՏ.

I have sent for you to measure me for a coat.	Զհրամանքդ կանչել տուի որ ինծի թիկնոցակի մը չափ առնուս ;
Will you take my measure for a coat?	Խնդրեմ, ինծի թիկնոցակի մը չափն ա՛ռ :
How will you have it made?	Ի՞նչ ձեւ կուզէք որ շինեմ :

Make it as they wear them now.	Հիմա ինչ ձեւով որ կը հագուին՝ այնպէս շինէ:
You want also the waistcoat and trowsers.	Բաճկոն ու տաբատ ալ կուզէք:
Yes. I bought the cloth to have a complete suit of clothes.	Այո. ամբողջ հագուստ մը շինելու համար չուխայ գնեցի:
Very well, Sir. How do you wish to have your waistcoat made.	Գլխուս վերայ, Պարոն: Բաճկոննիդ ինչ ձեւով կուզէք:
Make it after the present fashion.	Հիմակուան ձեւով ըրէ:
Only let it not come down quite so low.	Միայն թէ այնչափ շատ վար չիջնայ:
What sort of buttons will you have?	Ի՞նչ տեսակ կոճակ կուզէք:
I will have them covered with the same stuff.	Կուզեմ որ կոճակներն ալ նոյն նիւթէ ըլլան:
Very well.	Շատ աղէկ:
Make me a pair of trowsers with straps.	Ինծի տաբատ մը շինէ որ ներբանափոկ ունենայ:
Make them full wide. I like to be at my ease.	Աղէկ լայն ըրէք: Զեմ ուզեր որ նեղուիմ:
Never fear.	Հոգ մ՚ընէք:
Will you have your trowsers come very high?	Կուզէք որ տաբատը շատ վեր ելլէ:

Not too high nor too low.	Ոչ շատ վեր եւ ոչ շատ վար:
Let them come up so high.	Ինչուան հոս գայ:
I won't have them come down quite so low as they wear them now.	Ինչպէս որ հիմա կրնեն, չեմ ուզեր որ անանկ շատ վար իջնայ:
It is the fashion to wear them very low.	Հիմակուան նորաձեւութիւնն է ասանկ շատ վար ընել:
Yes, but it is a ridiculous fashion.	Այո, բայց ծաղրական նորաձեւութիւն մըն է:
They shall be made exactly as you like.	Ձեր ուզածին պէս կրնեմ:
Remember that I must have this against next Sunday, without fail.	Գիտցած ըլլաք որ անվրէպ կիրակի օրուան համար կուզեմ:
You shall have it on Sunday morning.	Կիրակի առաւօտ կառնուք:
Mind, for if you disappoint me, this will be the last work you ever do for me.	Աղէկ նայեցէք, եթէ խօսքերնիդ չպահէք, ասիկայ ինծի համար վերջի ըրած գործերնիդ կըլլայ:

THE SAME. — ՆՈՅՆ.

Have you brought my coat?	Թիկնոցակս բերի՞ք:

Yes, Sir. Here it is.	Այո, Պարոն: Ահաւասիկ:
You are a man of your word. But, I began to grow impatient.	Խօսքի տէր մարդ էք: Բայց, շիտակն ըսեմ, համբերութիւնս հատնելու վրայ էր:
It is but ten o'clock, and I had promised it you some time in the morning.	Դեռ ժամը տասն է, եւ ես կէսօրէն առաջ բերելու խօսք տուեր էի:
Nor do I complain.	Անոր համար ես ալ չեմ գանգատիր:
Let me try it on.	Մէյմը փորձեմ:
Try it on me.	Վրաս փորձէ:
Let me see whether it fits me.	Նայինք աղէկ կուգա՞յ:
Let's see how it fits.	Տեսնենք ինծի ինչպէս է:
You have made the sleeves too long and too wide.	Թեւերը շատ երկայն ու շատ լայն ըրեր էք:
Sir, they wear them very large now.	Պարոն, հիմա թեւերը շատ լայն կընեն:
It is too narrow.	Շատ նեղ է:
It tightens me under the arms.	Անթերս շատ կը նեղէ:
It cuts my arms.	Թեւերս կը կտրէ:
Is it not rather long?	Քիչ մը երկայն չէ՞:
It seems to me a little too long.	Ինծի քիչ մը շատ երկայն կերեւայ:
It is too long-waisted.	Խիստ շատ երկայն է:

It is too short-waisted.	Խիստ կարճ է:
It sits in wrinkles between the shoulders.	Ուսերուն մէջտեղուանքը փոթ փոթ է:
You cannot complain of this coat.	Այս թիկնոցակին ըսելիք չունիք:
It fits you extremely well.	Ձեզի շատ աղէկ յարմարեցաւ:
You never were better dressed in your life.	Դեռ ասանկ աղէկ հագուստ չէիք ունեցած:
You tailors never find fault with your own work.	Դերձակները իրենց գործքին երբէք պակասութիւն չեն գտներ:

WITH A SHOEMAKER. — ԿՕՇԿԱԿԱՐԻ ՀԵՏ.

Sir, I want a pair of shoes.	Պարոն, ինծի զոյգ մը մուճակ հարկաւոր է:
Have the goodness to take my measure for a pair of shoes.	Ոտքիս չափն առնուիք որ ինծի զոյգ մը մուճակ շինէք:
I have your measure already.	Արդէն չափերնիդ ունիմ:
Take good care to make them wide enough.	Նայեցէք որ լայնկեկ ըլլան:
Don't make them too narrow.	Շատ նեղ չընէք:
Never fear, Sir.	Մի վախնաք, Պարոն:

That's your defect; you generally make them too narrow.	Այս պակասութիւնն ունիք. ընդհանրապէս շատ նեղ կընէք :
I shall take care to make these according to your wish.	Կը ջանամ որ ասիկայ ուզածնուդ պէս ընեմ :
When can you let me have them?	Ե՞րբ կրնաք տալ :
I will send them to you towards the end of the week.	Շաբթուս վերջերը ձեզի կը ղրկեմ :
You shall have them in the beginning of next week.	Գալ շաբթուն սկիզբը կառնուք:
Don't dissappoint me.	Զրլլայ թէ ուշացընէք :
You may rely upon my promise.	Խոստմանս վրայ կրրնաք վստահանալ :
Are you in want of any thing else?	Ուրիշ բան կուզէ՞ք :
Now I think of it, I want a pair of dress boots.	Հիմա միտքս եկաւ, զոյգ մըն ալ ազնիւ կօշիկ կուզեմ :
Make me at the same time some dancing shoes.	Միանգամայն պարի մուճակ շինեցէք ինծի :
I should like to have a pair of slippers too.	Զուխտ մըն ալ հողաթափ կուզէի :
What do you wish them made of?	Ինչէ՞ն կուզէք որ ընեմ :
I want them in morocco	Սեկէ կուզեմ :

Make them as quickly as possible.	Որչափ կարելի է շուտով ըրէք :

THE SAME, — ՆՈՅՆ.

Sir, I have brought your shoes.	Պարոն, մուճակնիդ բերի :
Let me see them —Let us see.	Տեսնեմ : — Տեսնենք :
Give me leave to try them on you.	Եթէ հաճիք' հագցընեմ ձեզի :
No, thank you. I will try them on myself.	Ոչ, շնորհակալ եմ : Ինքնիրենս կը հագնիմ :
I cannot get my foot in.	Չեմ կրնար ոտքս մէջը խոթել :
Here is a shoe-horn.	Ահա կօշկաձիգ մը :
I must have shoes that I can put on without trouble.	Անանկ մուճակներ կուզեմ որ ոտուրներս դիւրաւ մտնեն մէջը :
Why have you made them so pointed? It isn't the fashion.	Ինչու համար այնչափ սրածայր ըրեր էք : Հիմակուան սովորութիւնը այս չէ :
I beg your pardon, they are worn so at present.	Թողութիւն կընէք, հիմա ամէնքը ասանկ կը հագնին :
Very well, then I won't put myself to any inconvenience for the sake of following the fashion.	Աղէկ : Բայց ես չեմ ուզեր նորելուկ սովորութեան հետեւելու համար նեղութիւն քաշել :

Decidedly, they are too tight.	Իրաւցընէ ոտքս շատ կը նեղէ։
They are a great deal too narrow.	Չափազանց նեղ են։
They hurt my toes.	Մատուըներս կը ցաւցընեն։
You have made them too pointed.	Շատ սրածայր ըրեր էք։
They hurt me.	Ոտքս կը ցաւցընեն։
They will grow wide enough by wearing.	Քիչ մը հագնելէն ետքը կը լայնան։
This leather stretches like a glove.	Այս կաշին ձեռնոցի պէս կը բացուի։
Yes. But I don't choose to be crippled until they grow wider.	Աղէկ։ Բայց ինչուան որ բացուին չեմ ուզեր ոտուըներս աւրել։
I cannot walk in them.	Ասոնցմով չեմ կրնար քալել։
You will not have worn them two days before they cease to hurt you.	Երկու օր չքշեր՝ կը բացուին, եւ ոտքերնիդ չեն ցաւցըներ։
I told you many times, that I do not like to be pinched in my shoes.	Հրամանոցդ շատ անգամ ըսի թէ չեմ ուզեր որ ոտքի ամաններս զիս նեղեն։
I do not wish to have corns.	Չեմ ուզեր որ ոտուըներուս վերայ կոշտեր ելլեն։
I wish to be easy in my shoes.	Կուզեմ որ ոտքս հանգիստ ըլլայ։
The leather is bad.	Կաշին գէշ է։

The upper leather is good for nothing.	Երեսի կաշին բանի չգար :
The soles are too thin.	Ներբաններր շատ բարակ են :
The quarters are too low.	Քովերը շատ ցած են :
I won't have my foot uncovered.	Չեմ ուզեր որ ոտուըներս բաց մնան :
The heels are a good deal too wide.	Կրունկները չափէ դուրս լայն են :
I am sure these shoes were never made for me.	Աղէկ գիտեմ որ այս մուճակները ինծի համար շինուած չեն:
Take them back, and make me another pair as soon as possible.	Ետ տարէք ասոնք, ու ինծի ուրիշ զոյգ մը շինեցէք որչափ կարելի է շուտով :
Have you brought my boots ?	Կօշիկներս բերի՞ք :
Yes Sir, here they are.	Այո , Պարոն , ահաւասիկ :
The leg of this boot is too high.	Այս կօշկին բունը շատ երկայն է :
I told you to make the heels very high.	Հրամանոցդ ըսեր էի որ կրունկները բարձըր ընէք :
I can't bear low heels.	Ցած կրունկ չեմ սիրեր :
Take these boots, they want new-fronting.	Այս կօշիկներն առէք, նորոգութեան կարօտութիւն ունին:
That pair wants soling	Այս զոյգին ներբաններր պէտք է փոխել :

Half-sole these shoes.	Այս մուճակներուն կէս կէս ներբան դրէք:
Don't forget to put a few brads in them.	Չմոռնաք քանի մը գամ ալ զարնելու:
Send them back soon.	Շուտով ինծի դարձուցէք:

WITH A PHYSICIAN. — ԲԺՇԿԻ ՀԵՏ.

Sir, I have taken the liberty to send for you.	Պարոն, ներեցէք զձեզ կանչել տալուս:
I am afraid I need your assistance.	Վախեմ որ հրամանոցդ ձեռնտուութեանը կարօտ եմ:
How do you find yourself at present.	Հիմա ինչպէս էք:
I don't know. I find myself I don't know how.	Չեմ գիտեր: Ինչպէս ըլլալս ալ որոշ չեմ գիտեր:
My head is giddy, and I can hardly stand on my legs.	Գլուխս բոլորովին թմրած է, եւ ոտքի վերայ կենալու կարողութիւն չունիմ:
I am not well at all.	Ամենեւին աղէկ չեմ:
I feel myself very ill.	Սաստիկ հիւանդ եմ:
I am uncommonly weak.	Վերաս կարգէ դուրս տկարութիւն մը կայ:

How long have you been ill?	Հիւանդութիւննիդ Երբ սկսաւ:
How were you taken ill?	Հիւանդութիւննիդ Ինչպէս սկսաւ:
It began the day before yesterday by a shivering.	Երեկ չէ առջի օրը դողով մը սկսաւ:
Then I perspired profusely, and have been ill ever since.	Ետքը վերաս շատ մը քրտինք եկաւ, անկէց ի վեր հիւանդ եմ:
Did you feel a nausea?	Սրտի խառնուք ունեցա՞ք:
Yes, at first, but that went off, and I have had a terrible headache ever since.	Այո, առջի բերան: Բայց ետքը անցաւ ու վերաս սաստիկ գլխու ցաւ մը մնաց:

THE SAME. — ՆՈՅՆ.

Where do you feel pain now?	Հիմա ո՞ր տեղերնիդ կը ցաւի:
I have pains in my head	Գլուխս կը ցաւի:
My head aches terribly.	Սաստիկ գլխու ցաւ մը ունիմ:
I feel sick, and sometimes am ready to reach.	Սիրտս կը խառնուի, ու ետ գալ կուգէ:
I feel a pain in my stomach.	Ստամոքս կը ցաւի:
I have a sore throat.	Կոկորդս կը ցաւի:

I feel a pain in my bowels.	Ընդերացս մէջ ցաւ կը զգամ :
I have had a shivering the whole night long.	Բոլոր գիշերը դողացի :
I feel pains in my side, and I breathe with difficulty.	Կողս կը ցաւի, ու դժուարաւ շունչ կառնում :
Do you feel a little appetite?	Ախորժակ ունի՞ք :
I have hardly eaten any thing these two days.	Երկու օրէ ի վեր բերանս բան չեմ դրած :
Let me see your tongue.	Լեզունիդ տեսնեմ : — Լեզունիդ ցուցուցէք :
Your tongue is foul.	Լեզունիդ քիչ մը աղտոտ է :
The stomach is loaded.	Ստամոքսնիդ մաքուր չէ :
You must take a little medicine.	Պէտք է որ բերեւ մաքրողական մը առնուք :

THE SAME. — ՆՈՅՆ.

Give me your arm.	Թեւերնիդ տուէք :
Let me feel your pulse.	Երակնիդ նայիմ :
Your pulse is a little flurried.	Երակնիդ քիչ մը այլայլած է :
Your pulse is hard. There is fever.	Երակնիդ պինդ է : Վրանիդ տաքութիւն կայ :

The v
only
only,

I have

Thou
cost
He ha

We h
You h
They
They
bret

I had
Thou

He had
We ha
chief
You ha

They h

...not been so much ...ated and I slept ...tle.	Գիշերն այնչափ ան-հանգիստ չէի, ու քիչ մը քնացայ:
...fever is much ...ed.	Տաքութիւնս շատ թե-թեւցաւ:
...ever is almost ...	Տաքութիւնս՝ ջերմս բոլորովին անցաւ:
... feel any more ...n your stomach? ...ur side? etc.	Ստամոքսնիդ՝ կողեր-նիդ՝ եւայլն՝ դեռ կը ցաւի՞:
...ess than I did. I ...a good deal ...r.	Խիստ քիչ: Աւելի հանգիստ եմ:
...end you another ...e, which you ...take as you did ...rday.	Ուրիշ շիշ մըն ալ ձե-զի ղրկեմ որ երե-կուան պէս առ-նուք:
...romise you that ...ll have no serious ...equence.	Ձեզի խօսք կուտամ որ այս ամենեւին ծանր բան մը չէ:
... or three days ...will be quite ...	Երկու երեք օրէն բո-լորովին կառողջա-նաք:

... CARRIAGES. ԿԱՌՔ ՎԱՐՁԵԼՈՒ.

... are you *going* ...*morning?*	Այս առաւօտ ո՞ւր պի-տի երթաք:
...*ing to pay visits.*	...յցելութեան պիտի երթամ:

Make them as quickly as possible.	Որչափ կարելի է շուտով ըրէք ։

THE SAME, — ՆՈՅՆ.

Sir, I have brought your shoes.	Պարոն, մուճակնիդ բերի ։
Let me see them —Let us see.	Տեսնեմ ։ — Տեսնենք ։
Give me leave to try them on you.	Եթէ հաճիք՝ հագցընեմ ձեզի ։
No, thank you. I will try them on myself.	Ոչ, շնորհակալ եմ ։ Ինքնիրենս կը հագնիմ ։
I cannot get my foot in.	Չեմ կրնար ոտքս մէջը խոթել ։
Here is a shoe-horn.	Ահա կօշկաձիգ մը ։
I must have shoes that I can put on without trouble.	Անանկ մուճակներ կուզեմ որ ոտուըներս դիւրաւ մտնեն մէջը ։
Why have you made them so pointed? It isn't the fashion.	Ինչու համար այնչափ սրածայր ըրեր էք ։ Հիմակուան սովորութիւնը այս չէ ։
I beg your pardon, they are worn so at present.	Թողութիւն կընէք, հիմա ամէնքը ասանկ կը հագնին ։
Very well, then I won't put myself to any inconvenience for the sake of following the fashion.	Աղէկ ։ Բայց ես չեմ ուզեր նորելյուկ սովորութեան հետեւելու համար նեղութիւն քաշել ։

Decidedly, they are too tight.	Իրաւցընէ ոտքս շատ կը նեղէ:
They are a great deal too narrow.	Զափազանց նեղ են:
They hurt my toes.	Մատուըներս կը ցաւցընեն:
You have made them too pointed.	Շատ սրածայր ըրեր էք:
They hurt me.	Ոտքս կը ցաւցընեն:
They will grow wide enough by wearing.	Քիչ մը հագնելէն ետքը կը լայնան:
This leather stretches like a glove.	Այս կաշին ձեռնոցի պէս կը բացուի:
Yes. But I don't choose to be crippled until they grow wider.	Աղէկ: Բայց ինչուան որ բացուին չեմ ուզեր ոտուըներս աւրել:
I cannot walk in them.	Ասոնցմով չեմ կրնար քալել:
You will not have worn them two days before they cease to hurt you.	Երկու օր չքշեր՝ կը բացուին, եւ ոտքերնիդ չեն ցաւցըներ:
I told you many times, that I do not like to be pinched in my shoes.	Հրամանոցդ շատ անգամ ըսի թէ չեմ ուզեր որ ոտքի ամաններս զիս նեղեն:
I do not wish to have corns.	Չեմ ուզեր որ ոտուըներուս վերայ կոշտեր ելլեն:
I wish to be easy in my shoes.	Կուզեմ որ ոտքս հանգիստ ըլլայ:
The leather is bad.	Կաշին գէշ է:

The upper leather is good for nothing.	Երեսի կաշին բանի չգար :
The soles are too thin.	Ներբանները շատ բարակ են :
The quarters are too low.	Քովերը շատ ցած են :
I won't have my foot uncovered.	Չեմ ուզեր որ ոտուըներս բաց մնան :
The heels are a good deal too wide.	Կրունկները չափէ դուրս լայն են :
I am sure these shoes were never made for me.	Աղէկ գիտեմ որ այս մուճակները ինծի համար շինուած չեն:
Take them back, and make me another pair as soon as possible.	Ետ տարէք ասոնք, ու ինծի ուրիշ զոյգ մը շինեցէք որչափ կարելի է շուտով :
Have you brought my boots?	Կօշիկներս բերի՞ք :
Yes Sir, here they are.	Այո, Պարոն, ահաւասիկ :
The leg of this boot is too high.	Այս կօշկին բունը շատ երկայն է :
I told you to make the heels very high.	Հրամանոցդ ըսեր էի որ կրունկները բարձր ընէք :
I can't bear low heels.	Ցած կրունկ չեմ սիրեր :
Take these boots, they want new-fronting.	Այս կօշիկներն առէք, նորոգութեան կարօտութիւն ունին:
That pair wants soling	Այս զոյգին ներբանները պէտք է փոխել :

Half-sole these shoes.	Այս մուճակներուն կես կես ներբան դրէք։
Don't forget to put a few brads in them.	Զմոռնաք քանի մը գամ ալ զարնելու։
Send them back soon.	Շուտով ինծի դարձուցէք։

WITH A PHYSICIAN. — ԲԺՇԿԻ ՀԵՏ.

Sir, I have taken the liberty to send for you.	Պարոն, ներեցէք զձեզ կանչել տալուս։
I am afraid I need your assistance.	Վախեմ որ հրամանոցդ ձեռնտուութեանը կարօտ եմ։
How do you find yourself at present.	Հիմա ինչպէս էք։
I don't know. I find myself I don't know how.	Զեմ գիտեր։ Ինչպէս ըլլալս ես ալ որոշ չեմ գիտեր։
My head is giddy, and I can hardly stand on my legs.	Գլուխս բոլորովին թմրած է, եւ ոտքի վերայ կենալու կարողութիւն չունիմ։
I am not well at all.	Ամենեւին աղէկ չեմ։
I feel myself very ill.	Սաստիկ հիւանդ եմ։
I am uncommonly weak.	Վերաս կարգէ դուրս տկարութիւն մը կայ։

How long have you been ill?	Հիւանդութիւնիդ Երբ սկսաւ:
How were you taken ill?	Հիւանդութիւնիդ Ինչպէս սկսաւ:
It began the day before yesterday by a shivering.	Երեկ չէ առջի օրը դողով մը սկսաւ:
Then I perspired profusely, and have been ill ever since.	Ետքը վերաս շատ մը քրտինք եկաւ, անկէց ի վեր հիւանդ եմ:
Did you feel a nausea?	Սրտի խառնուք ունեցա՞ք:
Yes, at first, but that went off, and I have had a terrible headache ever since.	Այո, առջի բերան: Բայց ետքը անցաւ ու վերաս սաստիկ գլխու ցաւ մը մնաց:

THE SAME. — ՆՈՅՆ.

Where do you feel pain now?	Հիմա ո՞ր տեղերնիդ կը ցաւի:
I have pains in my head	Գլուխս կը ցաւի:
My head aches terribly.	Սաստիկ գլխու ցաւ մը ունիմ:
I feel sick, and sometimes am ready to reach.	Սիրտս կը խառնուի, ու ետ գալ կուզէ:
I feel a pain in my stomach.	Ստամոքս կը ցաւի:
I have a sore throat.	Կոկորդս կը ցաւի:

I feel a pain in my bowels.	Ընդերացս մէջ ցաւ կը զգամ:
I have had a shivering the whole night long.	Բոլոր գիշերը դողացի:
I feel pains in my side, and I breathe with difficulty.	Կողս կը ցաւի, ու դժուարաւ շունչ կառնում:
Do you feel a little appetite?	Ախորժակ ունի՞ք:
I have hardly eaten any thing these two days.	Երկու օրէ ի վեր բերանս բան չեմ դրած:
Let me see your tongue.	Լեզունիդ տեսնեմ: — Լեզունիդ ցուցուցէք:
Your tongue is foul.	Լեզունիդ քիչ մը աղտոտ է:
The stomach is loaded.	Ստամոքսնիդ մաքուր չէ:
You must take a little medicine.	Պէտք է որ թեթեւ մաքրողական մը առնուք:

THE SAME. — ՆՈՅՆ.

Give me your arm.	Թեւերնիդ տուէք:
Let me feel your pulse.	Երակնիդ նայիմ:
Your pulse is a little flurried.	Երակնիդ քիչ մը այլայլած է:
Your pulse is hard. There is fever.	Երակնիդ պինդ է: Վրանիդ տաքութիւն կայ:

You are feverish.	Տաքութիւն ունիք:
Do you think my illness dangerous?	Հիւանդութիւնս արդեօք վտանգաւո՞ր է:
No. But you must take care lest it should become so.	Ոչ: Բայց զգուշանալու է որ վտանգաւոր չըլլայ:
What am I to do?	Ի՞նչ պէտք է որ ընեմ:
I will send you something to take, and see you again to-morrow morning.	Բան մը կը ղրկեմ որ խմէք, ու վաղը առաւօտ նորէն կուգամ տեսնելու:
Must I do any thing besides?	Ուրիշ բան պէ՞տք է ընեմ:
No. Only take care to keep yourself warm.	Ոչ: Միայն նայեցէք որ տաք կենաք:
Endeavour not to catch cold.	Նայեցէք որ պաղ չառնուք:
We shall see to-morrow whether it will not be proper to take a litle blood.	Վաղը կը նայինք թէ պէ՞տք է քիչ մը արիւն առնել:

THE SAME. — ՆՈՅՆ.

How have you passed the night?	Գիշերն ի՞նչպէս անցուցիք:
How do you find yourself since yesterday?	Երէկուան վերայ այսօր ի՞նչպէս էք:
I feel myself much better.	Շատ աւելի լաւ եմ:

I have not been so much agitated and I slept a little.	Գիշերն այնչափ անհանգիստ չէի, ու քիչ մը քնացայ:
The fever is much abated.	Տաքութիւնս շատ թեթեւցաւ:
The fever is almost gone.	Տաքութիւնս՝ ջերմս բոլորովին անցաւ:
Do you feel any more pain in your stomach? in your side? etc.	Ստամոքսիդ՝ կողերնիդ՝ եւայլն՝ դեռ կը ցաւի՞:
Much less than I did. I am a good deal easier.	Խիստ քիչ: Աւելի հանգիստ եմ:
I will send you another bottle, which you will take as you did yesterday.	Ուրիշ շիշ մըն ալ ձեզի ղրկեմ որ երեկուան պէս առնուք:
I can promise you that it will have no serious consequence.	Ձեզի խօսք կուտամ որ այս ամենեւին ծանր բան մը չէ:
In two or three days you will be quite well.	Երկու երեք օրէն բոլորովին կառողջանաք:

HIRED CARRIAGES. ԿԱՌՔ ՎԱՐՁԵԼՈՒ.

Where are you going this morning?	Այս առաւօտ ո՞ւր պիտի երթաք:
I am going to pay visits.	Այցելութեան պիտի երթամ:

I have several visits to pay.	Շատ մը այցելութիւններ ունիմ ընելու ։
I must go first to Mr F***'s.	Պէտք է որ նախ երթամ Պ. Ֆ***ին տունը ։
You won't find him at home.	Զինքը տունը չէք գտնար ։
He is in the country.	Գեղն է ։
In that case I shall leave a card at his house.	Անանկ է նէ, տունը տոմսակ մը կը ձգեմ ։
Afterwards I shall go and see our friend B***.	Ետքը պիտի երթամ մեր Բ*** բարեկամը տեսնելու ։
Go there first, and I will accompany you.	Նախ հոն գացէք, ես ալ հետերնիդ կուգամ ։
Let us go.	Երթանք ։
Shall we ride or walk?	Կառքո՞վ պիտի երթանք թէ ոտքով ։
Let us ride, in order not to fatigue ourselves.	Կառքով երթանք որ չյոգնինք ։
Just as you please.	Ինչպէս որ կուզէք ։
Let us look for a cab.	Վարձու կառք փնտռենք ։
We shall find a stand in the next street.	Քովի փողոցին մէջ կառքի հրապարակ մը կրնանք գտնել ։
Here is a cab, let us take it.	Ահաւասիկ կառք մը, բռնենք ։
I prefer taking a glass coach by the hour.	Աւելի կուզեմ կառանոցի կառք մը բռնել ժամով ։

Coachman, drive us to *** street.	Կառավար, տար զմեզ *** փողոցը :
Set us down at number 50.	Զմեզ 50 թուոյն առջեւը վար իջեցուր :
Here we are arrived.	Ահա հասանք:
Already?	Ասանկ շո՞ւտ :
Coachman, here is your fare.	Կառավար, ահա ընթացքիդ վարձը :
And here is something for yourself.	Ահա նաեւ ձեռաձիրդ :

IN AN OMNIBUS. — ՀԱՄԱԿԱՌՔԻ ՄԷՋ.

Motion to the driver to stop.	Կառավարին նշան տուր որ կենայ :
Call to the conductor.	Ուղեցոյցը կանչէ :
There is no room.	Տեղ չկայ :
We are full.	Տեղերը լեցուն են :
There is but one place.	Մէկ տեղ մը միայն կայ :
We must wait.	Պէտք է սպասենք :
Here is another omnibus.	Ահա ուրիշ համակառք մը :
It does not go the same way.	Նոյն կողմը չերթար :
Conductor! where are you going?	Ուղեցո՛յց, ո՞ւր կերթաք :
We are going to the Exchange.	Սակարան կերթանք :
This is the omnibus we must take.	Ահա այս համակառքը պէտք է մտնենք :
Let us get up.	Մտնենք :
You get up first.	Դուք նախ մտէք :

I can't sit down.	Չեմ կրնար նստիլ :
Will you be so kind, Sir, as to sit a little further on.	Պարոն, շնորհք ընէիք՝ քիչ մը ետեւ երթայիք :
Sit in this corner.	Սա անկիւնը նստեցէք :
We are going very slowly.	Շատ ծանր կերթանք:
The street is crowded with carriages.	Փողոցին մէջ կառքերը լեցուեր են :
We don't get on.	Առաջ չենք երթար :
When I am in haste I never get into an omnibus.	Երբոր փութով կուզեմ հասնիլ, ամենեւին հանրակառք չեմ նստիր :
Where are we now?	Հիմա ուր ենք :
We are in *** street.	***փողոցին մէջն ենք:
Conductor, set me down at the corner of *** street.	Ուղեցոյց, զիս *** փողոցին անկիւնը իջեցուր :
Stop, if you please.	Խնդրեմ, կեցէք :
Let me get down first.	Թողէք որ նախ ես իջնամ :
Take care.	Զգուշութիւն ըրէք :
Give me your hand.	Ձեռքերնիդ տուէք:
Hold my arm.	Թեւս բռնեցէք :
Don't be in a hurry.	Մի աճապարէք :

BEFORE DEPARTURE. — ՃԱՄԲԱՅ ԵԼԼԵԼԷՆ ԱՌԱՋ.

Have you any commission for London?	Լոնտրայի համար յանձնարարութիւն մը ունի՞ք :

Are you going to London?	Լոնտրա՞ կերթաք:
Yes. Is there any thing that I can do for you there?	Այո: Հոն բան մը ունի՞ք որ կարենամ ընել:
You are very kind.	Շատ շնորհակալ եմ ձեր բարեսրտութեանը:
When do you think of going?	Ե՞րբ միտք ունի՞ք ճամբայ ելլելու:
I set out to-morrow morning.	Վաղը առաւօտ ճամբայ կելլեմ:
Do you go by the stage-coach?	Ճեպընթացո՞վ պիտի երթաք:
No. I have ordered a post-chaise.	Ոչ: Թղթատարի կառքին մէջ տեղ մը բռնել տուի:
I am going by the railway.	Երկաթուղիով պիտի երթամ:
How long do you mean to stay there?	Հոն ո՞րչափ ժամանակ կենալու միտք ունի՞ք:
When shall you be back again?	Ե՞րբ պիտի դառնաք:
I think of staying four or five days.	Չորս հինգ օր կենալու միտք ունիմ:
But I am afraid I shall be detained longer.	Բայց վախեմ թէ աւելի բռնուիմ:
It is very likely.	Շատ հաւանական է:
Therefore it is better to rechon upon a longer stay.	Անոր համար աւ երկար ատեն հոն կենալը աչք առնելու է:
If I can be of any use to you there, let me know.	Թէոր կրնամ հոն ձեզի ծառայութիւն մը ընել, ըսէք ինծի

If there is any thing I can do for you, I shall be very happy to do it.	Թէոր բան մը կայ որ կարենամ ձեզի համար ընել, սիրով յանձն կառնում :
I shall avail myself of your kind offer, and call upon you in the course of the evening	Ձեր բարեսրտութիւնը վայելելու համար՝ այս իրիկուն տներնիդ կուգամ :
You are sure to find me at home.	Ապահով եղիք որ զիս տունը կը գտնէք :

TRAVELLING BY RAILWAY. — ԵՐԿԱԹՈՒՂԻՈՎ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ.

Have you made all your preparations for departure ?	Ճամբու պատրաստութիւնները տեսա՞ք :
Every thing is ready.	Ամէն բան պատրաստ է :
Send for a porter to carry my luggage.	Բեռնակիր մը կանչեցէք որ կահերս տանի :
I shall take the railway omnibus.	Երկաթուղւոյն համակառքը պիտի առնում :
Take that luggage to the omnibus office.	Այս կահերը համակառքին պաշտօնարանը տար :
When do you start ?	Ե՞րբ ճամբայ կելլէք :
We start in five minutes, Sir.	Հինգ վայրկենէն ճամբայ կելլենք, Պարոն :

Get up if you please.	Հրամեցէք, կառք մըտէք :
It seems to me to be very late.	Ինծի կերեւայ թէ շատ ուշ է :
How soon shall we be at the terminus?	Ո՞րչափ ատենէն երկաթուղին կը հասնինք :
We shall be there in a quarter of an hour.	Քառորդէ մը կը հասնինք :
I am afraid you will arrive too late for the eight o'clock train.	Վախեմ թէ ժամը ութին ելած շոգեկառքին չհասնիք :
Don't be uneasy, we are never after time.	Մի՛ վախէք, ոչ երբէք ուշ կը հասնինք :
Here we are at the station.	Ահա երկաթուղւոյն կայարանը հասանք :
The train will start in five minutes.	Հինգ վայրկենէն շոգեկառքը ճամբայ պիտի ելլէ :
Make haste and take your ticket.	Շուտ ըրէք թղթերնիդ առէք :
What place do you take?	Ի՞նչ տեղ պիտի բըռնէք :
I shall take a first class place.	Առաջին կարգի տեղ պիտի առնեմ :
I shall go in a second class carriage.	Երկրորդ աստիճանի կառքի մը մէջ մտնեմ :
What luggage have you Sir?	Ի՞նչ կահ ունիք, Պարոն :
I have two trunks, a carpet-bag, and a hat-box.	Երկու արկղ ունիմ, քսակ մը ու գլխարկի աման մը :

Take great care of the hat-box.	Գլխարկի ամանին աղէկ ուշ դիր :

THE SAME.	ՆՈՅՆ.
Here is the engine that is to draw us.	Ահա զմեզ տանող շոգեգործին :
We have two engines.	Երկու շոգեգործի ունինք :
It requires a very great force to draw a train of twenty five carriages.	Մեծ ոյժ պէտք է քսանըհինգ կառք քաշելու համար :
What is the power of those engines?	Այս մեքենաներուն ոյժն ինչ է :
They are each of twenty horse power.	Ամէն մէկը քսան ձիու ոյժ ունի :
Are we going by the fast train?	Առանց կենալու շիտակ պիտի երթանք :
No, this is the stopping train?	Ոչ, ասիկայ ճամբան տեղ տեղ կը կենայ :
At what o'clock does the luggage train start?	Ապրանք տանող կառքերը քանիին ճամբայ կելլեն :
There are two a day: one starts at ten o'clock in the morning, and the other at three in the afternoon.	Օրը երկու անգամ կելլեն. մէկը առաւօտը տասնին, մէկալը կէսօրուընէ ետքը երեքին :
Does your friend come with us?	Բարեկամնիդ մեզի հետ պիտի գայ :

No, he leaves at twelve o'clock.	Ձէ, կէսօրը ճամբայ պիտի ելլէ :
Will he make a long stay at ***?	Այս ինչ տեղը շատ պիտի կենայ :
He won't remain there, he expects to return to-morrow evening.	Շատ պիտի չկենայ. վաղը իրիկուն դառնալու միտք ունի :
Get to your places, gentlemen.	Կառք մտէք, Պարոններ :
Make haste, the train is just going to start.	Շուտ ըրէք, քիչ ատենէն շոգեկառքը ճամբայ պիտի ելլէ :
I prefer taking a place outside.	Աւելի կը սիրեմ կառքին վերայ նստիլ :
Get up quickly, Sir.	Շուտ ելէք, Պարոն :
That's the signal for starting.	Ահա ճամբայ ելլելու նշանը :
We are off.	Ահա ճամբայ ելանք :

THE SAME. — ՆՈՅՆ.

We are already far from the terminus.	Ասանկ ծնչ շուտով հեռացանք կայարանէն :
We have already gone four or five leagues.	Մեկեն չորս հինգ փարսախ տեղ ճամբայ ըրինք :
We have gone just six miles.	Ծիշդ վեց մղոն տեղ կտրեր ենք :
We went the last mile in two minutes.	Վերջի մղոնն երկու վայրկենի մէջ ըրինք :

We go a mile and a half a minute.	Ամէն մէկ վայրկենին մէկ ու կէս մղոն ճամբայ կընենք։
This is quick travelling.	Ասկէց շուտ ճամբորդութիւն ընել չըլլար։
The other day we were only two minutes and a half going a league.	Անցեալ օր երկու ու կէս վայրկենի մէջ մէկ փարսախ ըրինք։
Such speed would frighten me.	Այնչափ արագութենէն կը վախնամ։
For my part, I like going fast.	Ես շուտ երթալ շատ կը սիրեմ։
The faster we go, the better I like it.	Որչափ շուտ երթանք՝ այնչափ աւելի կը սիրեմ։
It seems to me that we are moving forward now with amazing swiftness.	Ինծի կերեւայ որ հիմա կարգէ դուրս արագութեամբ կերթանք։
I really begin to be frightened.	Իրաւցընէ ես սկսայ վախնալ։
I am afraid the engine will go off the rails.	Կը վախնամ որ մեքենան երկաթներուն վրայէն դուրս ցատքէ։
Don't be afraid.	Մի՛ վախնաք։
We are terribly shaken.	Սոսկալի կերպով ցընցուեցանք։
It is because we are far from the engine.	Վասն զի շոգեգործիէն շատ հեռու ենք։

There are twelve carriages, between ours and the engine.	Մերինին ու շոգեզործւոյն մէջտեղը տասուերկու կառք կայ:
Here is a train coming.	Ահա ուրիշ շոգեկառք մը կուգայ :
It is the back train.	Դարձի շոգեկառքն է:
It looks as if it were on our line.	Կարծես թէ մեր ճամբուն վերայ է :
Don't be alarmed ; the up trains always go on the other line and the down trains on this one.	Մի՛ խռովիք. դարձի շոգեկառքերը միշտ մէկալ գծին վրայէն կերթան, իսկ գնացողներն աստ վրայէն :

THE SAME. — ՆՈՅՆ.

Here we are at the first station.	Ահա առաջին հանգոյցը հասանք :
How long shall we stop here?	Հոս ո՞րչափ ատեն պիտի կենանք :
We shall stop here only three minutes.	Երեք վայրկենէն աւելի չենք կենար :
There are a great many passengers waiting at the station.	Կայարանը սպասող շատ ճամբորդ կայ :
We are off again.	Ահա նորէն ճամբայ ելանք :
What do I see before us?	Առջեւնիս ինչ է որ կը տեսնեմ :
It is a tunnel.	Ներքնուղի մըն է :
We are in the dark.	Մութի մէջ ենք :

We shall soon be out for the tunnel is not very long.	Մէջէն շուտով կելլենք, վասն զի ներքնուղին շատ երկայն չէ :
It seems to me, on the contrary, very long.	Ընդհակառակն ինծի շատ երկայն կերեւայ :
After this one we shall have to go through one of half a league in length.	Ասկէց ետքը ուրիշ մը պիտի զայ որ կէս փարսախ է :
Here is another station; are we to stop here ?	Ահա ուրիշ հանգոյց մըն ալ. հոս պիտի կենանք :
Yes. We shall remain here five minutes.	Այո, հոս հինգ վայրկեան պիտի կենանք :
Where are we now ?	Հիմա ո՞ւր ենք :
It seems as if we were suspended in the air.	Կարծես թէ օդի մէջ կախուած ենք :
We are passing over a viaduct.	Կամուրջի մը վրայէն կանցնինք :
Here is the last station but one.	Ահա վերջընթեր հանգոյցը :
We have another bridge to pass over.	Կամուրջ մըն ալ ունինք անցնելու :
We shall soon be at our journey's end.	Քիչ ատենէն ճամբորդութիւննիս պիտի լմննայ :
This station is the last.	Այս հանգոյցը վերջինն է :
Here we are at the terminus at last.	Ահա վերջապէս կայարանը հասանք :

Have the goodness to give me your ticket, Sir.	Թղթերնիդ ինծի տայ-իք, Պարոն :
Here it is.	Ահաւասիկ :
Let us go and get our luggage.	Երթանք կահերնիս առնունք :
Let us make haste to the omnibus, or we shall not get a place.	Շուտ ընենք համակառքին հասնինք, ապա թէ ոչ տեղ չենք գտնար :

EMBARKING. ՆԱՒԱՐԿՈՒԹԻՒՆ.

When do you leave for France?	Ե՞րբ Գաղղիա պիտի երթաք :
I shall leave in two days.	Երկու օրէն պիտի երթամ :
Where shall you embark.	Ո՞ւր նաւ պիտի մըտնաք :
I intend to take the steam-packet from London-Bridge.	Միտք ունիմ Լոնտրայի կամրջին քովէն շոգենաւ մըտնելու :
Have you your passport?	Անցագիրնիդ առա՞ծ էք :
I went to get it this morning.	Այս առաւօտ գնացի առի :
I advise you to go and secure your place immediately.	Ձեզի խորհուրդ կու-տամ որ մէկէն երթաք տեղերնիդ բռնէք :
If you wait longer perhaps you won't find a berth.	Թէոր աւելի ուշանաք՝ հաւանական է որ խորշ չգտնէք :

Do you go in the main cabin or the fore cabin ?	Առաջի՞ն տեղ պիտի բռնէք թէ երկրորդ :
What are your prices?	Տեղերուն գինն ի՞նչ է :
The main cabin is twenty five francs, and the fore cabin seventeen.	Առաջիններն են քսանըհինգ ֆրանք, երկրորդները տասնըեօթը :
The main cabin is a guinea, and the fare cabin seventeen shillings.	Առաջինները մէկ կինէ են, իսկ երկրորդները տասնըեօթը շիլին :
Let us go in the main cabin.	Առաջիններէն առնունք :
At what o'clock does the packet start ?	Շոգենաւը քանի՞ին կելլէ :
She leaves at four o'clock in the afternoon.	Կէսօրուընէ ետքը ժամը չորսին կելլէ :
Where is your luggage?	Կահերնիդ ո՞ւր են :
I have sent it on to the wharf.	Զանոնք առաջուց նաւահանգիստը ղրկեցի :
You did very right.	Շատ աղէկ ըրեր էք :
Have you been on board to secure your berth?	Նաւը գնացի՞ք խորշերնիդ բռնելու :
I have an excellent one.	Շատ գեղեցիկ խորշ մը ունիմ .
That's right. Now you can sleep across the channel.	Շատ աղէկ: Հիմա կրնաք քնանալով անցնիլ ծովը :
I always like to spend the night on the wa-	Միշտ կուզեմ որ գիշերանց ծովն անց-

ter, for I gain a day by it.	նիմ, վասն զի անով օր մը կը վաստըկիմ :
How long are you generally crossing the channel?	Սովորաբար որչափ ատենի մէջ ծովը կանցնիք :
We are generally about twelve or fourteen hours going from London-Bridge to Boulogne.	Լոնտրայի կամրջէն Պուլոյն երթալու համար սովորաբար տասուերկու տասնըչորս ժամ պէտք է մեզի :
Lose no time; the vessel will leave in half an hour.	Ժամանակ մի կորսնցրնէք. կէս ժամէն նաւը կելլէ :

THE SAME. — ՆՈՅՆ.

They are going to start.	Ճամբայ կելլեն :
I hear the bell.	Զանգակի ձայն կը լսեմ :
Let us walk faster.	Աւելի շուտ քալենք :
The vessel might start without us.	Նաւը մեզի չսպասեր' կերթայ :
Here we are on board.	Ահա նաւ մտանք :
Go on shore, if you please, gentlemen, we leave this instant.	Պարոնայք, նաւէն դուրս հրամեցէք, ճամբայ պիտի ելլենք :
Come, we must part.	Երթանք, պէտք է որ բաժնուինք :
I wish you a pleasant voyage.	Բարի ճանապարհ :

Thank you.	Շնորհակալ եմ :
Write to me without delay.	Տուտով ինծի թուղթ գրեցէք :
Certainly.	Անոր տարակոյս չըկայ :
Let us go down into the cabin.	Սենեակը իջնանք :
Where is my berth?	Խորշս ո՞ւր է :
Here it is, Sir; your name is written upon it.	Ահաւասիկ, Պարոն, անունննիդ վերան գրուած է :
Have the goodness to put my carpet bag in my berth.	Գիշերուան քսակս խորշիս մէջը դնէիք:
We are off.	Ահա ճամբայ ելանք :
Do you hear the noise of the engine?	Մեքենային ձայնը կը լսէք :
It shakes the whole vessel.	Բոլոր նաւը կը սարսէ :
Let us go on deck.	Նաւուն վերայ ելլենք:
Who is that man standing on the paddle box?	Դիտանոցին վերայ կեցած մարդն ո՞վ է :
It is the captain; he goes up there to give his commands.	Նաւապետն է. հրամանները տալու համար հոն կելլէ:

DURING THE PASSAGE. — ԾՈՎՈՒ ՎՐԱՅ.

The tide is strong.	Ծովուն մակընթացութիւնը սաստիկ է :

We are going rapidly.	Շատ շուտ կերթանք:
We shall not go so fast when we are in the open sea.	Երբոր ծովուն խորը բացուինք՝ աստնկ արագ չենք երթար:
We are in smooth water here.	Ջուրը հոս հանդարտ է:
We are now at the mouth of the Thames.	Ահա Թամիզին բերանը հասանք:
The sea is rough.	Ծովը ալեկոծ է:
Are you going to hoist sail?	Առագաստ պիտի բանա՞ք:
No; the wind is against us.	Ձէ. քամին մեզի դէմ է:
So much the worse; we shall have a long passage.	Ան է գէշը. ծովուն վերայ պիտի ուշանանք:
I am going into the cabin; I don't feel quite at my ease.	Սենեակը կիջնամ. շատ աղէկ չեմ:
What is the matter with you?	Ի՞նչ ունիք:
I shall be sea-sick if I remain longer on deck.	Թէոր նաւուն վերայ աւելի կենամ, ծովը զիս պիտի բռնէ:
For my part I am not liable to sea-sickness.	Զիս ամենեւին ծովը չբռներ:
I wish I could say the same.	Երանի՜ թէ զիս ալ չբռնէր:
How have you passed the night?	Գիշերն ի՞նչպէս անցուցիք:
Badly enough; the engine would not let me sleep.	Գէշ. մեքենան չթողուց որ քնանամ:

It is day-light.	Լուսացեր է :
Where are we?	Ո՞ւր ենք :
We shall soon be in sight of land.	Քիչ ատենէն ծովեզերքը պիտի երեւնայ :
The sea is calmer.	Ծովն աւելի հանդարտ է :
The wind is not so high as it was.	Քամին առաջուան պէս սաստիկ չէ :
We are going very fast.	Շատ շուտ կերթանք:
How many knots are we running an hour?	Ժամը քանի՞ հանգոյց կընենք :
Let us ask the helmsman.	Ղեկավարին հարցընենք :
We are making ten knots an hour.	Ժամը տասը հանգոյց կընենք :
I think I can see the coast.	Կարծեմ թէ ծովեզերքը կը տեսնեմ :
We shall soon arrive, we shall soon be in.	Քիչ ատենէն կը հասնինք :
Here we are.	Ահա հասանք :

LANDING. — ՆԱՒԷՆ ԵԼԼԵԼԸ.

Thank God, we are arrived safe and sound.	Փառք աստուծոյ, ողջ առողջ հասանք :
What o'clock is it?	Ժամը քանի՞ է :
It is eight o'clock.	Ժամը ութն է :
We have had a sixteen hour's passage.	Նաւարկութիւննիս տասնըվեց ժամ տեւեր է :

We cannot get into harbour.	Չենք կրնար նաւահանգիստը մտնել :
The tide is low.	Ծովը քաշուած է :
Gentlemen, you will be obliged to land in a boat.	Պարոնայք, հարկ պիտի ըլլայ որ մակուկով ցամաքն ելլէք :
The packet can't get into harbour yet these two hours.	Նաւը երկու ժամէն միայն կրնայ նաւահանգիստը մտնել :
Here are the custom-house officers.	Ահա մաքսաւորք :
Gentlemen, please to deliver me your passports.	Պարոններ, անցագիրնիդ ինծի տայիք :
Come to the custom-house.	Մաքսատուն եկէք :
Your luggage will be examined in three hours' time.	Երեք ժամէն կահերնիդ պիտի նայուին :
This delay is very disagreeable.	Այսչափ ուշանալը շատ անախորժ բան է :
Won't you give me back my passport?	Անցագիրս ինծի պիտի չտա՞ք :
It will be returned to you in Paris, at the prefecture of police.	Փարիզ կուտան ձեզի բարեկարգութեան պաշտօնարանը :
They will deliver you here a provisional passport which must be vised by the English consul.	Հոս ձեզի առժամանակեայ անցագիր մը կուտան որ Անգղիոյ հիւպատոսին ստորագրել պիտի տրուի :

All that is very disagreeable and occasions great loss of time.	Ասոնք անախորժ բաներ են, ու շատ ժամանակ կորսնցընել կուտան :
It is time to go to the custom-house for our things.	Հիմա ժամանակն է որ երթանք բաներնիս մաքսատունէն առնենք :
Will you examine this trunk directly if you please?	Կրնա՞ք շուտ մը սա սնտուկը նայիլ :
Take care not to spoil anything.	Զգուշացէք որ բան մը չաւրուի :
Now, tell me, do you know of a good inn?	Հիմա ըսէք ինծի թէ լաւ պանդոկ մը կը ճանաչէ՞ք :
Can you direct me to a good inn?	Կրնա՞ք ինծի լաւ պանդոկ մը ցուցընել :
Tell me, if you please, which is the best inn.	Ինծի գրուցէի՞ք թէ ամենէն լաւ պանդոկն ո՞րն է :
There are several very good ones.	Աղէկ պանդոկ շատ կայ :
Do me the favour to direct me to the best	Խնդրեմ, լաւագոյնը ո՞րն է ինծի ցուցընէք :
You may go to the hotel d'Angleterre with safety.	Կրնաք ապահովապէս Անգղիոյ պանդոկն երթալ :
You will find good accommodation there.	Շատ հանգիստ կըլլաք հոն :
In what street is it? — Which way is it?	Ո՞ր փողոցն է : — Ո՞ր կողմն է :

I will take you there, if you like.	Թէոր կուզէք, զձեզ հոն տանիմ :

IN AN INN.	ՊԱՆԴՈԿ.
Gentlemen, here is an inn of a pretty good appearance.	Պարոնայք, ահա պանդոկ մը որուն երեւոյթը աղէկ է :
Shall we alight here ?	Հոս կիջնանք :
Let us go in. We only run the risk of passing a bad night.	Մտնենք. շատ շատ՝ մէկ գիշեր մը անհանգիստ պիտի ըլլանք:
Can we sup at your house?	Հոս կրնանք ընթրել :
Have you any spare rooms?	Պարապ սենեակներ ունի՞ք :
Can we sleep here?	Հոս կրնանք պառկիլ:
Can you accommodate us with beds to-night?	Կրնա՞ք մեզի այս գիշերուան պառկելու տեղ տալ :
Can you accommodate us for this night.	Այս գիշեր կրնա՞քզմեզ հոս բնակեցընել :
Yes, Gentlemen, you will find fine rooms and good beds here.	Այո, Պարոններ, կըրնա՛ք հոս գեղեցիկ սենեակներ ու լաւ անկողիններ գտնել:
I don't care for the room, provided the bed is good.	Սենեակը հոգս չէ, բաւական է որ անկողինն լաւ ըլլայ :
You cannot find better beds any where.	Ասկէց աղէկ անկողին ուրիշ տեղ չէք կրնար գտնել :

Above all, make a good fire, for we are benumbed with cold.	Ամենէն աւելի մեզի լաւ կրակ մը վառեցէք, վասն զի շատ մսած ենք :
Waiter, show the gentlemen into the large parlour, and make a fire there immediately.	Մանչ, այս պարոնայքը մեծ սրահը տար, ու շուտ մը կրակ վառէ հոն :

WITH AN HOSTLER. / ՁԻԱՊԱՆԻ ՀԵՏ.

Gentlemen, we shall do well to go and see if our horses have all they want.	Պարոնայք, լաւ կընենք թէոր երթանք նայինք թէ ձիերնուս բան մը պակա՞ս է թէ չէ :
It is a very good thought.	Շատ լաւ մտածեր էք ;
Where is the hostler?	Ձիապանն ո՞ւր է :
Here I am, Gentlemen.	Ահա հոս եմ, Պարոններ :
Where are our horses?	Ձիերնիս ո՞ւր են :
They are in the stable.	Ախոռն են :
Have they eaten their oats?	Վարսակ կերա՞ն :
You have not taken care to rub them down as you should.	Վրանին յարդո՛վ աղէկ չես շփած :
You have not washed their feet.	Ոտքերնին չես լուացած :
They are still all over dirt.	Դեռ ցեխոտ են :

Wash them directly, and wipe them clean with straw.	Շո՛ւտ ըրէ լուա ձիերը, ու յարդով լաւ մը սրբէ։
Have you taken them to water?	Ջուր խմելու տարի՞ր։
Have you given them drink?	Ջուր խմցուցի՞ր։
Give them a bundle of hay, and some fresh straw.	Տրցակ մը չոր խոտ ու դալար յարդ տուր իրենց։
To-morrow morning you'll give them another feed of oats.	Վաղը առաւօտ նորէն իրենց չափ մը վարսակ տուր։
See whether their shoes are all good.	Նայէ թէ պայտերը ամէնն ալ աղէ՞կ են։
See whether there is any thing to be done to their shoes.	Նայէ թէ պայտերուն վերայ պակաս բան կա՞յ։
Here is one which is very likely to fail on the road.	Ահա ասիկայ կրնայ ճամբան իյնալ։
Take my horse to the farrier, and get him shod immediately.	Ձիս պայտարին տար, ու շուտով ոտքին երկաթ դնել տուր։

WITH AN INNKEEPER. — ՊԱՆԴՈԿԱՊԵՏԻ ՀԵՏ.

Gentlemen, what do you wish to have for your supper?	Պարոնայք, ձեր ընթրեացը համար ի՞նչ կուզէք։

Gentlemen, don't you wish to have some supper?	Պարոնայք, չէ՞ք ուզեր ընթրիք ընել:
What have you to give us?	Մեզի ի՞նչ կրնաք տալ:
Have you any thing to give us?	Մեզի տալու բան մը ունի՞ք:
I have a leg of mutton, a duck pie, and some cold fowl.	Ոչխարի զիստ մը ունիմ, բադի մսով կարկանդակ մը ու պաղ հաւու միս:
Or, if you prefer it, I will order some pigeons to be roasted.	Կամ, թէ որ կուզէք, ձեզի աղաւնի խորովեմ:
See, Gentlemen, what you please to order.	Տեսէք, Պարոններ, ի՛նչ որ կուզէք՝ այն ընեմ:
Choose what you like best.	Ինչ որ կախորժիք՝ այն ընտրեցէք:
My choice will be that of the compagny.	Ընկերութիւնն ինչ որ ախորժի՝ ես ալ զայն կախորժիմ:
Well, then, bring in a good cold fowl, and the duck pie.	Անանկ է նէ, մեզի աղէկ պաղ հաւ մը ու բադի կարկանդակը բեր:
Above all, let us have some of your best wine.	Աւելի նայէ որ մեզի գինիին աղէկը տաս:
Do you want any thing else?	Ուրիշ բան չէ՞ք ուզեր:
No. Only let us have our supper quickly,	Ոչ: Միայն թէ շուտով ընթրել տուր

for we want to rest ourselves.	մեզի, վասն զի հանգչիլ կուզենք:
You shall be served in a minute.	Մէկ վայրկենէն կե-րակուրնիդ պատ-րաստ կըլլայ:
Are our portmanteaus in our rooms?	Պայուսակնիս սենեա-կնիս է:
Yes, Gentlemen. I had them carried up before me.	Այո, Պարոնք: Աչքիս առջեւը զանոնք հոն տանել տուի:

THE SAME. — ՆՈՅՆ.

Are our rooms ready?	Մեր սենեակները պա-տրաստ են:
Are the beds made?	Անկողինները շինու-ած են:
Are you sure the sheets are well aired?	Ապահով էք որ սա-ւաններն աղէկ չոր են:
I am going to bed, and will endeavour to sleep.	Ես պառկելու կեր-թամ, պիտի ջանամ որ քունս տանի:
I advise you to do the same.	Ձեզի ալ խորհուրդ կուտամ որ դուք ալ պառկիք:
Waiter, remember that we want to set out exactly at six o'clock	Մանչ, չմոռնաս որ ճիշդ ժամը վեցին պիտի երթանք:
I shall take care to come and awake you.	Կրնայիմ որ զձեզ արթնցընեմ:

Where is your master? We wish to settle with him?	Տէրդ ո՞ւր է. կուզենք հաշիւնիս տեսնել:
He is just coming.	Ահա կուգայ:
How much do we owe you?	Պարտքերնիս ո՞րչափ է:
Have you made out our bill?	Հաշիւնիս ըրե՞ր էք:
How much does our bill come to?	Հաշիւնիս ո՞րչափի կելլէ:
How much are we indebted to you?	Պարտքերնիս ի՞նչ է ձեզի:
It is *** for your supper and beds, and *** for your horses.	Իրիկուան կերակուրին ու սենեկի համար այսչափ, ձիերուն համար ալ այսչափ:
It is a great deal, but we must submit to it.	Թէպէտեւ շատ է, բայց հոգ չէ:
How can you help it? People must always expect to be fleeced in inns.	Ի՞նչ պիտի ընես. պանդոկներու մէջ փետտուիլը միշտ աչք առնելու է:

TRAVELLING. — ՃԱՄԲՈՒ ՄԷՋ.

Are you going to Paris?	Փարիզ կերթա՞ք:
Do you go all the way to Paris?	Մինչեւ Փարիզ պիտի երթա՞ք:
I do.	Այո:

Then I shall have the pleasure of your company, for I am going there myself.	Ուրեմն ձեր ընկերութիւնը վայելելու ուրախութիւնը պիտի ունենամ, վասն զի ես ալ հոն կերթամ :
I am very glad of it.	Շատ ուրախ եմ :
Company makes a journey seem shorter.	Ընկերութեամբ ճամբու երկայնութիւնը կը կարճընայ :
It is very disagreeable to travel by one's self.	Շատ անախորժ բան է մինակ ճամբորդութիւն ընելը :
But in company we talk, we chat, and time passes unperceived.	Բայց երբոր մարդ ընկեր կունենայ, հետը կը խօսի, կը զրուցէ, եւ ժամանակը առանց իմանալու կանցնի :
How far do they reckon it from here to Paris?	Ասկէց Փարիզ ո՞րչափ հեռու է :
They call it seventy leagues, but they are short.	Եօթանասուն փարսախ, բայց փարսախները կարճ են:
I have heard that there are thirty-seven posts.	Լսեր եմ թէ երեսունըեօթը հանգոյց կայ եղեր :
It is true. But the number of posts never agrees with that of leagues.	Այս իրաւ է : Բայց հանգոյցներուն թիւը ոչ երբէք փարսախներուն հետ կը համեմատուի :
The post-masters al-	Հանգուցի տէրերն

ways contrive to reckon them to their advantage.	միշտ իրենց ուզածին պես կրհամրեն փարսախները :
When do you think we shall reach Paris?	Ե՞րբ կը կարծէք որ Փարիզ հասնինք :
I hope we shall arrive to-morrow.	Յուսամ թէ վաղը կը հասնինք :
But it may be rather late, for the roads are very bad.	Բայց թերեւս քիչ մը ուշ, վասն զի ճամբաները շատ գէշ են :
The roads are indifferent.	Ճամբաները շատ աղէկ չեն :
The roads are heavy.	Ճամբաները կպչուն են :
The rain has spoiled all the roads.	Անձրեւէն բոլոր ճամբաները աւրուեր են:
Did you ever travel this way before.	Ուրիշ անգամ այս ճամբան բռած էք :
Several times.	Շատ անգամ :
I know the road perfectly well.	Այս ճամբան շատ աղէկ կը ճանչնամ :
Where is the first stage?	Առաջին կենալու տեղն ո՞ւր է :
Where do they change horses?	Ձիերն ո՞ւր կը փոխուին :
Shall we not pass through *** ?	Այս ինչ տեղէն չե՞նք անցնիր :
No. We leave it on the left.	Ոչ : Ձախ կողմերնիս կըթողունք անիկայ :
But we shall pass through ***, where they stop to change horses.	Բայց այս ինչ տեղէն պիտի անցնինք, ուր ձիերը փոխելու համար կը կենանք :

What place shall we sleep at?— Where shall we sleep?	Ո՞ւր պիտի պառկինք: — Գիշերն ո՞ւր պիտի անցրնենք :
We shall sleep at ***, from which place there are only sixteen posts to Paris.	Գիշերը պիտի անցրնենք ***, անկից Փարիզ հասնելու համար տասնվեց հանգոյց կը մնայ :
Then we shall be more than half way.	Ուրեմն ճամբուն կէսն ալ անցած կըլլանք :
Yes; but then there are many hills, and the roads are generally very bad.	Այո, սակայն շատ ալ զառ ի վերներ կան, եւ ընդհանրապէս ճամբաները գէշ են:
Why do they prefer this road to the other?	Ուրեմն ինչո՞ւ այս ճամբան կը բռնեն քան թէ մէկալը :
It is because they save two posts.	Վասն զի ասով երկու հանգոյց կը վաստըկուի :
That is not to be slighted; for travelling is very expensive.	Այս ալ քիչ բան չէ, վասն զի ճամբորդութիւնը շատ սուղ է :
One must always have one's purse in one's hand; and even then one is very badly accommodated at inns.	Միշտ պէտք է որ մարդ ձեռքը պատրաստ ունենայ. անով ալ շատ անգամ պանդոկներու մէջ հանգիստ չըլլար :
For my own part, I am very glad to enjoy your company.	Ես շատ ուրախ եմ որ ձեր ընկերութիւնը վայելեցի :

But I confess I wish I was arrived already.	Բայց իրաւ կըսեմ որ կուզէի արդէն հասած ըլլալ:
I readily believe you.	Կը հաւատամ:
But let us have patience.	Սակայն քիչ մըն ալ համբերենք:
A few hours more, and we shall be at our journey's end.	Քանի մը ժամէն ճամբորդութիւննիս կը լմըննայ:

FIFTH PART.

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

MODELS OF LETTERS. — ՕՐԻՆԱԿՔ ՆԱՄԱԿԱՑ.

TO BEGIN A LETTER — ՆԱՄԱԿԸ ՍԿՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

My Lord.	Տէր իմ :
Sir.	Պարոն :
My Lady, Madam.	Տիկին :
Gentlemen.	Պարոնայք :
Miss.	Ազնիւ օրիորդ :
My dear Sir.	Սիրելի պարոն :

My dear friend.	Սիրելի բարեկամ: Սիրեցեալդ իմ բարեկամ:
My dear.	Սիրելիդ իմ: Սիրունիկդ իմ:

TO END A LETTER. ՆԱՄԱԿԸ ԼՄՐՆՑԸՆԵԼՈՒ.

I have the honour to be, My Lord, your lordship's	Մնամ մեծարանօք Վսեմափայլ Տէրութեանդ Ձերոյ,
Most obedient humble servant.	Խոնարհ եւ հնազանդ ծառայ:
I have the honour to be, My Lord,	Մնամ խորին մեծարանօք,
Your lordship's,	Արհիապատիւ Տէրութեանդ,
Most obedient humble servant.	Խոնարհ եւ հնազանդ ծառայ:
Believe me to be, Sir, with affectionate regards, yours truly.	Սիրոյ ողջոյնս մատուցանելով մնամ, Ազնուութեանդ,
Yours truly. — Yours sincerely. — Yours faithfully.	Անձնանուէր: — Անձկաւէտ:

Yours affectionately.	Սիրակցորդ։
Your friend. — Your devoted friend.	Մտերիմ բարեկամ։— Անձնանուէր բարեկամ։
I have the honour to be, Madam,	Մնամ մեծարանօք, Ազնուափայլ Տիկնոջդ,
Your most obedient humble servant.	Խոնարհ ծառայ։
I have the honour to be very respectfully, Sir,	Մնամ յարգանօք Վսեմափայլ (Ոստիկանիդ, եւ այլն),
Your very obedient humble servant.	Խոնարհ ծառայ։
I beg to subscribe myself, Sir,	Մնամ մեծարանօք Ազնուութեան Ձերոյ,
Your obedient humble servant.	Խոնարհ ծառայ։
I am, Sir, with the highest regard,	Խնդրելով Պարոն, որ ընդունիք իմ խորին մեծարանքս, մնամ,
Your very obedient humble servant.	Խոնարհ ծառայ։
Believe me to be, Sir, with best wishes, yours truly.	Խնդրելով, Պարոն, որ ընդունիք սիրալիր ողջոյնս, կը մնամ։

MODELS OF BILLETS.

ՕՐԻՆԱԿՔ ՏՈՄՍԱԿԱՑ.

Mr. A., being obliged to go into the country to-morrow, desires Mr. F. not to give himself the trouble of calling upon him. Mr. A. will be very glad to see Mr. F. the day after to-morrow, at any hour that may be most convenient to him.

Պ. Ա.. վաղը գեղ երթալու ստիպուած ըլլալով՝ կաղաչէ զՊարոն Ֆ որ չաշխատի իրեն գալու : Պ. Ա. ուրախ կըլլայ թէոր կարենայ տեսնել զՊարոն Ֆ վաղը չէ մէկալ օր ո՛ր ժամն որ իրեն աւելի յարմար է :

Mrs. B. presents her compliments to Mr. E. As she is going to a ball this evening, she cannot have the pleasure of seeing him to-day, and begs Mr. E, will be so kind as not to call to-morrow till eleven o'clock.

Բ. տիկինը կողջունէ զՊարոն Է : Այս իրիկուն պարի երթալուն համար՝ այսօր պիտի չկարենայ հետը տեսնուիլ, եւ կաղաչէ որ Պարոն Է վաղը ժամը տասնըմէկին հրամէ գայ :

Mr. and Mrs. C. present their compliments to Mr. and Mrs., N., and beg the honour of their company to din-

Պարոն եւ Տիկին Ք իրենց սիրոյ ողջոյնը կը մատուցանեն Պարոն եւ Տիկին Ն.—ին, եւ կաղաչեն որ երէ

ner on Thursday next at five o'clock.

գալ հինգշաբթի ժամը հինգին իրենց տունը ճաշի հրամեն՝ իրենց մեծ պատիւ ըրած կըլլան:

Mrs. D. presents her compliments to Miss L. and requests the favour of her company to cards on Tuesday evening next.

Տիկին Տ. կողջունէ զՆ. Օրիորդը եւ կաղաչէ որ գալ երեքշաբթի իրիկունը շնորհք ընէ իր տունը հրամէ: Թուղթ պիտի խաղցուի:

Mrs. E. to Miss B.

Տիկին Է. առ Օրիորդըն Փ.

My dear B. I shall be alone this evening and if you will favour me with your agreeable company to tea, I shall feel extremely obliged. Pray do not refuse me this kindness. Adieu.

Կը հրաւիրեմ զձեզ, սիրելիդ իմ Փ, որ այս իրիկուն չայը իմ տունս խմէք. մինակ ըլլալով՝ կը յուսամ որ հաճիք ձեր նազելի ընկերակցութիւնը ինծի վայելել տալու: Կաղաչեմ որ այս շնորհքը չզլանաք: Ողջ լերուք:

Answer.

Պատասխան.

I am much obliged to you, my dear E. for your kind invitation: and am extremely sorry

Մեծապէս շնորհակալ եմ, սիրելիդ իմ Է, ձեր սիրալիր հրաւէրքին համար. բայց շատ կը

it is not in my power to accept it, because we expect company this evening. To-morrow, I shall be entirely at your service; and if you do not call on me in the morning, I shall certainly wait on you in the evening.

ցաւիմ որ չեմ կրնար ընդունիլ, վասն զի այս իրիկուն հրաւիրանք ունինք: Վաղը կրնամ ձեր փափաքը կատարել. եւ թէոր առաւօտը զիս տեսնելու չգաք, անտարակոյս ես կուգամ իրիկունը ձեզի:

Mrs. G. to Mrs. F.

Տիկին Ժ. առ Տիկին Ֆ.

I have just arrived from Constantinople: if you are at leisure to give me a call, I have news to impart that will afford you pleasure. I shall be at home the whole day, so that you may choose your time.

Պօլսէն դեռ նոր հասայ. թէ որ զբաղմունքներդ կը ներեն ինծի գալու, ձեզի համար զուարճալի լուրեր ունիմ: Բոլոր օրը տունն եմ. ուստի կրնաք ուզած ատեններդ գալ:

Answer.

Պատասխան.

I am gratified to hear that you are at last returned from—. Had I no other motive than that of congratulating you on your happy arrival after so long an absence, that alone would induce

Մեծաւ ուրախութեամբ լսեցի որ վերջապէս (Պօլսէն) դարձեր էք: Ուրիշ պատճառ ալ չունենայի, այսչափ երկար ատեն հեռու մնալէն ետքը ողջ առողջ հասնել-

me to call on you. You may therefore depend upon seeing me this evening about six o'-clock.	նուդ համար պէտք էր որ գայի ձեզի ուրախակից ըլլալու: Ուստի այս իրիկուն ժամը վեցին ատենները անշուշտ պիտի գամ ձեզի:
Mr. A. to Mr. D.	**Պարոն Ա. առ Պարոն Տ.**
Please to return me the book I lent you, as soon as you have read it: my sister would like to read it after you. You are too polite not to use all possible despatch to oblige me.	Կաղաչեմ որ ձեզի փոխ տուած գիրքս կարդալէն ետեւ ինծի դարձրնէք: Քոյրս կը փափաքի որ ինքն ալ ձեզմէ ետքը կարդայ: Ձեր մարդավարութիւնը գիտնալով անտարակոյս եմ որ շուտով խնդիրքս կը կատարէք:
With best wishes, I am, dear Sir, yours truly.	Խնդրելով որ ընդունիք իմ մեծարանաց ողջոյնս, մնամ Ազնուութեանդ:
Answer.	Պատասխան.
I send you back the book which you lent me; I have read it with much pleasure. I have no doubt that your sis-	Ինծի փոխ տուած գրքերնիդ կը ղրկեմ. շատ զուարճութեամբ զանիկայ կարդացի. անշուշտ եմ որ աղ-

ter will be equally pleased. It is very entertaining and useful for young persons who are fond of improving themselves.

նիւ քոյրերնիդ ալ նոյնպէս կը զուարճանայ. վասն զի բան սորվիլ ուզող երիտասարդաց համար շատ զուարճալի եւ միանգամայն օգտակար գիրք է:

Believe me very sincerety yours.

Մնամ մեծարանօք, Ազնուութեանդ:

Mr. G. to Mr. M.

Պ. Ժ. առ Պ. Մ.

As it is very fine today, I expect you after dinner; we will take a walk in the Park, and afterwards go and take tea in Kensington Gardens, where we will amuse ourselves till the evening. Do not forget to come as soon as you have dined.

Որովհետեւ այսօր օդը շատ գեղեցիկ է, ճաշէն ետեւ ձեզի կը սպասեմ, որպէս զի մէկտեղ երթանք հասարակաց պարտէզին մէջ քալենք. ետքը երթանք Քէնսինկթընի պարտիզին մէջ չայ մը խմենք ու մինչեւ իրիկուն հոն զուարճանանք: Զմոռնաք ճաշէն ետքը մէկէն գալու:

Mr. N. to Mr. S.

Պարոն Ն. առ Պարոն Ս.

I beg you will not expect me to-night, for I shall be engaged the

Կաղաչեմ որ այս իրիկուն ինծի չսպասէք. վասն զի բոլոր

whole evening. The bearer will explain to you the reasons which compel me to postpone the pleasure of seeing you. I am persuaded you will approve of them, and believe me to be with profound respect, etc.

իրիկուան համար ուրիշի խօսք տուեր եմ: Այս թուղթս բերողը հրամանոցդ կը համկրցրնէ թէ ինչ պատճառներով հարկադրուած եմ ձեր տեսութեան ուրախութիւնս ուշացրնել: Անտարակոյս իրաւունք կուտաք ինծի, եւ կընդունիք իմ խորին մեծարանքս:

Sir,

Պարոն,

A new play is to be performed this evening and I purpose going early to get a good seat, for I do not like to be incommoded. They say Mr. Kean is to play the principal part. Imagine what a crowd there will be If you have time to go with me, you will afford me a great deal of pleasure.

Այս իրիկուն նոր ողբերգութիւն մը պիտի ձեւացրնեն, եւ կը մտածեմ որ կանուխկեկ հոն երթամ աղէկ տեղ մը գտնելու համար, վասն զի չեմ ուզեր նեղութիւն քաշել: Կրսեն թէ գլխաւոր կտորը Պարոն Քին պիտի խաղայ: Ալ մակաբերեցէք թէ ինչ բազմութիւն պիտի ըլլայ: Թէ որ ժամանակ ունիք հետս գալու, ինծի մեծ ուրախութիւն կը պատճառէք:

Sir,	Պարոն,
Do not be surprised that I did not keep our appointment. I was confined to my room by a violent head-ache, though study did not occasion it. You know that I am naturally somewhat indolent, but to-morrow I shall be at your disposal the whole day.	Ժամադրութեան տեղը չգտնուելուս մի զարմանաք: Գլուխս սաստիկ ցաւելուն համար հարկ էր որ տունը մնայի: Չկարծէք թէ ասոր պատճառը ուսումնասիրութիւն ըլլայ, վասն զի գիտէք որ բնութեամբ քիչ մը ծոյլ եմ. բայց վաղը բոլոր օրը ինչ որ կուզէք պատրաստ եմ ընելու:

MODELS OF BILLS OF EXCHANGE. — ՕՐԻՆԱԿՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ.

For 236 francs.	Վասն 236 ֆրանքաց.
London. Jan. 1, 1855.	Լոնտոն, 1 Յունուար 1855.
At sight, please to pay this first bill of exchange to Mr. A., the sum of	Այս առաջին փոխանակագիրս տեսնելով հաճիք վճարելու

two hundred and thirty-six francs, for value received of him in cash (or in goods), and place it to account as per advice from...	Պ. Ա. ին, երկուհարիւր երեսունըվեց ֆրանքի գումարը որ կանխիկ առի (արծաթով կամ ապրանքով), եւ անցրնէք ըստ ծանուցման...
To Mr. P., Merchant, Paris.	Առ Պարոն, Փ. Վաճառական ի Փարիզ:
London, Feb. 6, 1855.	Լոնտոն, 6 փետրուար 1855.
Sir,	Պարոն,
I have this day drawn on you for four hundred and fifty francs, payable at sight to Mr. S. for value received of him. I beg you will honour it and place it to my account.	Այսօր հրամանոցդ վրայ փոխանակագիր մը յուղարկեցի չորս հարիւր յիսուն ֆրանքի, որ պիտի վճարէք ի տեսութեան առ Պ. Ս., փոխարէն իրմէ առնուած ստակին: Կաղաչեմ որ առանց դժուարութեան վճարէք ու իմ հաշուիս անցրնէք:
I am, Sir, Your, etc., etc.	Կը մնամ, Պարոն, Ազնուութեանդ, եւ այլն:

To Mr. R., Banker, Paris.	Առ Պարոն Ռ., Սեղանաւոր, ի Փարիզ:
For 200 francs 70 centimes.	Հատուցանելի 200 ֆրանք եւ 70 հարիւրորդ:
Constantinople march 7, 1855.	Կոստանդնուպօլիս, 7 մարտ 1855.
One month after sight you will please to pay on this sole bill of exchange, to Mr. L., or order, the sum of two hundred francs seventy centimes, for value received of him in goods, and place it to account as per advice, from your, etc.	Կըխնդրեմ որ բարեհաճիք վճարելու այս միակ փոխանակագիրս տեսնելէն մէկ ամիս ետքը Լ. Պարոնին կամ ըստ իւր հրամանին երկու հարիւր ֆրանք եւ եօթանասուն հարիւրորդ որոյ արժէքն ընդունուած է իրմէ վաճառքով, որ կանցընէք ի հաշիւ ըստ ծանուցման, եւ այլն.
To Mr. E., Merchant, Vienna.	Առ Պարոն Է., Վաճառական ի Վեննա:
For 6,000 francs.	Արժէք 6,000 ֆր.
London, April 15, 1855	Լոնտոն, 15 Ապրիլ 1855.
On the twentieth of	Առաջիկայ Մայիսի

May next, please to pay to Mr. John Moore, or order, the sum of six thousand livres, for value received of him, and place it to account, as per advice from your, etc.

20 ին բարեհաճիք հատուցանել Պարոն Յովհաննէս Մուրին կամ ըստ իւր հրամանին, վեց հազար ֆրանք, որ հաշուով ընդունուած է, եւ անցրնէք ի հաշիւ ըստ ծանուցման, եւ այլն :

To Mr. F., Merchant, Marseilles.

Առ Պարոն Փ., Վաճառական ի Մարսիլիա :

London, Feb. 11, 1855.

Լոնտոն, 11 Փետր. 1855.

Two months after date, please to pay Mr. —, or order, the sum of — pounds — shillings and — pence, and place the same to the account of your humble servant.

Երկու ամսէն բարեհաճիք վճարել այս անուն Պարոնին, կամ ըստ իւր հրամանին — լիրայ, — շիլին, եւ — փէնս, եւ անցընէք ի հաշիւ խոնարհ ծառային ձերոյ :

A. F.

Ա. Փ :

To Mr. L., Merchant, Smyrna.	Առ Պարոն Լ., Վաճառական ի Զմիւռնիա :
For 4,000 francs.	Արժէք, 4,000 ֆրանք:
Constantinople, March 2, 1855.	Պօլիս, 2 մարտ 1855.
At double usance please to pay, on this bill of exchange, to Mr. R –, four thousand francs for value received of Mr. W.—, and pass the same to account, as per advice from your, etc.	Երկու երեսնեակէն բարեհաճիք հատուցանել այսու փոխանակագրով Պարոն Ռ — ին չորս հազար ֆրանք, որուն արժէքը ընդունած է Պարոն Վ. —, եւ անցընէք ի հաշիւ բստ ծանուցման, եւ այլն :
To Mr G., Banker, Paris.	Առ Պարոն Գ., Սեղանաւոր ի Փարիզ :

BILLS AND RECEIPTS. — ՊԻՏԱԿ ԵՒ ՄՈՒՐՀԱԿ.

For 220 francs.	Արժէք 220 ֆրանք:
Six months after date,	Թուականէս վեց

I promise to pay Mr. A —, or order, the sum of two hundred and twenty francs, for value received in goods. — Paris, this 8 th day of January, 1855.

ամիս ետքը կը հատուցանեմ այս անուն Պարոնին, կամ ըստ իւր հրամանին, երկու հարիւր քսան ֆրանք, որ ընդունուած է վաճառքով: — Փարիզ, 8 Յունուար 1855:

London, Feb. 12, 1855.

Լոնտոն, 12 Փետր. 1855.

On demand, I promise to pay Mr E. or order, the sum of— pounds for value received.

T. B.

Ըստ տեսանելոյն կը խոստանամ վճարել — Պարոնին, կամ ըստ իւր հրամանին, — լիրայ սթեռլին, որոյ արժէքն ընդունուած է:

Տ. Բ.

For 600 francs.

Արժէք 600 ֆրանք:

On the eighteenth of August next, we promise to pay to Mr. S. the sum of six hundred francs, value received in cash. — London, March the 26th, 1855.

Առաջիկայ Օգոստոսի տասնըութին կը հատուցանենք Պարոն Ս — ին վեցհարիւր ֆրանք, որ ընդունած ենք դրամով: — Լոնտոն, 26 Մարտ 1855:

A RECEIPT.	ՄՈՒՐՀԱԿ.
Received of Mr. Dubois, the sum of one hundred pounds, which I had lent him, on his note of hand of the 4th of last January. — Smyrna, May the 10 1855.	Ընկալայ ի Պարոն Տիւպուայէ հարիւր լիրայ, զոր փոխ տուած էի իրեն՝ մուրհակով մը որ գրուած էր անցեալ Յունուարի 4 ին: — Զմիւռնիա, 10 Մայիս 1855:

ANOTHER RECEIPT.	ՈՒՐԻՇ ՄՈՒՐՀԱԿ.
I hereby acknowledge, that I have received of Mr. H.— the sum of twenty francs, for two years interest of the sum of two hundred francs, which he owes me, due on the first of February last.	Ընկալայ ի Պարոն Հ — . է քսան Ֆրանք իբրեւ երկամեայ շահ երկու հարիւր Ֆրանքի գումարին որ պարտական է ինծի անցեալ փետրուարի րսկիզբէն ի վեր:
Constantinople April, the 30th, 1855.	Կոստանդնուպօլիս, 30 Ապրիլ 1855:

MODELS OF COMMERCIAL LETTERS.

ՕՐԻՆԱԿՔ ՆԱՄԱԿԱՑ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

First letter. For beginning a correspondence.

With the hope of increasing the number of our correspondents in France, we have desired several of our friends to inform us of the different mercantile houses of that country, with which we might negociate with safety. As they have convinced us of your integrity, and of the good commission you give for the sale and purchase of various goods, we request you to accept our services, which we offer you upon all occasions, our principal commerce consisting in buying and selling—, etc.

Թուղթ Առաջին: Թղթակցութեան սկսելու համար :

Յուսալով որ կարենանք Գաղղիոյ մէջ մեր թղթակիցները շատցրնել, քանի մը բարեկամներէ խնդրեցինք որ իմացրնեն մեզի թէ այն երկրին մէջ ինչ վաճառականութեան տներ կան որ, կարենանք հետերնին ապահով կերպով առուտուր ընել: Եւ որովհետեւ շատ գովեստներ լսեցինք ձեր արդարութեանը վրայ, եւ թէ լաւ յանձնարարութիւններ կընէք այլ եւ այլ վաճառքներ գնելու եւ վաճառելու, կը խնդրենք որ մեր ծառայութիւնը ընդունիք որ եւ իցէ առթի մէջ. եւ մեր գլխաւոր առուտուրն է գնել ու ծախել—, եւ այլն :

We flatter ourselves that, when you have seen our method of transacting business and of consulting the interest of our constituents, you will readily consent to carry on a correspondence that may be equally useful and advantageous to both parties. You can on your part make enquiries of whom you please, concerning our firm; we are persuaded that no one can, with justice, say any thing to our disadvantage.

Չենք տարակուսիր որ երբ ճանչնաք մեր գործողութեան կերպը, եւ թէ ինչպէս մեզի յանձնարարութիւն ընողներուն շահը կը հոգանք, սիրով կը յօժարիք թղթակցութիւններ պահելու մեզի հետ, որով թէ ձեզի եւ թէ մեզի օգուտ կըլլայ: Դուք ալ ձեր կողմանէ կրնաք ուզկից որ ուզէք տեղեկութիւններ առնուլ մեր վրայ. եւ մտքերնիս դրած ենք թէ մէկը չկայ որ կարենայ արդարացի կերպով մեր վրայ պարսաւ մը ընել:

We hope you will favour us with your orders: be assured of our attention and vigilance to promote your interest, being principally desirous to convince you of the perfect regard with which we have the honour to be,

Յուսանք թէ զմեզ ձեր հրամաններովը կը պատուէք. ամենեւին մի երկբայիք որ ուշադրութեամբ եւ արթնութեամբ պիտի ջանանք յաւ ծառայել ձեզի. վասն զի մեր մեծ բաղձանքը այն պիտի ըլլայ միշտ որ գործով ցուցընենք անձնանուէր մեծա-

բանքը որով կը մնանք,

Gentlemen,
Your very humble
Servants.

Պարոնայք,
Խոնարհ ծառայք
Ձեր:

Answer.

Պատասխան.

Gentlemen,

Պարոններ,

In reply to your favour of the 15th instant, we beg to inform you that we are much flattered by the favourable opinion you entertain of us. We embrace, with pleasure, the opportunity of cultivating an acquaintance with you. Gentlemen, finding no necessity to make further inquiry, and we shall upon occasion unhesitatingly avail ourselves of your obliging offers.

Ի պատասխանի ձեր թղթոյն որ ամսոյս 15 ին գրուած էր, կիմացընենք թէ շատ մեծ ուրախութիւն է մեզի գիտնալը որ այդպիսի բարի կարծիք ունեցեր էք մեր վերայ: Յօժարամիտ սիրով այս առիթս ձեռք կառնունք, Պարոններ, ձեզի հետ մասնաւոր բարեկամութիւն մը հաստատելու, եւ ուրիշ տեղեկութիւններ առնելու կարօտ չենք. ուստի առիթը գալուն պէս ձեր բարերարութեան առաջարկութենէն շնորհակալութեամբ հաներձ օգուտ պիտի քաղենք:

We assure you that at present our commissions are very inconsiderable; for trade has been languishing so long, and especially since the beginning of the war, that we are unwilling to embark in any new enterprise. However, in order to open a correspondence, which may subsequently prove advantageous, be so kind as to send us the price current of —. If you can hold out to us but the slightest prospect of a successful issue, we will forward you two or three bales of goods, to prove to you how sincerely we desire to be reckoned among the number of your correspondents. We beg you to favour us with your orders on all occasions in whicht it may be in our power to be of any service.

We remain,

Իրաւցընէ առ ժամս մեր յանձնարարութիւնները խիստ քիչ են վասն զի շատ ատենէ ի վեր առուտուրը դադրածի պէս է, մանաւանդ քանի որ պատերազմը սկսած է. այնպէս որ բանի մը ձեռք զարնելու չենք համարձակիր: Եւ սակայն որպէս զի ըսկսինք այնպիսի թղթակցութիւն մը ընել որ ատենով կրնայ օգտակար ըլլալ, կը խնդրենք որ խրկէք մեզի այս ինչ նիւթերուն սովորական գները: Եթէ աղօտ նշոյլ մըն ալ յուսոյ ցուցընէք մեզի թէ յաջողութիւն կրնանք գտնել, կը խրկենք ձեզի երկու կամ երեք հակ —, որպէս զի ցուցընենք թէ կը փափաքինք ձեր թղթակիցներուն կարգը անցնիլ: Կը խնդրենք որ ինչ առիթներու մէջ ալ որ ձեզի օգտակար կրնանք ըլլալ՚ զմեզ ձեր հրամաններովը պատուէք:

Gentlemen,	Պարոններ,
Your most obedient humble Servants.	Խոնարհ ծառայք Ձեր:
Second letter.	Թուղթ երկրորդ:
Gentlemen,	Պարոններ,
By order and on account of Messrs.——, of—, we have shipped on board the ship—, captain—, who is to sail from our port for the above place, twenty bales of—, and eight of—, amounting to — pounds sterling. We send you hereto annexed the bill of lading, signed by the said captain, and beg you will cause that insurance to be taken care of to the best advantage of our friend at,—with whom you will settle your disbursement on this business. We have yet remaining a cargo of the same nature to	Ըստ հրամանի եւ ի հաշիւ այս անուն Պարոնայց որ ի —, բեռնաւորեցինք այս անուն նաւը, որոյ նաւապետն է —, եւ մեր նաւահանգստէն կերթայ նոյն քաղաքը, քսան հակ —, եւ ութը հակ —, բոլորին գինը — լիրայ սթերլին: Թղթոյս մէջ կը գտնէք անոր յետկարը, նաւապետէն ձեռնագրուած. կը խնդրենք որ որ այն վաճառքներուն ապահովագրութիւնը հոգաք մեր թղթակցին լաւագոյն շահովը, եւ այս բանիս ըրած ծախքերնուդ համար իրեն հետ յարմարցընէք խօսքեր-

forward to you in a few weeks, and we request of you in due time to take the trouble of having it likewise insured in your town.	նիդ ։ Քանի մը շաբաթեն այսպիսի յուղարկ մը նորէն պիտի ընենք, եւ կը խնդրենք որ ի դէպ ժամանակի աշխատութիւն յանձն առնուք նոյնպէս ատ տեղը ապահովագրութիւն ընելու ։
We remain, with all possible regard,	Կը մնանք յարգութեամբ եւ մեծարանօք,
Gentlemen,	Պարոններ,
Your obedient servants	Խոնարհ ծառայք Ձեր
Answer.	**Պատասխան.**
We beg to acknowledge the receipt of your's of the—instant, inclosing the bill of lading of twenty bales of—, and eight of—, which you have placed to the account of Messrs. —— brothers, of —, on board the ship——, captain—— commander. We have, agreeably to your request, effected the insurance of the above mentioned goods, and shall immediately advise our said friends of	Ամսոյս — ին գրած թղթերնիդ ընդունելու պատիւն ունեցանք, որուն մէջ էր յետկար մը քսան հակ — եւ ութ հակ — որ դուք բեռնաւորեր էք ի հաշիւ Պարոնայց — եղբարց, — շոգենաւուն վերայ, որոյ նաւապետն է —, եւ մեզի կը յանձնէք ապահովագրութիւնը. եւ ահա մենք ալ հրամաննիդ կատարեցինք եւ այսօր կը ծանուցանենք նոյն Պարոններուն ի —, իմացընելով ի-

this transaction, and inform them of the premium at which we procured the said insurance. We shall pursue the same method with respect to what remains to be forwarded; and the moment we receive advice of it from you, we will give it our best attention.

րենց նաեւ ինչ վճարքով կրցանք այն ապահովագրութիւնն ընել: Մնացած յուղարկին համար ալ նոյնպէս կընենք, եւ երբոր դուք մեզի իմացրնէք՝ նոյնպէս մեր կողմանէ ամենայն կերպով փոյթ կունենանք այս բանիս:

In the mean time we have the honour to be Gentlemen, your most obedient humble servants.

Առ այժմ պատիւ կը համարինք մեզի, Պարոններ, մնալ միշտ, Խոնարհ ծառայք ձեր:

Third letter.

Թուղթ երրորդ:

Sir,

Պարոն,

I have received your's of the—last with the invoice and bill of lading enclosed. I remit you annexed by this day's post, a bill of exchange upon Messrs. —— and Co. for —; and beg you will forward me by the first opportunity thirty pieces of linen, about six shillings per yard,

Անցեալ ամսոյն 15 ին գրած թղթերնիդ ընդունեցայ՝ հանդերձ մէջի հաշուեցուցակովն ու յետոկարովը: Գրոյս հետ կը յուղարկեմ ձեզի թղթատարով փոխանակագիր մը յանուն — Պարոնայց եւ Ընկ. որ ի —, եւ կը խնդրեմ որ առաջին պատեհաւ յուղարկէք ինծի երեսուն ծրար

and twelve pieces of cloth, about one guinea a yard; the whole to your taste and judgment. I remain,

կտաւ՝ կանգունը գրեթէ վեց շիլին, տասուերկու ծրար— չուխայ, կանգունը իբր մէկ կինէ, բոլորն ալ ձեր ընտրութեանը համեմատ: Մնամ

Sir,
Your obedient servant

Պարոն,
Խոնարհ ծառայ Ձեր

Answer.

Պատասխան.

Sir,

Պարոն,

Yours of the — instant is now before me, together with your draft on Messrs.—— and Co. for— ; it has been accepted, and the amount duly carried to your account. I shall consign to you by the ship——captain——, thirty pieces of linen and twelve pieces of— cloth, according to your order. If you need any thing more, I hope you will favour me with your further orders.

Առջեւս է — ին գրածնիդ, հանդերձ փոխանակագրովդ յանուն — Պարոնայց եւ Ընկ. որ ի, — ընդունելի եղաւ, եւ գումարը անցուցի ձեր հաշուին: Ըստ հրամանի ձերում կղյուղարկեմ ձեզի, — նաւով, որոյ նաւապետն է, — երեսուն ձեռք կտաւ եւ տասուերկու ձեռք — չուխայ: Եթէ ուրիշ հրամաններ ալ ունիք տալու, կըյուսամ թէ ինծի կապրսպրէք վստահութեամբ

I am,
Sir,
Your, etc., etc.

Մնամ,
Պարոն,
Խոնարհ եւ այլն:

Fourth letter. From a country shopkeeper to a Paris merchant.

Թուղթ չորրորդ: Գաւառական վաճառականէ Փարիզու վաճառականի մը :

Sir,

Պարոն,

I beg you will be so kind as to acquaint me by return of post with the current prices of the articles. If I find they admit of a reasonable profit you will shortly receive a very considerable order for myself and correspondents. I am,

Կըխնդրեմ որ շընորհք ընէք իմացընէք ինծի առաջին թղթաբերով՝ հոս դրած վաճառքներուս այժմու գիները : Եթէ չափաւոր վաստակ մը տեսնեմ, քիչ ժամանակէն մեծամեծ յանձնարարութիւններ կընդունիք, թէ ինծի եւ թէ իմ թղթակցացս համար : Մնամ,

Sir, etc., etc.

Պարոն, եւ այլն :

Answer.

Պատասխան.

Sir,

Պարոն,

Agreeably to your request, I have marked on each article, the

Ըստ հրամանի ձերում իւրաքանչիւր վաճառքին առջեւր

price you wished to know; showing at the same time, the retail prices, that you may judge of the profits.

նշանեցի իրենց գիները որ իմանալ ուզեր էք. միանգամայն մասնական վաճառման գինն ալ նշանակեցի, որ կարենաք վաստակին վրայ դատաստան ընել:

As I some what apprehend an advance in the prices, I recommend the present time as the best for yourself and friends to make purchases. I am, etc.,

Որովհետեւ վախ ունիմ թէ այս վաճառքներուն գինը քիչ ատենէն բարձրանայ, կյորդորեմ զձեզ եւ ձեր բարեկամները որ հիմակուան ժամանակը ամենէն յարմար ճանչնաք ուզածնիդ գնելու: Մնամ եւ այլն:

Fifth letter. From one tradesman to another for money.

Թուղթ հինգերորդ: Մեկ վաճառականէն ուրիշ վաճառականի՝ ստակ ուզելու համար:

Sir,

Պարոն,

Having a bill to take up, and being at present short of cash, I take the

Փոխանակագիր մը ունենալով վճարելու, եւ առ ժամս ստակս

liberty of troubling you for the small balance of our account in my favour. Should it be inconvenient to let me have the whole. a part, at this critical juncture, will exceedingly oblige Sir, your obedient humble servant.

կարծ գալով, կըհամարձակիմ նեղութիւն տալու հրամանոցդ որ մեր հաշուին փոքրիկ կշիռը հաւասարէք՝ ինծի ընկած առնելիքս վճարելով: Երէ ձեր բանին ձեռք չտայ ամբողջ հատուցումը, մեծ շնորհք ըրած կըլլաք ինծի՝ այս դժուար պարագային մէջ՝ թէ որ անոր մէկ մասը միայն ինծի անցրնէք:

Ընդունեցէք, Պարոն, իմ մեծարանքս:

Answer.

Պատասխան.

Sir,

Պարոն,

Agreeably to your request, I have inclosed for the full balance which remains due, an order, payable at sight, on Mr.—— , of—— , who will pay you the

Ըստ խնդրոյ ձերում ի հաւասարութիւն կշռոյն՝ ինչ որ պարտք կը մնար յուղարկեցի պատուիրագրով մը որ ի տեսութեան վճարելի է, այս

amount, upon receiving your receipt for the same. I request that, for the future, you will give me proper notice when you wish a payment to be made.

Your, etc.

անուն — Պարոնին ի —, որ պիտի վճարէ ձեզի գումարը՝ մուրհակնիդ ընդունելովը: Կրխնդրեմ որ ուրիշ անգամ ի դէպ ժամանակի ծանուցանէք ինծի թէ երբ կըբաղձաք որ հատուցում մը ըլլայ ձեզի :

Խոնարհ եւ այլն

END.